Ե. ՎԻԳՈԴՍԿԱՅԱ

ԱԼԺԻՐԻ ԳԵՐԻՆ

ՊԵՏՀՐԱՏ

891.7!5
Վ-56

2011-05

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ե. ՎԻԳՈԴՍԿԱՅԱ

891.71
Վ-56

ԱԼԺԻՐԻ ԳԵՐԻՆ

„ԴՕՆ-ԿԻԽՈՏԻ" ՀԵՂԻՆԱԿ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐ ՍԵՐՎԱՆՏԵՍԻ ԵՐՏԱՍՈՎՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Նկարները Ալիսա Պորետի

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1938

12 SEP 2014
5164
658
31

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ

Դեռ երեկվանից Միքելը նկատեց մի տարօրինակ սայլակ: Սայլակն անցավ քաղաքի ծայրամասերի փողոցներով և կանգ չառավ իջևանի բակում, այլ տեղավորվեց մի բաց տեղում՝ յեկեղեցու հետևը: Սայլակը պատած էր կտավե վարագույրներով, ինչպես գնչուների սայլը, բայց սայլապանը գնչույի չէր նմանում և նստած տեղում էլ ապրանքների հակեր չէյին յերևում:

«Սրանք վոչ գնչուներ են, վոչ էլ վաճառական,— մտածեց Միքելը,— հապա ուրեմն ո՞վքեր են»:

Ամբողջ յերեկո նա պտտվում էր այդ բաց տեղում, և յերբ բոլորովին մթնեց ու տարօրինակ հյուրերի ճրագը վառվեց, Միքելն այլևս չհամբերեց ու ավելի մոտեցավ:

Անծանոթ մարդիկ ծածկի տակ մի մեծ տոպրակից հանում էյին գույնզգույն բաճկոններ և վոսկեզօծ գավազաններ, փորձում էյին դիմակներ և վոչխարի բրդի փնջերից կեղծ մորուքներ էյին կպցնում:

«Շրջիկ դերասաններ են» —գլխի ընկավ Միքելը:

Առավոտյան չերտավոր բաճկոն հագած դերասանը թմբուկով շրջեց փողոցները:

Տներից, արհեստանոցներից և յեկեղեցիներից ժողովուրդ հավաքվեց:

— Դերասաննե՛ր, շրջիկ դերասաննե՛ր, Լոպեդե Ռուեդան է յեկել:

Բոլորն շտապում էյին շուկայի ընդարձակ հրա-

պուրակը, որտեղ քառանկյունի կազմած նստարանների վրա արդեն բեմի տախտակամած եյին սարքում:

Ուղիղ կեսօրին դերասանները հետ քաշեցին պարանով ամրացրած հին վերմակը, հավաքեցին փողերը՝ յուրաքանչյուրից մի քառորդ պեզետ, և սկսվեց ներկայացումը:

— Բարի քրիստոնյանե՛ր,— առանց մորուքի և գրիմի բեմ դուրս յեկավ ինքը Լոպեն,— փառապանծ Ալ՛կալա քաղաքի բարի քրիստոնյանե՛ր: Յեթե դուք ցանկանում եք տեսնել իսկական բիսկայցի, կարիք չկա ջորի գնելու, պատարագ մատուցանելու և հեռու ճանապարհ գնալու: Ահա՛ ինքը, որ Բիսկայից հենց նոր ե յեկել:

Կարմիր վարտիքով և ահագին կոճակներ ունեցող դեղին լայն բաճկոնով հաստ բիսկայացին՝ փորը առնկած անցավ բեմի վրայով:

Բիսկայցուց հետո դուրս յեկավ Սեվիլյան խաբեբան:

Մի միամիտ մարդու հետևի գրպանից այդ խաբեբան նրա արծաթե շղթան գողանալով՝ յերկար սակարկելուց հետո հենց նույն մարդուն նույն շղթան ծախեց հիսուն ռեալի:

Նրանք հեռացան և բեմ գլորեցին մի տակառ: Տակառից դուրս յեկավ յերկար ու կարմիր լեզվով և սարքովի ճանկերով մի սատանա: Սատանան փորձում եր կրոնավորին, վերջը յերկուսն ել հաստ պարանով դըժոխք իջան: Բեմի տակը թիթեղին քարեր խփելով աղմուկ եյին բարձրացնում, իսկ վերևում ագռավը բարձըր կռկռում եր:

Ապա ծածկեցին վարագույրը: Կաստիլյան յերկարամորուս ծեր գեղջուկը, որը հագած եր ծաղկազարդ յերիզներով սպիտակ բաճկոն, դուրս յեկավ վարագույրի առաջը: Գյուղացու հետևից վազում եր նրա կինը— կանաչի լայն շրջազգեստ հագած մի դերասան:

— Հիմար ծերո՛ւկ,— հաստ ձայնով բղավում եր կինը,— մի՞թե կարելի յե այդքան եժան գին պահանջել ձիթապտղի համար:

— Համբերի՛ր, այ կնիկ, համբերի՛ր,— հետ քաշվելով ասում եր գյուղացին— թող վոր ձիթապտուղը մեկ չուկա տանեմ...

— Յերկու ռեալ,— բղավում եր կինը,— մի՞թե դա գին ե: Դու մեզ կսնանկացնես, Տորուվիո՛...

— Համբերի՛ր, ա՛յ կնիկ, թող վոր առաջ հավաքեմ ձիթապտուղները...

— Չորսո՛վ պետք ե ծախել, չորսո՛վ....

— Լռի՛ր, Ադե՛լա, թող առաջ տնկեմ ձիթենու տունկերը, ապա կխոսենք գնի մասին:

— Կեցցե՛ս,—աղմկեցին հանդիսականները,—կեցցե՛ս, կեցցե՛ս...

Բաճկոնով գյուղացին գլուխ տվեց ու պոկեց իր յերկար մորուքը: Բոլորը տեսան դերասանի թխադեմ, վոչ յերիտասարդ դեմքն ու մերկ ծնոտը:

— Ես հո Լոպե՛ն ե... Կեցցե՛ս Լոպե, կեցցես...

Ընկույզներ, ծաղիկներ և նարինջներ թռան դեպի դերասանը: Ամբոխը ծափահարում եր ու աղմկում:

Լոպե դե Ռուեդա՛: Այդ նա յե, Լոպեն, Սեվիլյան վոսկերիչը, վորը թողեց իր արհեստը, վորպեսզի կատակերգություններ ու միջախաղեր գրի և փողոցներում ու հրապարակներում ուրախացնի ժողովրդին:

Կեցցե՛ս, Լոպե, կեցցե՛ս:

Յերկու որ, քանի դեռ շարունակվում եյին այդ ներկայացումները, Միգելը շուկայի հրապարակից չեր հեռանում: Յերրորդ որը նա գնաց դերասանների իջեվանած տեղը:

Դերասանները պատրաստվում եյին ճանապարհ ընկնել: Յերկու ծաղրածուներ, Բենիտոն ու Պաբլոն, խմբի հասարակ զգեստները վոտներով կոխում եյին տոպրակների մեջ: Յերրորդը բարձրացել եր սայլակի ամենավերևը և ծալապատիկ նստած կրծում եր առանց այն ել մաքուր կերված վոչխարի վոտի վոսկորը:

— Կարելի՞ յե տեսնել դոն Լոպեյին,— հարցրեց Միգելը:

— Ինչի՞դ ե պետք:

— Ուզում եմ խնդրել, վոր նա ինձ ընդունի խմբի մեջ,— համարձակ ասաց Միգելը:

Բենիտոն ուշադիր նայեց Միգելին ու ժպտաց:

— Տե՛ր իմ, ինչ վոր մի յերիտասարդ իդալ՛գո*) մեր խումբն ե ուզում ընդունվել,— կանչեց Բենիտոն:

Լոպե դե Ռուեդան կռացած կանգնել եր խարույկի մոտ: Նա շուռ յեկավ և Միգելն առաջին անգամ տեսավ նրա դեմքը մոտիկից: Առանց գրիմի և կեղծ մորուքի դերասանն ավելի տարիքով ու լուրջ թվաց նրան: Մանր կնճիռներն աչքերից դեպի քունքերն եյին անցնում ու ծիծաղելի կերպով հավաքվում քթի վերին մասում:

— Դո՞ւ յես ուզում ընդունվել մեր խումբը— խիստ կերպով հարցրեց Լոպեն— իսկ ի՞նչ կարող ես անել դու:

— Ամեն ինչ, ինչ վոր պետք լինի:

— Լա՛վ, մի վորևե բան արտասանի՛ր:

Միգելը միջախաղերից շատ կտորներ անգիր գիտեր, սակայն հուզմունքից նա այժմ վոչինչ չկարողացավ հիշել և լուռ ու շփոթված նայում եր Լոպեյին:

— Մենք նրան մնջախաղերի համար կվերցնենք— ուրախացավ Բենիտոն:

— Իսկ ի՞նչ կարող ես կատարել, ձեռների վրա քայլել կարո՞ղ ես— ուրախ հարցրեց Պաբլոն և գետնի վրա անիվի պես պտտվեց:

— Յես կարող եմ վոտանավորներ գրել— բարկացած ասաց Միգելը:

— Վոտանավորնե՞ր— աշխուժացավ Լոպեն:— Ապա արտասանի՛ր, դա լավ ե:

Միգելն արտասանեց: Լոպեն մտածմունքի մեջ ընկավ:

— Յես յերբե՛ք այդպես հարթ կերպով չեմ կարողացել չափ ու հանգ կազմել—ասաց Լոպեն— դու՝ յերևում ե՝ սովորել ես և դա մեզ պետք ե: Այո, ինչ դու արտասանեցիր, հրաշալի կերպով կարելի յե բեմադրել

*) Իդալ՛գո—Մանր ազնվական:

վորպես հովիվների ու հովվուհիների մեջ տեղի ունեցող տեսարան:

Լոպե դե Ռուեդան լռեց: Քթի կնճիռներն անհետացան, ապա կրկին կիտվեցին:

— Կարելի չէ քեզ ընդունել,— վճռականորեն ասաց Լոպեն,— միայն մեր սայլում տեղ չկա: Անունդ ի՞նչ է:

— Միգել Սերվանտես, Ռոդրիգո Սերվանտեսի վորդին:

— Ահա թե ինչ, Միգել, գնանք, բայց թե ի՞նչով ես գալու մեզ հետ, ճարը ինքդ տես:

— Եշով,— ծվաց Պաբլոն:

— Յես ձի կգտնեմ,— ասաց Միգելը դառնալով Լոպեյին:

— Ոհո՜,— ուրախացավ Բենիտոն,— լսո՞ւմ ես Պաբլո՛: Այս հո իսկական ազնվական է, կաբալյերո*): Հագցնենք նրան իսկական զրահ: Սաղավարտ ու զենք:

— Թողե՛ք նրան հանգիստ,— ասաց Լոպեն,— իսկ դու, Միգել, հիշիր, յեթե ուզում ես մեզ հետ գալ, պետք է ամեն ինչին համակերպվես: Գիտցիր, վոր թափառաշրջիկ դերասանը հաճախ ստիպված է սառչել առանց թիկնոցի, քնել խոտի վրա, ճաշել ձիու ծածկոցի վրա: Գինին նրան տրվում է դրախմաներով**), հացը ունցիաներով***), իսկ քաղցը չետվերտներով****): Մենք վաղը, առավոտյան ժամը 6-ին, մեկնում ենք: Մեկ անգամ էլ մտածիր, և յեթե վորոշես, վաղը արևածագին մեզ փնտրիր քաղաքի հարավային դռների մոտ, Տոլեդոյի ճանապարհի յերկրորդ վոլորապտույտում: Իսկ հիմա՝ դու գնա զբաղվիր քո գործերով, իսկ մենք՝ մեր գործերով:

---

*) Կաբալյերո—Հեծյալ զինվոր, ասպետ:

**) Դեղատան փոքր կշռաչափ:

***) Ունցիան=29,86 գրամի:

****) Չետվերտ=209,9 լիտրի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՄԱԿ ՍԱԼԱՄԱՆԿԱՅԻՑ

— Ի՞նչպես հայտնել հորը,— Միգելը յերկար ժամանակ անքուն շուռ ու մուռ եր գալիս անկողնում:

— Խե՛ղճ հայր: Հարկադրված եմ հեռանալ, առանց վորևէ բան հայտնելու:

Միգելը վեր ցատկեց: Մի կերպ հագնվելով՝ կամացուկ գնաց ախոռ: Հայրական նիհար ձին, Պարդոն, կարծես հասկանալով ամեն ինչ, նայեց նրան իր թաց աչքերով:

Միգելն զգուշությամբ դուրս բերեց ձին, շարունակ ցնցվելով բակի քարահատակի վրա ձիու սմբակների հանած դոփյունից:

Այսպես առանց թամբելու նա տարավ Պարդոյին քնած փողոցներով մինչև Սանտա-Կրուս մատուռի ամայի նրբանցքը: Այստեղ նա շտապ թամբեց ձին, հեծավ և առանց դես ու դեն նայելու արշավեց դեպի Կապուցինների դարպասը և դուրս յեկավ Տոլեդոյի ճանապարհը:

Այդ առավոտ ծերունի Ռոդրիգո Սերվանտեսը յերկար ժամանակ դժվարությամբ հագնում եր իր խունացած վերնազգեստը, կարգի չեր բերում շատ լվացվելուց դեղնած փոթազարդ օձիքը: Ապա նա ճոռոմ լեզվով, խոշոր տառերով մի խնդրագիր գրեց վերատեսուչ հայր Ոնոֆրիոյի անունով:

Ժամը իննին, առանց հարցնելու Միգելի մասին, Ռոդրիգո Սերվանտեսը հագավ թիկնոցը և ծանր քայլերով դիմեց դեպի համալսարան:

Հնադարյան թմրած ու հին Ալ’կալա քաղաքում ամենքն էլ ճանաչում եյին բարձրահասակ, քիչ կորացած խեղճ իդալ’գոյի կերպարանքը: Ամեն օր, կեսօրին մոտ, խունացած, բայց խնամքով մաքրված թիկնոցը հագին, հնաձև լայն սև գլխարկով, համրիչով և գոտուց կախած սրով՝ դոն Ռոդրիգոն անցնում եր քաղաքի գլխավոր Կալյե-Մայոր փողոցով: Հանդիսա-

վոր և քաղաքավարի բարևելով ծանոթներին, յերբեմն էլ կանգ առնելով դանդաղորեն զրուցելու համար՝ դոն Ռոդրիգոն զբոսնում էր փողոցի ստվերոտ կողմում մինչև ժամը 2-ը:

Յեթե տանը ճաշ լինում էր, դոն Ռոդրիգոն ուղիղ յերկուսին տուն էր գնում ճաշելու: Յեթե ճաշ չէր լինում, դոն Ռոդրիգոն հենց այդպես դատարկ ստամոքսով գնում էր այցելելու իր սակավաթիվ հիվանդներին: Հիվանդի անկողնի մոտ առանց շտապելու նստելով՝ հանում էր քթախոտի տուփը և լսում հիվանդի գանգատները: Ապա նայում նրա լեզուն, շարժում գլուխը, բանկաներ դնում կամ արյուն վերցնում: Յեթե հիվանդությունը լուրջ էր լինում, դոն Ռոդրիգոն տալիս էր նրան Գրենադայի հրաշագործ ալմաստից մի կտոր: Յեթե հիվանդը անհուսալի յեր, նրա մոտ խոստովանահայր էր ուղարկում: —

Ռոդրիգո Սերվանտեսը հպարտ ու աղքատ էր ճիշտ այնպես, ինչպես Ալ'կալա քաղաքի մյուս չքավոր իդալ'գոները: Բայց դոն Ռոդրիգոն աշխատանքից չէր խուսափում: Նա մեծ ընտանիքի տեր էր:

Դոնյա Լեոնորան և Անդրեյա ու Լուիսա աղջիկները ամբողջ օրն աշխատում էին տանը և բանջարանոցում, լվանում, կարում, կաղամբ տնկում ու մաքրում մարգերը:

Բայց արև ժամանակ դուրս յելնելիս Դոնյա Լեոնորան յերեսը ծածկում էր շղարշով—իդալ'գոյի կնոջը վայել չէր այրված կաշի ունենալ, ինչպես հասարակ գեղջկուհին:

Յերբ դոն Ռոդրիգոյին հաջողվում էր իր հիվանդներից վորևէ մեկին բժշկել, նրա ընտանիքը մսով ճաշ էր ունենում: Բայց հաճախ նրանք ուտում էին միայն անմիս ապուր:

Այնուամենայնիվ յերեկոները Կալյե-Մայոր փողոցով զբոսնելիս դոն Ռոդրիգոն ատամնափորիչը բերնին, կարծես կուշտ ճաշից հետո, քչփորում էր ատամները և դանդաղ անցնում հրապարակով— իդալ'-

գոյին վայել չէր շտապելը— սիրալիր ու հանդիսավոր կերպով բարևելով ծանոթներին:

Այսոր առանձնապես լուրջ էր ծերունի իդալ'գոն:

Նրա ավագ վորդին՝ Ռոդրիգոն, գտնվում էր Ֆլանդրիայում և կռվում էր նորին մեծության զորքերի շարքերում: Կրտսերը, Միգելը, պետք է մնա իր մոտ, Ալ'կալայում: Միգելը սիրում է գիրք և բանաստեղծություն: Փոքր հասակից նա անհագորեն կարդում է փողոցից հավաքած ամեն մի տպագիր թղթի կտոր: Նրա առաջին ուսուցիչ Սենյոր Լոպես դե Ոյոսը շարունակ պնդում էր, վոր Միգելը գիտությունների մեջ արտակարգ ընդունակություններ ունի: Նա գիտնական կլինի, հռչակավոր աստվածաբան կամ բանաստեղծ:

Հին Ալ'կալայի համալսարանի ընդունարանը դատարկ էր: Սպիտակ քանդակազարդ պատերին կախված էին գերազանց սովորող ուսանողների նկարները— անմորուս դեմքերով, բոլորն իրար նման:

Կիսաբաց դռնից յերևում էր յերկար ու կիսախավար միջանցքի փայլուն հատակը: Այստեղ ևս լռություն էր տիրում, ինչպես ընդունարանում: Տոնի նախորյակ էր, համալսարանում պարապմունք չկար, և նրա ամբողջ յոթ հազար ուսանողները թրեվ էին գալիս փողոցներում:

Դռան հետևից լսվեցին մեղմ ու զգույշ քայլեր և ընդունարան մտավ տարիքավոր, լիքը, գեղեցիկ մի տղամարդ, մուգ-մանիշակագույն շքեղ կապայով:

— Արժանապատիվ հա՛յր,— առաջ անցավ դոն Ռոդրիգոն,— համարձակվում եմ ներկայանալ ձերդ վողորմածության՝ իմ վորդի Միգել Սերվանտեսի խնդրով:

Տեսուչը ներողամտաբար գլուխ տվավ:

— Փոքր հասակից իմ վորդին մեծ հակումն ունի դեպի գիտությունները, ուսումնասիրում է յեկեղեցական հայրերի ստեղծագործությունները և լատին բանաստեղծներին և ինքն էլ շարադրում է պոեմներ ու հովվերգություններ: Բայց իմ չքավորության պատ-

ճառով չեմ կարող վճարել ձեր արժանապատվությանը հանձնված բարեպաշտ համալսարանի ուսումնավարձը...

Տեսչի դեմքն ընդունեց քաղաքավարի ձանձրույթի արտահայտություն:

— Խնդրում եմ նկատի առնել մեր Սալամանկայի հին տոհմի սխրագործությունները, մեր նախնիքների ցույց տված անգնահատելի ծառայությունները հայրենիքին, անհավատներին քշելու ժամանակ, Գրենադայի պաշարման, Սևիլիայի և Լոխի...

Նա թուղթը յերկարացրեց տեսչին:

Հայր Ոնոֆրիոն նրան չեր լսում:

— Թո՞ւղթ,— ընդհատեց նա,— ո՞ւմնից է:

— Ցես ինքս, արժանապատիվ հայր— չփոթվեց դոն Ռոդրիգոն — ինքս շարադրեցի գլխավոր ծառայությունները և պատճառները...

Տեսուչն աչքի անցկացրեց առաջին տողերը և հետո հայացքը դարձրեց դոն Ռոդրիգոյի վրա: Դոն Ռոդրիգոն ամբողջապես կծկվեց: Նրան թվում եր, թե տեսուչը տեսնում է նրա թիկնոցի ամեն մի կարկատանը, վերնազգեստի մաշված թելերը, նրա դողդոջուն ձեռքում գտնվող գլխարկի դեղին բծերը:

— Թանկագին սենյո՛ր,— քաղաքավարի ասաց տեսուչը,— հայրենիքը և մեր սուրբ յեկեղեցին, հովանավորելով ամեն տեսակի գիտություններ, ուրախ կլինեյին, գնահատելով ձեր արժանավոր տոհմի ծառայությունները՝ ընդունել ձեր շառավիղին իր հովանավորության տակ: Սակայն, ավա՜ղ, համալսարանն աղքատ է,— տեսուչը թափ տվավ իր փափուկ նուրբ ձեռքերը:— Մեր անվանի համալսարանն աղքատ է: Նրա պատերը հնարավորություն չունեն տեղավորելու—իսպանական բոլոր զինվորների նույն իսկ անհավատների դեմ կռվող ամենաաչքի ընկնող սերունդներին: Փորձեցեք ձեր վորդուն տանել ուրիշ ուղիով, ձեր հպարտությանը վայել և ավելի համապատասխան ձեր յեկամուտներին:

— Հարստացած վաճառականների վորդիքը,—

կորացած կերպով ասաց դոն Ռոդրիգոն, ծալելով ճըմրլված թուղթը,— ընդունվում են համալսարան: Ցես յենթադրում եյի, վոր Սալամանկայի սերնդի համար...

Բայց հայր Ոնոֆրիոն արդեն գլուխ տվավ, հասկացնելով, վոր զրույցը վերջացած է: Իսկ ծառան դիմեց դեպի դուռը և բացեց դոն Ռոդրիգոյի առաջ: Ծըվարած իդալ՛գոն դուրս յեկավ մռայլ սրահից արևոտ, աչք շլացնող սպիտակ փողոցը, բայց իսկույն ուղղվեց և սովորական ծանր, իր արժանապատվության վայել քայլով դիմեց դեպի տուն:

Դեռևս հեռվից, փողոցի անկյունից, նա տեսավ իր տան առաջ անծանոթ մի ձիավոր:

Դոնյա Լեոնորան մի մեծ կնքված ծրար ձեռքին թափահարում եր պատուհանից:

— Նամա՛կ,— կանչում եր Դոնյա Լեոնորան,— հատուկ գրաբերի ձեռքով նամակ Սալամանկայից:

Դոն Ռոդրիգոն վերցրեց նամակը և տուն մտավ: Դոնյա Լեոնորան անհանգիստ հետևում եր նրա դեմքի արտահայտությանը:

— Լա՛վ լուրեր, անսպասելի լուրեր,— ուրախ ասաց դոն Ռոդրիգոն, վերջացնելով նամակը:—Միգելի 658 39 նախկին ուսուցիչ սենյոր Լոպես դե Ոյոսը պալատ է կանչված և Սալամանկայից փոխադրվում է Մադրիդ: Նա հիշել է մեր վորդուն և կանչում է նրան իր մոտ:

Դոն Ռոդրիգոն վերկացավ և սենյակում անցուդարձ արավ:

— Կամ ծով, կամ յեկեղեցի, կամ թագավորի պալատ,— հուզմունքով ասաց նա, կանգ առնելով իր կնոջ առաջ:—Այսպես մեր հին կաստիլյան առածի հիման վրա պետք է իր բախտն ընտրի ազնիվ ընտանիքի զավակը: Ծովը— դա ճանապարհորդություն է, վըտանգներ, ճակատամարտեր: Այդ ընտրել է Ռոդրիգոն: Ցեկեղեցին— ներկայումս ընդգրկում է ազդեցիկների և ունևորների զավակներին: Այս նամակով բախտն ինքն ուղարկում է մեր վորդուն յերրորդ ուղին հնարավորությունը: Ո՞ւր է Միգելը, կանչիր ինձ մոտ Միգելին:

— Նա առավոտից չի յերևում,— անհանգստությամբ ասաց մայրը։— Լուիսան և Անդրեան վաղուց գնացել են նրան փնտրելու։

— Միգելը ոչ մի տեղ չկա,— մի րոպե անց ներս վազեց մեծ աղջիկը Լուիսան։— Յես յեղա բոլոր փողոցներում, հրապարակներում, հարց ու փորձ արի նրա բոլոր ընկերներին։ Այսօր նրան ոչ ոք չի տեսել։

— Յեվ Պարդոն էլ չկա,— ներս թռավ կրտսեր, գանգրահեր և ժպտադեմ Անդրեան։— Պարդոն իր տեղում չի, յերևում է՝ Միգելը գիշերը ձիով հեռացել է քաղաքից, հայտնի չէ թե ուր....

— Սո՛ւրբ կույս, նա փախավ մեզանից,— ծածկեց յերեսը Դոնյա Լեոնորան։

— Տեր աստված, ի՞նչ է սա... ի՞նչ պատասխան տամ այժմ սենյոր դե Ոյոսին,— ասաց դոն Ռոդրիգոն և շվարած ընկավ աթոռին։

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ՌՈԼԱՆԴ

Ճարտասանության և հումանիտար գիտությունների պրոֆեսոր սենյոր Լոպես դե-Ոյոսը տանել չէր կարողանում ճանապարհորդությունը։ Սենյորի թանկագին ձեռագրերը, փոխանակ պահարանի դարակներում դասավորված լինելու, մի կերպ տեղավորված կառքի նստարանի տակ, ցնցվում էին։ Լատինական և հունական գրքերի կապոցները՝ գետն անցնելիս հեշտությամբ կարող էին թրջվել, իսկ նրա ծառան, գող Խոզեն, պատրաստ էր այծի մսի մի կտոր փթած պանրի հետ փոխանակել, հենց առաջին հանդիպած գյուղում, արծաթե ճարմանդով ավետարանի հազվագյուտ հրատարակությունը։ Արդեն յերկրորդ շաբաթն է, ինչ դոն-Լոպեսը, յերկար կանգ առնելով յուրաքանչյուր իջևանում, ճանապարհորդում է Սալամանկայից դեպի Մադրիդ։

Կաբրերոս գյուղում նա մնաց յերեք օր։ Հյուրա-

նոցի տերը հովվերգական բանաստեղծությունները նրբորեն հասկացող մեկը դուրս յեկավ և դոն-Լոպեսը յերեկոները նրա համար կարդում էր իտալական բանաստեղծների գրվածքները։ Միայն յերրորդ օրվա վերջին նա հիշեց, որ ժամանակն է ճանապարհվելու և հրամայեց Խոզեյին պատրաստվել։

Արևի մայր մտնելուց առաջ դարպասից ներս մըտավ ծածկված մի փոքրիկ սայլ, որին հետևում էր սևաթույր ձիու վրա նստած մի պատանի։ Տանտիրոջ կինը, աղջիկները, տան բոլոր աղախինները — անասնապահները, աման լվացողները, խոհարարները,— քամուց թռածի պես բոլորն էլ բակը վազեցին, տեսնելու յեկվորներին։

— Այս Լոպե դե Ռուեդան է իր արտիստներով,— բացատրեց տանտերը դոն Լոպեսին։— Նա գալիս միշտ ինձ մոտ է իջևանում։

Մինչև ուշ յերեկո դոն Լոպեսը լսում էր ներքևի ծիծաղն ու բացականչությունները։ Ընթրիքից հետո դերասանները, որպես շնորհակալություն հյուրասիրության համար, հենց բակում անմիջապես ներկայացում կազմակերպեցին։

Ծերուկը չհամբերելով նույնպես ցած իջավ։ Ներկայացումն արդեն վերջացել էր։ Մի պատանի դերասան, համարյա յերեխա, գլխարկը ձեռքին, անցնում էր շարքերով։

Դոն Լոպեսը արդեն ուզում էր հեռանալ, բայց հանկարծ կանգ առավ։

— Յերազում եմ, թե խելքս թռցրել եմ,— համարյա բարձրաձայն ասաց դոն Լոպեսը, նայելով տղային։

Ինչպես կարող էր Միգելը, իր նախկին աշակերտը, իր բարեկամ բժիշկ Սերվանտեսի որդին, գտնվել այստեղ թափառաշրջիկ կոմեդիանտների մեջ։

— Ինչպես յերևում է ճանապարհին ցնցումներից ուղեղս մթագնել է,— տագնապով մտածեց ծերուկը։

Նա գնաց իր սենյակը, բայց հազիվ էր դուռը փակել, յերբ նրա ծառան, Խոզեն, դուռը բախեց։

— Ձերդ վողորմածությունն Ալ՚կալայից նամակ ունի,— ասաց Խոզեն: Նամակը Սալամանկա յեր ուղարկված և հատուկ թղթատարը մեր հետևից այստեղ հասնելով՝ հանձնեց ինձ դռների մոտ:

Դոն Լոպեսը բաց արեց նամակը ու կարդալուց հետո սկսեց արագ-արագ հարդարել գլխի շուրջը գտնված ալեոր բարակ մազերը:

— Վա՞տ լուրեր են, սենյոր,— հարցրեց Խոզեն:

— Վո՛չ, լա՛վ,— անսպասելի պատասխանեց դոն Լոպեսը,— այնպիսի լուրեր, վոր նշանակում է, յես, ծերուկս, ինչպես յերևում է, խելքս բոլորովին չեմ թռցրել: Փանդիր կապած իրերս, Խոզե, մենք այսոր չենք ճանապարհվում:

Նա իջևանի տիրոջ հետ յերկար ժամանակ փսփսում եր ինչ-վոր բանի շուրջը, ապա ինչ-վոր կարգադրություններ արեց Խոզեյին: Կես ժամ անցած նա դարձյալ ցած իջավ: Բակն արդեն դատարկ եր: Ներկայացման համար փող հավաքող պատանին մենակ կանգնած եր դարպասի դռանը և դեպի փողոց եր նայում:

— Միգե՛լ,— կամաց ձայն տվեց նրա հետևից դոն Լոպեսը:

Պատանին արագ շուռ յեկավ և տարակուսանքո՛վ ծերուկին նայեց:

— Բայց և այնպես, յես քեզ ավելի շուտ ճանաչեցի, քան թե դու ինձ,— ծիծաղեց դոն Լոպեսը և մոտեցավ նրան:

— Այդ դո՞ւք եք, դոն Լոպես,— բացականչեց Միգելը և գրկեց ուսուցչին:— Ի՞նչպես է վոր դուք այստեղ եք:

— Հենց նույն հարցը յես ինքս եյի ուզում քեզ տալ, բարեկամս:

Միգելը կարմրեց:

— Գնանք, Միգե՛լ, յես պետք է քեզ հետ խոսեմ— լուրջ կերպով ասաց ծերուկը:

— Յես գիտեմ, թե ինչի մասին, և... հնարավոր

չե, դոն Լոպես,— շփոթվեց Միգելը:— Յես պետք է մերոնց մոտ գնամ, մենք լուսաբացին շարունակելու յենք ճանապարհը:

— Գնա՛նք, գնանք,— պնդեց ծերուկը՝ բռնելով պատանու արմունկից:

Նա լուռ տարավ պատանուն բակի միջով, տանտիրոջից վերցրեց մոմը և ներսի փայտյա սանդուխքներով առաջնորդեց նրան վերև՝ յերկրորդ հարկ, ապա ավելի վերև:

— Այդ ո՞ւր եք տանում ինձ,— վախեցավ Միգելը,— մի՞թե ձեզ կտուրի տակն են սենյակ հատկացրել:

Դոն Լոպեսն առանց պատասխանելու—պատանուն մտցրեց հենց կտուրի տակ գտնվող մի նեղ սենյակ, վորն ուներ միայն մի նեղլիկ, տախտակներով ծածկված պատուհան:

Միգելը զարմանքով նայեց բրդե վերմակներով ծածկված յերկու փայտյա քանդակազարդ լայն մահճակալներին ու քաշվելով նստեց նրանցից մեկի վրա:

— Ահա այդպես,—գլխով հավանության նշան արավ դոն Լոպեսը:— Իսկ հիմա մենք ահա թե ինչ կանենք:

Նա մոտեցավ դռանը, սողնակը քաշեց, ներսից կողպեց և բանալին պահեց ծոցում:

Միգելը վեր թռավ նստած տեղից:

— Դու հո չե՞ս սկսի հարձակվել ինձ՝ քո ծերուկ ուսուցչի վրա: Դոն Լոպեսը կանգնեց շեմքին ու մեջքը դեմ արավ դռանը:

Միգելը վազեց դեպի պատուհանը և ցնցեց շրջանակին ամրացրած տախտակները:

— Թողե՛ք ինձ,— հուսահատ բացականչեց Միգելը:

— Գոռա՛, ճչի՛ր, վորքան կուզես,— վոչինչ չի օգնի: Դռնից դուրս չես գա. այդ բանն անելու համար դու ստիպված պետք է լինես ինձ վրա ձեռք բարձրացնել: Իսկ պատուհանից քեզ վոչ վոք չի լսի... Վո՛չ վոք,—կրկնեց ծերուկը մոտենալով Միգելին—տանը



բոլորն էլ նախազգուշացված են: Քո դերասանները տեղավորված են հեռու մարագում: Բոլոր ծառաներն այս գիշեր պետք է խուլ ձևանան... Գոռա՛, որքան կուզես, քեզ ոչ ոք չի լսի:

Միգելը յերեսն ի վայր ընկավ մահճակալի վրա:

— Միգե՛լ, դու ջահել ես և հիմար, դրա համար էլ քեզ հետ այդպես պետք է վարվել: Նստիր մահճակալին, խոսենք: Ա՛յ այդպես:

Դոն Լոպեսը շունչ քաշեց ու նստեց նրա կողքին:

— Դու, Միգել, տասնինն տարեկան ես և կարծում ես, թե ամեն բան գիտես: Բայց դու ոչինչ չգիտես: Դու կարծում ես, թե շրջիկ դերասաններից շա՞տ ավելի բան կսովորես, քան թե գրքերից:

— Բա՛ց թողեք ինձ —խուլ ձայնով ասաց Միգելը:

— Լսի՛ր, Միգելիտո, ախր յես քո լավն եմ ուզում: Խոստովանիր անկեղծորեն, քեզ լա՞վ եյիր զգում դերասանների մոտ:

— Լա՛վ,— պատասխանեց Միգելը,— մենք քնում եյինք բաց դաշտում կամ գյուղացիների խոտի դեզերի վրա, խաղում եյինք իջևանների բակերում... Մեզ ամեն տեղ շատ լավ եյին ընդունում: Իսկ յերբ իջևանատերը ժլատ եր լինում ու վատ եր վարձատրում մեր ներկայացումները, Բենիտոն ցերեկը դիտում եր, թե վո՞րտեղ են կախված նրա ապխտած խոզի մսերը և գիշերը բերում եր մեզ համար ամբողջ բդեր...

—Սուրբ Մոնսերրատայի կույս, ողորմի՛ր մեզ,— գլուխը ձեռքերի մեջ առնելով բացականչեց դոն Լոպեսը — Յեթե քո հայրն իմանար...

— Բաց թողեք ինձ այստեղից, դոն Լոպես:

— Վաղը կթողնեմ, Միգելիտո:

—Վաղն ուշ կլինի: Առավոտը դերասանները կմեկնեն:

— Հրաշալի՛,— ուրախացավ ծերուկը,— դու կմեկնես ինձ հետ:

Դոն Լոպեսը մահճակալի տակից դուրս քաշեց ճամփորդական փայտյա արկղը, բացեց և միջից հանեց

դարչնագույն հաստ մի գիրք: Նա պատրաստեց իր վերջին միջոցը:

— Դու դեռ չե՞ս մոռացել իմ իտալական դասերը, Միգե՛լ: Լսի՛ր,— ասաց դոն Լոպեսը:

Տաղաչափական առանձին յեղանակով, ձեռքով չափ խփելով՝ դոն Լոպեսն արտասանեց առաջին տողերը:

Հերոսների՞ն քեզ հիշեցնեմ,
Դուրս բերեմ քո աչքի առաջ
Փառքով հարուստ տոհմե՞րը մեր,
Անմահության լուսով վառված:

Միգելը լսեց: Դա Ռոլանդն եր, մեծ Ռոլանդը, մոլեգին Ռոլանդը, աշխարհ թափառող ասպետը:

Կապույտ ջրերում մակույկն ե սահում,
Վարում ե նավորդն առագաստ, անհոգ:
Փայլեց Զելանդիան յերեք որ հետո,
Հոլանդիա հասավ մակույկն անվրդով:
Դուրս յելավ Ռոլանդն ափն անծանոթ...

Դոն Լոպեսը շարունակում եր կարդալ: Ռոլանդն ազատում ե հոլանդական կոմսին և փրկում Ոլիմպիա աղջկան: Նա մենամարտում ե սարակինոսի հետ և խուսափում Բրյունելի վորոգայթներից: Գեղեցկուհի Անժելիկան թափառում ե վայրի տեղերում:

Ո՞ւր ես իմ անգին, ո՞ւր ես շրջում,
Գիշերը վո՞րտեղ հանդիպեց քեզ.
Գուցե հեռու քո քաջ Ռոլանդից
Դարձար խեղճ ավար գայլին դու կեր...

Միգելը հափշտակված լսում եր: Նրանք յերկուսն ել չիմացան, թե ինչպես դերասանները լծեցին ձիերը, կանչեցին Միգելին, և բավական սպասելուց հետո՝ մեկնեցին բակից: Արդեն առավոտյան լույսը պատուհանի տախտակների արանքից ներս եր թափանցում, յերբ դոն Լոպեսը գիրքը մի կողմ դրեց:

— Իններորդ յերգ: Այսքանն արդյոք այսոր բավական չե՞, Միգել:

— Իսկ Ռոլա՞նդը, դոն Լոպես, ի՞նչ յեղավ Ռոլանդը:

— Ռոլա՞նդը:— Դոն Լոպեսը վերցրեց գիրքը:

Բոլորից ծածուկ, գիշերվա կույրն,
Պահեց Ալմոնտի սաղավարտը նա,
Հասավ դռներին, և զորավարին,
Վոր պահպանում եր քաղաքն այդ պահին,
Շշնջաց. «Կոմս եմ»: Նա վորպես ասպետ
Կարող եր ազատ շրջել ամեն տեղ:
Ահա բանակն ե գնում թշնամու.
Իսկ թե ի՞նչ յեղավ — իններորդ տաղում:

Դոն Լոպեսը փակեց գիրքը և դրավ արկղը:

— Ահա այդպես: Իսկ հիմա, Միգե՛լ, կարող ես գնալ քո դերասանների հետ:

— Յես ձեզ հետ կգնամ, դոն Լոպես,— ասաց Միգելը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Մ Ա Դ Ր Ի Դ Ո Ւ Մ

— Այստեղ հանգիստ չե,— խորհրդավոր կերպով հայտնեց Միգելին դոն Լոպեսը հենց յեկած որը,— Մենք յեկանք յեռուզեռի ժամանակ: Թագավորը վերջնականապես ընդհարվել ե Թագաժառանգի հետ: Բոլորն ել դեպքերի յեն սպասում:

Ծերուկը կնճռոտվեց ու բացասաբար շարժեց գլուխը:

— Անկարգությո՜ւն,— ասաց դոն Լոպեսը,— հենց պալատում անկարգություն ե տիրում:

Առաջին որերը պարապմունք չկար և Միգելն որերով թափառում եր փողոցներում:

Վաղուց չեր, ինչ արքունիքը փոխադրվել եր Մադրիդ և քաղաքը դարձել եր աղմկոտ: Փոշոտ, անսալահատակ փողոցներով ձգվում եյին սայլերի շարանները, արշավում ձիավորները և վեր-վեր ցատկոտելով վազում եյին եշերը: Ջորեպանները գետնին նստած իրենց վաստակածն եյին համրում: Գունավոր գլխակապերով, համաշխարհային վաճառու ու գող

անդալուզցիները ծածկերի տակ նստած խմում ու աղմկում էին: Անտաշ քարերից կառուցված ցածր տնակները կարծես թե զարմանքով նայում էին այդ ժխորին: Մադրիդի տները դեռ սովոր չէին աղմուկի:

Ֆիլիպ Թագավորն ուզում էր նշել իր թագավորությունը՝ նոր մայրաքաղաք ընտրելով: Նա կարող էր ընտրել Բարսելոնը, որն առևտրական քաղաք էր և կարևոր նավահանգիստ, կամ Տոլեդոն՝ Կաստիլիայի արդյունաբերական կենտրոնը, մահուդի գործարանների ու զինագործական արհեստանոցի քաղաքը և կամ վերջապես Ալ՛կալան, գիտնականների և հնագույն համալսարանի քաղաքը:

Թագավորն ընտրեց Մադրիդը, որպես թերակղզու աշխարհագրական կենտրոն. Մադրիդը, մերկ դաշտերի մեջ տխուր մի գյուղ, դաժան ու անմխիթար Կաստիլիայի ամենադաժան ու անմխիթար վայրը:

Բնակչության յերեք քառորդ մասը պալատականներ էին, թագավորական սպասավորներ և պատահական յեկվոր մարդիկ: Քաղաքն ապրում էր պալատով ու պալատական լուրերով: Յեվ այդ լուրերը պալատի մասին անբարենպաստ էին:

Ֆիլիպ Թագավորը հալածում էր հարազատ որդուն՝ Թագաժառանգ Կարլոսին: Ասում էին, որ նա պրինցը գաղտնի կողմնակից է Լութերին*): Իսկ «Լութերյան աղանդը՝ դավանելը Ֆիլիպը չէր ներում ոչ ոքի: Նա այդպիսիներին կախաղան էր բարձրացնում կամ խարույկի վրա այրում:

Ինկվիզիցիայի զնդաններով, խարույկներով, տանջանքներով Ֆիլիպն աշխատում էր պահպանել իր ամեն կողմից խախտված ինքնակալությունը:

Արքունիքում տեղի ունեցածների մասին ամեն մի հիշատակություն խստիվ արգելված էր:

Բայց, այնուամենայնիվ, արքունիքի մասին լուրերն ու զրույցները տնից տուն էին անցնում:

---

*) Լուբեր XVI դարի գերմանական կրոնական ռեֆորմատոր (բարենորոգիչ) է, որ դուրս յեկավ կաթոլիկ յեկեղեցու վարդապետության դեմ:

Թագավորն արքայազն Կարլոսին փակված է պահում և ոչ մի տեղ չի թողնում:

Նա լրտեսներ է ուղարկում նրա մոտ, բարեկամներին մոտ չի թողնում և հափշտակում է նամակները, որոնք Կարլոսը հուսահատության մեջ ուղարկում է տարբերկրյա արքունիքները:

Թագավորը գործադրում է բոլոր միջոցները հասցնելու նրան խելագարության և ինքնասպանության:

Այսպես կամացուկ խոսում էին քաղաքում:

Յերիտասարդ ազնվականները՝ կանաչուսև թավշե վերնազգեստներով և փետրավոր գլխարկներով թափառում էին փողոցներում: Նրանք յերկար կանգնում էին անկյուններում և միմյանց հանդիպելիս հանդիսավոր կերպով ողջունում: Նրանք յերդվում էին Հիսուսի սրտով և սուրբ կույսով և ամեն մի հարմար առիթից անմիջապես սրերն էին մերկացնում:

Միդելին ցույց տվին մի քանի հայտնի տոհմական ազնվականներ — Ալբա դուքսի ավագ որդի դոն Ֆադրիկե Ալվարեսին, Լուիս դե Բասանին, մարկիզ դե Իվարոյի քրոջ որդի Անտոնիո Սիգուրային:

Թագավորական պահակախմբի կապիտան վայելչակազմ ազնվական Անտոնիո դե – Սիգուրան վառ կարմիր համազգեստի թևերը հետ գցած՝ ացնում էր սուրը գետնից քարշ տալով և ոչ ոքի վրա չնայելով: Ինչպես պատահեց՝ մի անգամ Միդելը նեղ նրբանցքում դեմ առ դեմ յեկավ դե Սիգուրային:

— Ներեցեք, սենյոր — ու Միդելը հետ քաշվեց և թույլ տվեց Սիգուրային անցնել:

Դե Սիգուրան բանի տեղ չդնելով անցավ՝ առանց շնորհակալություն անգամ հայտնելու և նայեց համեստաբար հետ քաշվող Միդելին: Միդելը կապիտանի աչքերում արհամարհանք կարդաց:

Արդեն չորրորդ ամիսն էր, ինչ Միդելն ապրում էր Մադրիդում, բայց դեռ ոչ մի անգամ Թագավորին չէր տեսել:

Մի անգամ, առավոտյան վաղ, նա դուրս յեկավ փողոց և դեռ հեռվից նկատեց հրապարակում տարօրինակ մի շքախումբ: Նրան թվաց, թե այնտեղ միայն կրոնավորների խումբ եր՝ սպիտակ, սև ու դարչնագույն փարաջաններով: Յերբ ամբոխը մոտեցավ, Միգելը տեսավ մեջտեղում յերկու հեծյալ և նրանց հետևում մի փակ կառք:

Ձախ կողմի հեծյալին Միգելը լավ եր ճանաչում: Դա դոն Կարլոսն եր: Արքայազնը ապրում եր Ալկալայում և Միգելը պատանի հասակում շատ անգամ եր տեսել նրան: Խիստ նիհար, դեմքը կապտավուն ու հիվանդոտ գույնով՝ արքայազնը նստած եր թամբին անշնորհք ու կռացած և հուսահատ աչքերով մի կողմ եր նայում:

Արքայազնի կողքի մարդուն Միգելն առաջին անգամն եր տեսնում: Նա նստած եր թամբին ուղիղ. գլուխն առանց աջ ու ձախ թեքելու: Անզարդ կարճ ու սև թիկնոցը կախ եր ընկած նրա վեր ցցված ուսերից: Այլանդակ ու ձգված կապկային ծնոտը հենված եր սպիտակ կանգնած օձիքին: Աչքերը չեյին յերևում, թավշյա գլխարկը ծածկում եր նրանց: Միգելը տեսավ միայն նրա անդուրեկան գունատ ու մեռելային այտերը:

Շքախումբը գնում եր մայր յեկեղեցի, ներկա լինելու առավոտյան պատարագին: Մուտքի առաջ յերկու հեծյալներն իջան և կրոնավորները շրջապատեցին նրանց: Կարլոսն իր ուղեկցի հետ վիճում եր ինչ-վոր բանի մասին: Նա հետ քաշվեց, կարծես կամենում եր հեռանալ: Յերկրորդը նրան կտրուկ ինչ-վոր բան ասաց և ձեռքը դնելով ուսին՝ դարձավ դեպի արքայազնը: Այստեղ Միգելը տեսավ նրա բաց գորշագույն, տկարատես ու անտարբեր աչքերը:

Դա Թագավորն եր, այն Թագավորը, վորը դրանից մի քանի ժամանակ առաջ վերջին խարույկահանդեսին իր ճղճղան ձայնով Տոլեդոյի հրապարակով մեկ կանչեց.

— Առաջինը յե՛ս խարույկի մեջ կգցեմ իմ վորդուն, յեթե նա ուրանա հավատը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿԱԽԻՏԱ

Միգելը տուն եր վերադառնում: Պարտեզի քարաշեն ցանկապատի մոտ շրջան կազմած կանգնած եյին մի խումբ մարդիկ: Միգելը մոտեցավ և տեսավ մի տասնհինգ տարեկան գնչուհի: Աղջիկը կանգնել եր պատի տակ և անվստահ նայում եր չորս կողմը: Կրծքին թափված սև մազերի խառնված հյուսերի մեջ փայլում եյին արծաթյա դրամներ:

— Պարի՛ր, գնչուհի, քեզ փող կտամ,— ասաց նրանցից մեկը:

Աղջիկն անվստահ ժպտաց, ապա ձեռքերը կշտելով, վոտքը գետնին խփեց: Ձեռքերը թռչունի թևերի նման թափահարելով՝ գնչուհին սկսեց պտտվել տեղում: Պատառոտված գույնզգույն շրջազգեստը բշտիկի պես փքվեց:— Հե՛յ, հա… կեցցե՛ս, կեցցե՛ս: Ամբոխի միջից ծափ եյին տալիս:

— Մե՛կ էլ, մե՛կ էլ…

Աղջիկը հոգնեց: Նա սկսեց ավելի դանդաղ պտտվել, կանգ առավ, ապա գլխիկոր ձեռքը մեկնեց:

Բայց ամբոխն արդեն ցրվում եր: Գնչուհին կանգնել եր, ինչպես ձեռքը պարզած մի մուրացիկ:

Միգելը չհամբերեց: Նա հանեց իր ամբողջ դրամը:

— Դու լավ պարեցի՛ր,— ասաց Միգելը և արծաթե դրամները թափեց գնչուհու ափի մեջ:

Աղջիկը հաշվեց փողերը: Տասն բլանկ, կվարտա, յերկու կվարտա, ռեա՛լ…

— Շնորհակա՛լ եմ,— բացականչեց գնչուհին: Նա արդեն ծիծաղում եր:

— Խնդրեմ, սենյորիտա,— և Միգելը քաղաքավարի գլուխ տվեց աղջկան:

Գնչուհին համարձակ նայեց նրան։
— Յես ճանաչում եմ ձեզ,— ասաց նա, դո՛ւք դոն Միգելն եք։
— Ո՞րտեղից ես ճանաչում ինձ,— զարմացավ Միգելը։
— Յես հաճախ եմ լինում այս փողոցում։ Ա՛յ, դուք այստեղ եք ապրում,— և նա ցույց տվեց դոն Լոպեսի պարտեզի կողմը։
— Իսկ դու ո՞վ ես,— հարցրեց Միգելը։
— Իմ անունը Կախիտա յե,— պատասխանեց աղջիկը։
— Ո՞րտեղից ես դու։
— Գնչուների թաղից։
— Իսկ հեռո՞ւ յե ձեր թաղը։
— Քաղաքից վեց մղոն։
— Յեվ շա՞տ են ձերոնք,— հետաքրքրությամբ հարցրեց Միգելը։
— Շա՛տ։ Տասնինն ընտանիք։ Յես ու հայրս հաճախ լինում ենք քաղաքում... Նա հիմա էլ, յերևի, սպասում ե ինձ շուկայում։
Յեվ աղջիկը վազելով հեռացավ։ Միգելը նայում եր նրա հետևից։
— Արի մեզ մոտ,— կանչեց Կախիտան քիչ հեռանալով,— մեզ մոտ ուրախ ե։ Արի՛ տես, թե մենք ի՞նչպես ենք յերգում, պարում և խարույկներ վառում։
— Յես ճանապարհը չգիտեմ,— շփոթված կանչեց Միգելը։
— Յես կգամ ձեզ տանելու,— կանգ առավ Կախիտան,— անպատճառ կգամ, վաղը կամ մյուս որը։ Մնաք բարով։ Նա մատների ծայրերով բռնեց իր գունավոր պատառոտված շրջազգեստի փեշերը, հանդիսավոր կերպով գլուխ տվեց ու շրջելով փողոցի անկյունը՝ անհետացավ։
Դոն Լոպեսն այդ առավոտ յերկար ժամանակ փակվեց տանը — զբաղարանում իր ազդեցիկ բարե-

կամ սենյոր Սալասարի հետ։ Միգելը պարտեզ գնաց նրան սպասելու։ Սակայն Սալասարի հետ ունեցած խոսակցությունից հետո դոն Լոպեսը վրդովված դուրս յեկավ։ Նիհար ու փոքր հասակով այդ մարդը յերկար վազվզում եր ծաղկաթմբերի շուրջը, ապա նստեց Միգելի կողքին։
— Ի՜նչ ժամանակներ հասան,— գլուխն որորելով խոսեց դոն Լոպեսը և վշտացած չոր ու սպիտակ ձեռքերը դրեց ծնկներին։
— Ի՞նչ ե պատահել,— ուզում եր հարցնել Միգելը, բայց զսպեց իրեն։ Նա գիտեր, վոր յեթե չհարցնի, ուսուցիչը ավելի շատ բան կպատմի։
Բայց այս անգամ գործն, իսկապես, լուրջ եր ու գաղտնի, քանի վոր ծերուկը նստած տեղում միայն շուռ ու մուռ եր գալիս ու գլուխն որորում։
Այստեղից թագավորական պալատի սպիտակ շենքը յերևում եր անկյունով — գլխավոր ճակատի մի մասը և համարյա ամբողջ կողքը։
— Տեսնո՞ւմ ես Միգել,— դոն Լոպեսը բռնեց իր աշակերտի ձեռքը,— շենքի կողքի ճակատի վերին մասում, տանիքի տակ առանց վանդակի յերկու կլոր պատուհանները։
— Այո՛, տեսնում եմ։
— Դա թագաժառանգի առանձնասենյակն ե։
Յեվ այս անգամ դոն Լոպեսն այլևս վոչինչ չասաց։
Միգելը գնաց իր սենյակը։ Մառախլապատ որ եր։ Նա մինչև յերեկո նստեց տանը ու կարդում եր Սաննաձարոն*)։ Հետո հանեց իր կիսատ բանաստեղծությունների թերթիկները... Տահո գետի կանաչազարդ ափերի հովիվ Ելիսիոն սիրեց նույն ափերին ծնված հովվուհի գեղեցիկ Ֆիլենային։ Դա վերջերս սկսած «Ֆիլենա» անունով մեծ պոեմն եր։ Միգելը փորձեց գրել մի քանի տող։ Սաննաձարոյի շքեղ ու թեթև վանկերից հետո իսպանական վոտանավորը

*) Սաննաձարոն XVI դարի իտալական բանաստեղծ ե։

Նրան թվում էր անկապ ու կոպիտ: Վո՛չ, այսօր «Ֆիլենան» չէր գրվում:

Միգելը դարակից վերցրեց Ամադիս Գաղղիացին:

Ամադիս ասպետը լեռնային մի կիրճում հանդիպում է Սարակինոսին: Մենամարտն անխուսափելի յե: Ամադիսի դեմքը ծածկված է:

— Քո գոռոզ կերպարանքից հարյուր զինվորի մեջ անգամ կճանաչեյի յես քեզ,— ասում է նրան հանդուգն Սարակինոսը:

— Տե՛ս,— ասում է Ամադիսը,— յես բարձրացնում եմ յերեսակալս և դու այժմ կիմանաս, վոր իմ քաջությունը համապատասխանում է ունեցածս համբավին:

Նրանք խթանելով նժույգներին՝ հարձակվում են միմյանց վրա: Յերկուսն էլ հարվածում են միմյանց յերեսակալներին: Սարակինոսն աշխատում է Ամադիսին ցած քաշել թամբից, վորպեսզի խեղդի նրան, բայց ինքը չկարողանալով ազատվել ասպանդակներից՝ վայր է ընկնում: Սարակինոսի նժույգը սլանում է անտառներով ու դաշտերով: Սարսափից կուրացած նա քարշ է տալիս իր տիրոջը, վորն անկարող է այլևս վարել նրան: Նժույգն ավելի ու ավելի արագ էր սլանում, և հանկարծ իր հեծյալի հետ միասին գլորվում է մի լայն ու խոր անդունդ, սուր քարերի վրա ջարդելով վոտքերը...

Միգելը չնկատեց, թե ինչպես մութն ընկավ: Նա կարդում էր գեղեցկուհի Որիանայի մասին: Վհուկից խաբվելով Որիանան մերժում է Ամադիսին: Խեղճ Ամադի՛ս: Նա հեռանում է անապատ, խոտ է ուտում, և իր սիրած գեղեցկուհու կարոտը քաշում:

— Կոչվի՛ր Առյուծի Ասպետ, հավատարիմ Ամադիս, վերցրո՛ւ թուրդ ու կախարդված զրահներդ, նստի՛ր նժույգդ և գնա՛ քո սիրածին պաշտպանող դևերի գլուխները կտրելու...

Միգելը փակեց գիրքը: Ո՛, յեթե կարելի լիներ Ամադիսի պես ասպետ կոչվել... կախարդված թուր

ձեռք բերել և Առյուծի Ասպետի պես թափառել աշխարհից աշխարհ՝ վտանգների ու կռիվների մեջ: Հրեշի ճիրաններից ազատել Բրիոլանին և մենամարտել հանդուգն Սարակինոսի հետ:

Ուշ գիշերին նա կրկին դուրս յեկավ պարտեզ: Ամբողջ պալատը մութն էր: Միայն վերևի յերկու կլոր պատուհանները — թագաժառանգի առանձնասենյակը — լուսավորված եյին:

— Այնտեղ ինչ վոր բան է կատարվում,— մտածեց Միգելը:

Նա ինքն էլ չնկատեց, վոր բարձրաձայն արտասանեց այդ խոսքերը և անմիջապես, կարծես իբրև պատասխան դրան, նստարանի վրա մեկը շարժվեց ու հառաչեց:

Միգելը հետ նայեց: Դոն Լոպեսն ուղիղ իրեն էր նայում:

— Այս գիշեր...— սկսեց նա...

— Այս գիշեր ի՞նչ — անհամբեր հարցրեց Միգելը:

— Ի՞նչ: Մի՞թե այդ յես ասացի «այս գիշեր»... Այդ դու ասացիր — բարկացավ ծերուկը:

Բայց մի վայրկյան անց՝ նա վեր թռավ և մոտ վազեց Միգելին:

— Այս գիշեր թագաժառանգին ձերբակալում են,— վրդովված ասաց դոն Լոպեսը ցնցելով Միգելի արմունկը:— Նրան վաղուց պատրաստվում եյին բանտարկել... Արդեն կես տարի յե, նա սպասում է հարձակման: Ֆիլիպն արգելել է նրան զենք կրել: Կարլոսը գրադարանից ընտրում է ամենածանր գրքերը, դնում է գլխատակը և չի քնում, շարունակ նայում է դեպի դուռն ու սպասում, վորպեսզի մտնողին հարվածի և սպանի: Մի քանի ամիս է, ինչ արքայազնը համարյա չի քնում: Բժիշկները վախենում են, թե նա գիտակցությունը կկորցնի... Արքայազնի բարեկամ Ֆրանսիացի վարպետ Լուի դե Ֆուան անցյալ շաբաթ մի մեխանիզմ սարքեց, վորի շնորհիվ նրա առանձնա-

սենյակի դուռը բացվում ու փակվում էր, երբ արքայազնը սեղմում էր իր մահճակալի մոտ գտնվող զըսպանակը: Նա մինչև անգամ հանգստացավ ու սկսեց քնել... Բայց Ֆրանսիացուն մատնեցին: Ֆելիպը մահվան սպառնալիքով ստիպեց Ֆրանսիացուն՝ արքայազնից գաղտնի փչացնել մեխանիզմը, և այս գիշեր պալատում սպասում են...

Առանձնասենյակի կլոր պատուհանները լուսավորվեցին ավելի պայծառ և պարզ, հանկարծ, յերկուսն էլ միանգամից խավարեցին:

Դոն Լոպեսը խոսքը բերանում լռեց:

— Ի՞նչ են անում: Ձերբակալո՞ւմ են: Սպանո՞ւմ են,— չորացած շրթունքներով հարցրեց Միգելը:

— Չգիտե՛մ, չգիտե՛մ, չգիտեմ,— կարծես սթափվելով ձեռքերը թափահարեց դոն Լոպեսը:— Ես ոչինչ, ոչինչ չեմ ասել քեզ: Մոռացի՛ր, մոռացի՛ր, անմիջապես մոռացի՛ր...

— Այս մի բանը միայն ասացեք ինձ, թանկագին դոն Լոպե՛ս,— աղաչեց Միգելը բռնելով ուսուցչի ձեռքը,— ի՞նչ մեղադրանք են բարդում արքայազնի վրա:

— Թագավորի սրբազան անձի դեմ մահափորձ կատարելու,— շշուկով հառաչեց ծերուկը:

— Յեվ դուք կարծում եք, որ դա ճշմարի՞տ է:

— Ճշմարտությունը միայն աստծուն է հայտնի,— խուսափող պատասխան տվեց դոն Լոպեսը և ձեռքերը կրծքին ծալեց:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳԱՀԱԺԱՌԱՆԳԸ

Հենց նույն գիշերն արքայազնին ձերբակալեցին: Ժամը տասնմեկին ինքը՝ Թագավորը, իր յերկու մերձավորների և խոստովանահոր հետ միասին մտավ արքայազնի մոտ: Թագավորը, սաղավարտով էր ու զինված: Դուքս դե-Լերման գնում էր առջևից՝ վառած ճրագը ձեռքին:

Նրանք անարգել բաց արին դուռը:

Արքայազնը զգեստները հագին քնած էր:

Նրան արթնացրին: Կարլոսի բարձի տակ գտնվում էյին վաղուց թագցրած թուրն ու լցրած հրացանը: Արքայազնից վերցրին զենքը, թղթերը, նամակները, և հայտնեցին, որ նա ձերբակալված է:

Կարլոսը հուսահատ գետին ընկավ ու գրկեց իր հոր ծուռ վոտքերը:

— Սպանեցեք ինձ, ձերդ մեծություն, թե չէ՝ ինքս կսպանեմ ինձ,— բացականչեց նա:

— Դուք խելագար եք,— սառն պատասխանեց Ֆելիպը:

Կարլոսը նետվեց դեպի անկյունում վառվող բուխարին:

Թագավորի խոստովանահայր Անտոնիո դե-Տոլեդոն ժամանակին վրա հասավ և հետ քաշեց արքայազնին:

Արքայազնին տարան՝ հայտնի չէ թե ուր: Նույնիսկ ամենախրադեկ մարդիկ անգամ չգիտեյին, թե պալատի որ գաղտնարանում բանտարկեցին նրան:

Արտաքուստ ամեն ինչ գնում էր առաջվա պես: Ֆելիպը ներկա յեր լինում պատարագներին, քաշում էր համրիչը և ընդունում դեսպաններին:

Իսկ յերեք ամիս անցած՝ ամբողջ Մադրիդում շշնջում էյին արքայազնի հանկարծակի մահվան մասին:

Նա մեռավ «ներքին գործարանների բորբոքումից»: Այդպես էր հայտարարում պաշտոնական հաղորդագրությունը:

Գահաժառանգին շտապ և առանց հանդիսավորության թաղեցին:

Թագավորի հրամանով յերեք օր չարունակ վոչ վոքի թույլ չէյին տալիս Մադրիդից դուրս գալ:

Դոն Լոպեսն էլ այդ օրերը Միգելին նստեցրեց գրադարանում վոտանավորներ արտագրելու:

Երկու ամիս հետո մահացավ Եղիսաբեթ Վալուան, Ֆիլիպի յերիտասարդ կինը, արքայազնի նախկին հարսնացուն։

Ոտարերկրյա արքունիքներում աղմուկ բարձրացավ։ Ֆրանսիական թագուհի Կատարինե Մեդիչին Փարիզում կազմակերպեց արքայազնի հեռակա հանդիսավոր թաղում և Ֆիլիպին ուղարկեց հիստերիկ հարցապնդումներ։ Հռոմի Պիոս V պապը, նրանից հետ չմնալով, արքայազնի հոգու համար շքեղ պատարագներ մատուցեց և դեսպաններ ուղարկեց հետաքննելու։

Յեվ պապի դեսպաններից մեկի, պրելատ*) Ակվավիվայի անսպասելի գալուստը վորոշեց նաև Միգել Սերվանտեսի հետագա վիճակը։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄԵՆԱՄԱՐՏԸ

«Այստեղ հանգչում է փառքն իսպանական ժողովրդի,
«Այստեղ ծածկված է ծաղիկը Ֆրանսիական յերկրի»։

Տպանագիրը լավ եր։ Միգելն արտագրում եր վոտանավորներն արդեն չորրորդ վարիանտով։

«Նորին մեծություն իսպանական թագուհի, մեր պայծառափայլ տիրուհի, Դոնյա Իզաբելա դե-Վալուայի կարճատև հիվանդության և լավագույն աշխարհը բախտավոր կերպով փոխադրման պատմությունն ու ճշմարիտ նկարագրությունը»... Դոն Լոպեսը ժողովածու յեր պատրաստում նոր մահացած թագուհու հիշատակին։ Դոն Լոպեսի բոլոր աշակերտները մասնակցում եյին ժողովածուին։

Այստեղ փոքրիկ հողաթմբի տակ ամփոփված
է մեր ուրախությունը։
Այստեղ աստղը մայրամուտի դադարեց
փայլելուց։

*) Բարձրաստիճան կաթոլիկ հոգեվորական։

Այս յերրորդ որն եր, վոր Միգելն այդ տպանագրի պատճառով հնարավորություն չուներ քաղաքից դուրս գալու... գնչուների թաբորը գնալու։ Նա արդեն մի քանի անգամ յեղել եր այնտեղ, Կախիտայի մոտ։ Կախիտայի հայրը, Մատոն, քարացած ու թուխ դեմքով և ալեխառն մազերով բարձրահասակ գնչու յեր։ Նա սկզբում դժկամությամբ ընդունեց Միգելին։

— Ձեր անունն ի՞նչ է, յերիտասարդ սենյոր,— հարցրեց Մատոն։

— Միգել Սերվանտես դե Սաավեդրա։

— Ազնվակա՞ն։

— Յես հայտնի տոհմից եմ,— պատասխանեց Միգելը։

Մատոն նայեց Միգելի հին, թևնոցները կրկնակի վերանորոգված զգեստին.

— Ինչո՞ւ դուք այդպես նիհար եք, յերիտասարդ սենյոր,— հարցրեց Մատոն։

— Յես աղքատ եմ,— պատասխանեց Միգելը։

— Ի՞նչ օգուտ ձեր անվանի տոհմից լինելը, յերբ դուք աղքատ եք,— ժպտաց գնչուն։

Միգելը պատասխանելու բան չգտավ։

Նա սկսեց հաճախակի գնալ թաբորը։ Գնչուական խայտաբղետ և ազատ կյանքը շլացրեց նրան։ Միգելը սիրեց նստել խարույկի մոտ սայլերից կազմված շրջանի մեջ, նա ծանոթացավ Կախիտայի բոլոր ընկերուհիների ու յեղբայրների հետ և բարեկամացավ նրա ամենակրտսեր յեղբոր՝ կիսամերկ, միշտ քաղցած և ուրախ Ջիքիտիլյոյի հետ։ Մատոն ավելի մոտ ճանաչելով Միգելին՝ սկսեց ավելի շատ զրուցել նրա հետ։

— Ի՞նչ օգուտ ձեր անվանի տոհմից լինելը, դոն Միգել, յեթե դուք աղքատ եք և անազատ,— ասում եր Մատոն,— նայեցեք մեզ, աշխարհումս գնչուներից ավելի ուրախ մարդ չկա։ Գնչուն վոչ վոքից չի վախենում, վոչ աստծուց, վոչ սատանայից և վոչ էլ սենյորից։ Այդ ձեր վախկոտ գյուղացիներն են, վոր դողում են սենյորի առաջ։ Մենք վրաններ ենք խփում,

ուր ուզում ենք և ցանկացած ժամանակն ել չվում ենք:

— Մենք շուտով կգնանք այստեղից,— ասաց Կախիտան Միգելին,— դուք, դո՛ն Միգել, սիրում եք ազատություն, յեկեք մեզ հետ:

— Յես չեմ կարող, Կախիտա,— ասաց Միգելը,— յես դեռ մեկ տարի ել պետք ե ապրեմ այստեղ՝ Մադրիդում: Յես խոսք եմ տվել:

— Ո՞ւմ:

— Իմ ուսուցչին:

Կախիտան գլուխը թափահարեց:

— Այդ ի՞նչպես կարելի յե,— ասաց Կախիտան,— Գնչուները յերբեք խոսք չեն տալիս: Գնչուն յերբեք չգիտե, թե մի տարուց հետո նրան ինչ կպատահի:

Նա իրավացի յեր: Միգելն ափսոսում եր, վոր ուսուցչին հետևել ե: Նա խեղդվում եր այս թագավորական ծառաների և կրոնավորների քաղաքում:

«Մեր յերկրի լավագույն ծաղիկը յերկինք
ամբարձավ,
Ջար ճակատագիրը կոտրեց նրա քնքուշ
ցողունը»:

Դա յոթերորդ վարիանտն եր: Միգելը գրիչը ցած դրեց: Արդյոք յերիտասարդ թագուհին իսկապե՞ս նման եր ծաղկի: Միգելը յերբեք չեր տեսել նրան: Ասում են՝ Յեղիսաբեթը գեղեցիկ չեր, շատ վախկոտ եր ու միշտ գունատ: Նա յերբեք չկարողացավ ընտելանալ իսպանական անվանը՝ Իզաբելլային: Ասում են, վոր նա սաստիկ վախենում եր իր ամուսին Ֆիլիպ թագավորից:

«Հավիտենական փառքի թագավորության
այն կողմում,
Մեր թագուհին վայելում ե բախտ և
խաղաղություն»:

— Վո՛չ, բավական ե այսքանը:

Միգելը վեր ցատկեց: Գնչուները կգնան առանց նրան: Դեռ յերեկ նա տեսավ քաղաքից դուրս կրակի դժգույն ցոլքը: Նա գնաց ձին թամբելու:

Միգելն ուշ ճանապարհվեց: Արեն արդեն մայր եր մտնում: Մադրիդի շրջակայքի դաշտերն ու մուգ-դարչնագույն բլուրները վերջալույսի տակ դեղնակարմիր գույն եյին ստացել:

Յերբ նա թեքվեց գնչուների թաբորը տանող ճանապարհը՝ ծանր մուգ-կարմրագույն արևը ծածկվեց հեռավոր բլրի հետևը: Յերկինքը կապարագույն դարձավ: Փոթորիկ եր սպասվում:

Դիմացը հարթ բլրի բարձունքին, մթին յերկնքի ֆոնի վրա յերևում եյին յերկու ծուռ քարանման կաղնիներ: Նրանց շուրջը քարե սյուների և ախոռների ավերակների մնացորդներ կային: Այստեղ յերբեմն յեղել ե վենտա — գյուղական իջևան:

Բլրի բարձունքից բացվեց դիմացը փռված դաշտավայրը, ձախ կողմում գնչուների թաբորի կրակները և հարևան բարձունքի վրա՝ մարկիզ դե Իվարրի ամրոցի մթին զանգվածը: Ամրոցի հետևը, յերկընքում, դեռ փայլփլում եյին դժգույն բոցի ցոլքերը: Այնտեղ անկարգություններ կային: Մարկիզ դե Իվարրի գյուղացիներն ապստամբել եյին ու հրդեհել նրա ցորենի շտեմարանները:

Հեռվից Միգելը թաբորում նկատեց անսպասելի իրարանցում:

Գնչուներն շտապ հավաքում եյին իրենց իրերը, արձակում ձիերի վոտնակապերը և դես ու դեն եյին ընկնում:

Միգելը կապեց իր Պարդոյին, մոտեցավ ու սառած մնաց:

Հեծյալ ու հետևակ զինվորները դուրս եյին քշում գնչուներին իրենց վրաններից: Նրանք ծեծում եյին մտրակներով ու հրացանի կոթերով և բոլորին հավաքում եյին մի տեղ, ուր արդեն անկարգ

թափված էր գնչուների կայքը: Ինչ-որ մի կին դիմադրում էր և նրան մազերից բռնած քարշ էին տալիս:

Ծայրի վրանից նրա մոտ վազեց Կախիտան:

— Մեզ այստեղից վռնդում են,— բացականչեց նա,— մարկիզ դե Իվարրան այստեղ է ուղարկել կապիտան դե Սիգուրային զինվորների մի ջոկատով... Ինքը Սիգուրան մեր վրանումն է: Շուտ գնանք, թե չէ նա կջարդի հորս:

Նա քարշ տվեց Միգելին:

Սաղավարտով ու կապիտանի լանջազրահ կապած Անտոնիո դե Սիգուրան կանգնած էր Մառոյի դեմը: Գնչուի դեմքն արդեն այլանդակվել էր հարվածի մեծ ու կապույտ հետքից:

— Դու գլխավոր հրահրողն ես,— գոռում էր Սիգուրան,— այդ դո՛ւ դրդեցիր գյուղացիներին, վոր այրեն սենյորի շտեմարանները...

Վոլորած մտրակը շառաչեց օդում և իջավ գնչուի դեմքին: Կախիտան նետվեց նրանց միջև և գրկեց հորը, իր վրա ընդունելու հարվածը:

— Հորդ փո՛խարեն դո՞ւ ես ուզում ստանալ:— Ստացի՛ր — գոռաց կապիտանը:

Նա մտրակն իջեցրեց Կախիտայի բաց ուսի վրա և կարմիր հետք թողեց:

— Չհամարձակվե՛ք խփել նրան, կապիտա՛ն,— բացականչեց Միգելը:

Կապիտանը շուռ յեկավ:

— Չհամարձակվե՛ք խփել այս աղջկան,— կրկնեց Միգելն ու ավելի մոտեցավ:

— Ո՞վ ես դու և ինչո՞ւ համար ես պաշտպանում այս կատաղած աղջկան,— զարմացավ կապիտանը:

— Յես Միգել Սերվանտեսն եմ: Յեվ խնդրում եմ ձեզ, սենյոր, ձեռք չտալ այս մարդկանց:

— Կորի՛ր այստեղից,— ասաց Սիգուրան:

— Անմիջապես դադարեցրեք ձեր բռնությունը,

կապիտա՛ն,— բացականչեց Միգելը,— դուք ապօրինի և ստոր եք վարվում:

— Լակո՛տ, դու յեկել ես այստեղ ինձ հանդուգն խոսքե՞ր ասելու,— տաքացավ Սիգուրան,— մենամարտել գիտե՞ս:

— Գիտեմ,— բացականչեց Միգելը, մերկացրեց թուրը և թիկնոցը փաթաթեց ձախ թևին:

Նրանք հենց այդտեղ էլ սկսեցին կատաղի մենամարտը:

Կախիտան ու Մառոն քարացան: Սիգուրան և՛ ավելի ուժեղ էր, և՛ բարձրահասակ, և՛ ավելի լավ էր տիրապետում թրին: Միգելը տանը յեղած ժամանակ էր յեղբայր Ռոդրիգոյից սուսերամարտության մի քանի դաս հազիվ էր վերցրել:

— Յես քեզ կսովորեցնեմ, լակո՛տ, թե ի՞նչ է նշանակում վիրավորել թագավորական կապիտաններին,— առաջինը հարձակվեց Սիգուրան անըմբռնելի արագ շարժումներով ճոճելով թուրը:

Հարվածն ուսին դիպավ, ծակեց զգեստը և քերծեց մաշկը: Միգելն ատամները սեղմելով՝ հարձակման անցավ: Սիգուրան դարձյալ հարձակվեց թուրը չեչտակի ուղղելով նրա կրծքին: Միգելը խուսափեց հարվածից, դեպի առաջ աննկատելի մի քայլ արեց, նշան բռնեց և մարմնի ամբողջ ծանրությունը փոխադրեց աջ ձեռքով հասցրած հարվածի վրա:

Սիգուրան չփոթված հառաչեց, բռնելով ձախ կողքը. նա սկսեց դանդաղ նստել վրանի հողե հատակին:

Աղմուկն անհանգստացրեց ջոկատի զինվորներին:

Հարևան վրանից արդեն մեկը վազում էր, ուժգին սուլոցով կանչում մյուսներին:

Միգելը դեպի ծառը նետվեց, շոշափելով գտավ ծառից կապած ձիու սանձը, թրով կտրեց, ցատկեց թամբի վրա, մեկ ձեռքով սեղմեց կտրած սանձի ծայրերը, մյուսով գրկեց ձիու պարանոցը:

— Փրկի՛ր ինձ, Պարդո՛: Շո՛ւտ, փախցրու այստեղից:

Ամբողջ օրը կիտվող փոթորիկը վերջապես պայթեց: Կայծակները ծայրից ծայր ճեղքում էին յերկինքը: Ուժեղ քամին խոնարհում էր քարանման կաղնիների սև ճղները:

— Փրկի՛ր ինձ, Պարդո՛, հին բարեկամ,— կրկնում էր Միգելը մտրակելով ձիուն:

Ձին սլանում էր քամու ու կայծակի հետ մրցելով: Հետևից արդեն լսվում էին հետապնդողների դոփյունն ու աղաղակները: Բլրի վրա գտնվող ծառերն ու իջևանի ավերակներն ուրվականների պես իր հանդեպ էին գալիս: Բլրի գագաթին Միգելը ցած ցատկեց ձիուց, տարավ տախտակապատ ծածկոցի տակ, մի կիսավեր գավիթի խավար ստվերի մեջ և անշարժ կանգնեց:

Ձին հևում էր: Նրա շնչառությունը, թվում էր, թե մի ամբողջ մղոնի վրա լսվում էր:

— Կամաց, Պարդո՛, կամաց, մի՛ մատնիր ինձ, սիրելի ծերուկ բարեկամս,— շշնջում էր Միգելը՝ շոյելով ձիու կողքերը և դողալով փարվում էր ձիու քրտնած վզին:

Հետապնդողներն իրար ձայն տալով արդեն առաջ էին անցել:

Նորից ցատկելով թամբին՝ Միգելը բլրի մյուս կողմից իջավ ցած և ապա շարունակեց սլանալ արդեն առանց ճանապարհ ընտրելու, կտրելով անձրևից հեղեղված կավոտ դաշտերը:

Հետապնդողները մնացին հեռվում դեպի ձախ: Հանկարծ նրա ճանապարհը կտրեց մի խոր ձորակ: Միգելը խթանեց ձիու կողքերը:

Հնազանդ ձին լարվելով կտրվեց գետնից ու թռավ մյուս ափը: Բայց մթան մեջ նրա առաջին վոտներն ու կուրծքը դիպան հսկայական ժայռի ցցվածքին և ձին սկսեց դանդաղորեն սահել ձորակի հատակը:

Դոն Լոպեսը վաղ էր վեր կենում, ծառաներից էլ առաջ: Նա սիրում էր ջրել իր ծաղիկները, ծխախոտն

ու մեխակը, յերբ ծագող արևը դեռ չէր վոսկեզոծել նրանց:

Բայց այդ առավոտ մեկը գտնվեց, վորը դոն Լոպեսին դեռ անկողնում գտավ:

Արշալույսին Միգելը կաղալով անցավ ծաղկաթմբերի մոտով, մոտեցավ դոն Լոպեսի ննջարանի պատուհանին և սրի կոթով թեթև թխկացրեց լուսամուտի շրջանակը: Դարչնագույն մետաքսե վարագույրները շարժվեցին և նրանց հետևից յերևաց ուսուցչի կլոր գլուխը:

— Միգե՞լ: Այդ վո՞րտեղից այս ժամին և այդպիսի կերպարանքով:

Միգելի ոձիքը պատառոտված էր ու ճմլված, վերնազգեստի ուսը ճղված, ձորակում վիրավորված աջ վոտքի գուլպան չորացած արյունից խամրած էր:

— Այս գիշեր յես կռվել եմ...— խռպոտ ասաց Միգելը:

Դոն Լոպեսը կարկամած հետ քաշվեց պատուհանից:

— Այս գիշեր յես սպանեցի կապիտան դե Սիգուրային,— արդեն հաստատ ձայնով խոսեց Միգելը և ուղղակի նայեց իր ուսուցչի աչքերին:

— Դե Սիգուրայի՞ն, թագավորական գվարդիայի կապիտանի՞ն: Մարկիզ դե Իվարրայի քրոջ վորդո՞ւն,— սկսեց ձեռքերը կոտրատել դոն Լոպեսը: Մոնսերրատայի կո՛ւյս, վողորմիր մեզ:

— Յեվ դու դեռ կանգնած ես այստե՞ղ,— մի վայրկյանից սթափվեց նա,— դու կանգնած ես այստեղ և ժամանա՞կ ես կորցնում, յերբ քեզ, թերևս, արդեն փնտրում են, յերբ քաղաքում քո հետևից են ընկել արդեն, թերևս, թագավորական ալգվասիլները*): Փախի՛ր, շուտ, փախի՛ր, Միգել: Ո՞ւր է քո ձին:

— Նա իր առջևի վոտները կոտրեց և ընկած է այնտեղ՝ ձորակում:

Միգելը անորոշաբար թափ տվեց ձեռքը:

*) Ալգվասիլ—վոստիկան:

— Այդ ի՞նչ արիր դու, Միգել,— գլուխն օրորեց դոն Լոպեսը։— Հանգուցյալ թագուհու հիշատակին քո տապանագիրն իմ ժողովածուի մեջ ամենալավագույնն էր, հատկապես չորրորդ վարիանտը... Այժմ ամեն ինչ կորա՜վ... Ա՜խ, վորքան ցավալի յե, Միգելիտո...

Միգելը լուռ էր։

— Դե՛, չո՛ւտ, փախի՛ր, Միգել,— շտապեց ծերուկը,— ահա իմ հին թիկնոցը, փաթաթվիր նրա մեջ։ Շո՛ւտ, արդեն ուշ է, տես՝ արևը ծագում է։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՅԵԼՔ

— Ձերդ մեծության ցանկալի չէր արագացնել իմ վերադարձը Հռոմ նորին սրբության գահին։

Մանիշակագույն փարաջայով բարձրահասակ գեղեցիկ իտալացին հարգանքով խոնարհվեց Ֆիլիպ թագավորի առաջ նրա առանձնասենյակում, ունկնդրության ժամին։

Ֆիլիպի կարմրած ու անվստահ աչքերը դժգոհ դիտում էին հոգևորականի համար չափազանց նուրբ և անուշահոտ յուղերով օծված պապական դեսպանի գլուխը։

— Հուսով եմ, ձերդ մեծությունը չի մերժի նորին սրբությանը գրած նամակի մեջ,— ավելի խոնարհվելով շարունակեց պրելատը,— ընդգծել իմ ջանքերը, վորով յես, Հռոմի գահի համեստ ծառա, աշխատեցի կատարել իմ պարտքը — նորին սրբության և նրա ամբողջ արքունիքի անունից ցավակցություն արտահայտելու ձերդ մեծության և իսպանական գահի կրած ծանր կորուստի համար։

— Այո՛, այո՛,— անլսելի ձայնով կմկմաց թագավորը,— ատելությամբ նայելով իտալացուն։

— Ի՞նչ հասկացավ արդյոք,— մտածում էր Ֆիլիպը,— ի՞նչ է պատմելու պապին։

Ֆիլիպին զայրացնում էր Կարլոսի մահվան առթիվ յեվրոպական արքունիքներում բարձրացած աղմուկը։ Հռոմի պապն ուղարկում է իր դիտախույզներին նույն իսկ այստեղ, արքունիք։

Ֆիլիպը ջղայնորեն ուղղեց իր թրի գոտեկապը։ Նրա գունատ դեմքը սև հասարակ վերնազգեստի ֆոնի վրա համարյա կապտավուն էր յերևում։ Յեթե հնարավոր լիներ, նա կվռնդեր այդ օձ իտալացուն։ Բայց չի կարելի գժտվել սրբազան ծերուկի՝ Հռոմի պապի հետ։ Նրանից, թերևս, հաջողվի փող ստանալ։ Յերկրի առաջիկա յերկու տարվա յեկամուտները գրավ են դրված ավստրիական Ֆուգգեր բանկային տանը։ Տասնմեկ միլիոն դուկատ*) է հարկավոր վճարելու բանկիրներին։

Նիդերլանդիան, հարուստ Նիդերլանդիան ապստամբել է և չի ուզում հարկ վճարել։ Հարկահավաքների փոխարեն ստիպված է յեղել այնտեղ ուղարկել Ալ՚բա դքսին՝ վարձկան ահագին զորքով։ Դուքսն էլ, բավական ժամանակ է, հաղթության մասին վոչ մի լուր չի ուղարկում, իսկ զորքի պահպանության համար շարունակ խնդրում է վոսկի և վոսկի։ Յեվ այդ բոլորի պատճառով Գվադարրամայի լեռներում կառուցվող իր Եսկորիալ պալատի շինությունը ձգձգվում է աստված գիտե թե վորքան ժամանակով։

Ֆիլիպը կնճռոտվելով շարժեց մաղե բարձի վրա դրած իր հիվանդ վոտը։ Այսօր նրա ծունկն անտանելի կերպով ցավում էր։ Չօգնեցին վոչ բժշկի տված օծանելիքները, վոչ սիրած աղոթքները և վոչ էլ նույնիսկ սուրբ Հերոնիմոսի սպեղանին։

— Բարբարոսական յերկիր,— մտածում էր մինչ այդ Ագվավիվան, դիտելով ունկնդրության առանձնասենյակը։

Առանց զարդարանքների սպիտակ պատեր, հասարակ սեղան, վրան թափթփված թղթեր։ Ավագ խոր-

*) Դուկատ—վոսկի դրամ։

Հըրդական և Թագավորի սիրելի դե Գոմեսի դարչնագույն թիկնոցն ու քարացած դեմքը — նույնպիսի խիստ որնամենտ է, ինչպես սև խաչելությունը հարթ պատի վրա:

Այստեղ՝ Իսպանիայում Ագվավիվան տեսավ քանդակազարդ կահ – կարասիներ ու շտոֆային պաստառներ միայն այն ազնվականների տներում, վորոնք յեղել են Իտալիայի կուլտուրական քաղաքներում՝ Հռոմում կամ Նեապոլում: Իսկ մնացած տներում՝ սառնություն, մկներ, մերկ քարեր և նվաճող նախահայրերի պատկերներ...— Վայրենիներ,—վշտացած մտածում էր Ագվավիվան:— Զինվորների ցեղ: Լավ է, վոր յես մեկնում եմ:

Թագավորը միայն այժմ նկատեց, վոր իտալացին դեռ կանգնած է իր առաջ և սպասում է՝ ոծած գլուխը հարգանքով խոնարհած:

— Նորին սրբության ուղարկվելիք նամակն արդեն գրված է,— համարյա կոպիտ ասաց Ֆիլիպը,— Դուքս դե Լերման ներքին սրահում կհանձնի ձեզ: Կարող եք գնալ, հայր իմ: Համենայն դեպս, հայտնեցեք Նորին սրբությանը, վոր վոչ մի ընտանեկան կորուստ չի խանգարի ինձ իմ ամբողջ ուժերը տրամադրելու մեր սուրբ յեկեղեցու ծառայությանն ու պաշտպանությանը:

———

Միգելը հասավ քաղաքի դռներին ու կանգ առավ: Պարսպից այն կողմը, ճանապարհի վրա, կանգնած էր ալգվասիլների հեծյալ մի ջոկատ: Դե Իվարրի կալվածքում գյուղացիների ապստամբությունը դեռ շարունակվում էր և ալգվասիլներին հրամայված էր վոչ վոքի քաղաք չթողնել: Բայց նրանք կարող եյին բռնել նաև քաղաքից դուրս յեկող մարդկանց:

Մինչ Միգելը կանգնել և մտածում էր, թե ի՞նչ անի, ալգվասիլներից մեկը ձին քշելով բաժանվեց մյուսներից: Միգելը սրտատրոփ շուռ յեկավ և դանդաղորեն շարժվեց փողոցով: Միգելին պետք յեղավ գերմարդկային ջանք գործ դնել, վորպեսզի չարագացնի իր քայլերը: Բայց ալգվասիլն անտարբեր անցավ նրա մոտով:

Մադրիդում հավանորեն դեռ վոչինչ չգիտեյին գիշերային դեպքի մասին:

Չիմանալով, թե ի՞նչ վորոշի՝ Միգելը մինչև կեսոր թափառում էր քաղաքում: Որվա ամենաշոգ ժամին նա նստեց Մանսանարես գետի ափին, փոքրիկ կամուրջի բարձր կամարի տակ: Աղքատները կամուրջի տակ ձուկ եյին վորսում և հենց ափին էլ կրակի վրա խորովում: Նրանց տեսնելով՝ Միգելը հիշեց, վոր արդեն համարյա ամբողջ մի որ վոչինչ չի կերել:

Նա վեր կացավ, վոր շարունակի ճանապարհը: Կամուրջի ծայրին կանգնած էր մի քրջոտ յերիտասարդ: Պատառոտված թիկնոցի մեջ փաթաթված և գլխարկը աչքերին քաշած՝ նա հպարտ մեկնում էր ձեռքը և վողորմություն էր խնդրում:

Միգելը կանգ առավ ու նայեց նրան:

— Այստեղ կանգնել չի կարելի,— խոսեց քրջոտը,— այս իմ տեղն է: Յեթե դու էլ ես ուզում վողորմություն խնդրել, կանգնիր կամուրջի մյուս ծայրին:

— Յես վողորմություն չեմ խնդրելու,— շփոթված պատասխանեց Միգելը,— յես հենց այնպես, կանգնել և նայում եմ:

— Բա ինչո՞ւ քաղցածի տեսք ունես,— խստորեն հարցրեց քրջոտը:

— Վորովհետև...— կմկմաց Միգելը,— վորովհետև յերեկվանից յես վոչինչ չեմ կերել:

— Յերեկվանի՞ց: Ոհո՜: Հանաք բան չի: Սպասիր, իմ տոպրակումս չաղանակներով համեմած կարկանդակի կտոր է մնացել, պորտուգալացի մի պառավ մայր տաճարը գնալիս տվեց ինձ, վերցրու կեսը, միասին ուտենք:

— Հիմա մուրացիկ լինելն ամենաձեռնտու գործն է,— շարունակեց քրջոտը:

Նա չորացած կարկանդակը կիսեց և առանց շտապելու կծեց իր կեսը:

— Յես, բարեկա՛մ, ամբողջ յերկիրը վոտքի տակ եմ տվել: Յեղել եմ բոլոր քաղաքներում և ավելի լավ արհեստ չեմ ճարել: Ձե՞ս հավատում: Ա՛յ, կեր ու լսիր, թե ի՞նչ կպատմեմ յես քեզ:

— Մանուկ հասակից յես աշխատել եմ զինագործական արհեստանոցում: Ամբողջ որն արևածագից մինչև մայրամուտ յես կանգնած եյի լինում հնոցի մոտ: Կրակի տաքությունից աչքերս կուրանում եյին: Իսկ յեթե շատ աշխատանք եր լինում արհեստանոցում — վորևե հարուստ սենյոր կամենում եր դաշույնը կամ թուրը շուտ ստանալ — տերս հարկադրում եր գիշերվա մի մասն էլ աշխատել: Յես հեռացա նրանից և դարձա մի կույր ծերուկի ուղեկցող: Այդ ծերուկը յեկեղեցու դռներին քթի միջին աղոթքներ եր ասում և շատ փող հավաքում: Այդ բոլորը լավ եր, սակայն իմ կույրը սատանի պես ժլատ եր և ինձ քաղցած եր պահում: Յես նրա մոտից էլ փախա ու ծառայության մտա մի տերտերի մոտ: Հավատացյալները շարունակ կարկանդակներ ու հացեր եյին բերում տերտերին: Նա այդ բոլորը պահում եր փայտյա մեծ պահարանում, իսկ ինձ տալիս եր որական յերկու կտոր չոր հաց: «Հո քաղցից մեռնելու չեմ»— մտածեցի յես ու պահարանի համար մի բանալի սարքեցի և ամբողջ ամիս ապրեցի կուշտ և ուրախ: Սակայն տերտերս շուտ հասկացավ իմ արարքը և վռնդեց ինձ: Էլ ի՞նչ անել: Յես Սարագոսում մի իդալ'գոյի մոտ մանկլավիկ դարձա: Բայց դա ամենավատը դուրս յեկավ: Իմ իդալ'գոն շատ բարի մարդ եր և ինձ չեր ծանրաբեռնում աշխատանքով: Բայց ինքը վոչինչ չուներ: Ամբողջ օրը փողոցներն եր չափչփում, պարծենում եր իր ծագումով ու նախնիքների արժանիքներով և տուն վերադառնալով, առանց ընթրելու պառկում եր քնելու: Պարզ է, յես աշխատում եյի, վորքան հնարավոր եր: Մեկ վողորմություն եյի խնդրում,

մեկ էլ շուկայում բաց բերան վաճառուհուց ուտելիք թռցնում և այդպես ապրում: Հարկադրված եյի ինձ էլ, նրան էլ կերակրել: Միայն թե իմ իդալ'գոյին իր պարտքերի համար շատ շուտով բանտ նստեցրին և յես դարձա մուրացիկ և այժմ այս իմ արհեստն աշխարհում վոչ մի բանի հետ չեմ փոխի:

— Անունդ ի՞նչ է,— ժպտալով հարցրեց Միգելը: Նրան դուր յեկավ ուրախ աղքատը:

— Լասարիլյո,—արժանապատվությամբ պատասխանեց քրջոտը,—Լասարիլյո, Տորմես քաղաքից: Այստեղ ինձ բոլորն են ճանաչում և յես էլ ամենքին: Ահա՛ վերադառնում է յեկեղեցուց ինձ կարկանդակ տվող պորտուգալացի պառավը: Ահա՛ այս թաղի վաճառական Թոմաս Մերկադոն, վոր նույնպես լավ վողորմություն է տալիս: Ահա՛ և հայր Որտունիոն, Սանտա-Խեսուս յեկեղեցու ավագ-յերեցը: Ավելի լավ է դրանից վողորմություն չխնդրես: Ուղտն ավելի հեշտ կանցնի ասեղի ծակից, քան թե աղքատը այդ տերտերից մի բլանկա*) կստանա: Ահա... իսկ սա ո՞վ է: Սպասիր, դա հո իտալացի դեսպան Ակվավիվայի ծառա՞ն է: Սա ի՞նչ է փնտրում այստեղ:

Վոսկեկար համազգեստով զուգված մի հաստ մարդ անցնում եր կամուրջով և շվարած չորս կողմը նայում:

— Բարի օր, սենյոր Մակարոնի,— քաղաքավարի գլխեց նրան Լասարիլյոն, բարձրացնելով գլխարկը:— Ի՞նչպես է ձեր պայծառափայլ տերը և ի՞նչ եք փնտրում դու՞ք մեր թաղում:

— Ա՜խ, աստված իմ,— իսկույն սկսեց գանգատվել ծառան,— այսոր մեկնում ենք, իսկ իմ մոնսինյորի մանկլավիկը հիվանդացել է և չի կարող ճանապարհ գնալ: Իմ տերն ուղարկել է ինձ իսկույն մինչև ժամը 2-ը, գտնելու նոր մանկլավիկ, վոր համ յերիտասարդ լինի, համ էլ լավ տոհմից և համաձայնվի անմիջապես մեկնել մեզ հետ: Ախր, եսպես շուտ վորտե՞ղից

*) Բլանկա — մանր փող:

գոնում յես մանկլավիկ, այն էլ ինձ համար օտար քաղաքում, այն էլ յերիտասարդ և...

— Յես ինքս յերիտասարդ եմ և լավ ընտանիքից,— պարկեշտորեն պատասխանեց Լասարիլյոն,— սակայն յես վաղուց փոխել եմ իմ արհեստը: Յես վաղուց ձեռք եմ քաշել հոգևորականներին ծառայելուց: Բայց յես ձեզ կօգնեմ, սենյոր Պանտալոնե: Իմ յերիտասարդ բարեկամս կարծեմ ազատ է և պատրաստ է մեկնելու, ուր վոր կամենաք:

Միգելի սիրտը տրոփեց:

— Յես կարող եմ մեկնել ձեր տիրոջ հետ հենց հիմա էլ,— ասաց նա:

— Դե՛, շուտ գնանք,— ուրախացավ ծառան: — Ռոճիկ վորքան ուզում ես խնդրիր, մոնսինյորը կհամաձայնի:

Նա տարավ Միգելին իր հետ: Լասարիլյոն նայեց նրանց հետևից:

— Քաղցից կկորչի տղան,— գլուխն օրորեց Լասարիլյոն:— Գուցե թե իտալական տերտերները մերոնցից ավելի լավ լինեն, բայց յես կարծում եմ՝ վոչ այնքան:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՓԱԽՈՒՍՏԸ

«Հիանալի յերկիր,— մտածում եր Միգելը վայրեջքի ժամանակ սանձահարելով ձիուն,— հիանալի և անսպասելի: Մեկ օրից հետո յես արդեն Մադրիդից քառասուն մղոն հեռու կլինեմ, իսկ մեկ շաբաթից՝ Թագավորության սահմաններից դուրս: Հետո, յեթե կես տարի անց նույն իսկ վորևե բան բացվի, Հռոմի պապական դեսպանի շքախմբում ինձ ձեռք չեն տա»:

Միգելն ակամա ժպտալով հիշեց դոն Լոպեսի սարսափը, վորին նա պատահմամբ հանդիպեց քաղաքից դուրս յելնելիս: Ծերուկը փակ կառքով իր բարեկամներին այցելության եր դուրս յեկել: Խեղճ ուսուց-

չապետի աչքերը լայնորեն բացվեցին, յերբ նա տեսավ իտալական հեծելախմբի հետ մեկնելիս պաժի համազգեստ հագած Միգելին: Միգելը հնարավորություն ունեցավ մոտենալու նրան և բացատրելու, վոր ինքը Ակվավիվայի հետ Իտալիա յե մեկնում և խնդրեց այդ մասին հայտնել Ալ՛կալա՝ իր ծնողներին:

Ակվավիվան շատ շուտ մտերմացավ իր նոր պաժի հետ և ամբողջ ճանապարհին զրուցում եր նրա հետ: Պրելատը շատ գոհ եր իրենից և այն բանից, թե ինչպես կատարեց պապի հանձնարարությունը:

— Յես ինձ հետ տեղեկություններ եմ տանում հենց առաջին աղբյուրից,— պարծենում եր Ակվավիվան:

Յեվ իրոք, պրելատը գիտեր Թագաժառանգի վողբերգական մահվան բոլոր մանրամասնությունները:

Այն ժամանակ, գիշերային ձերբակալությունից հետո՝ Կարլոսին փոխադրեցին պալատի հյուսիս արևելյան աշտարակը, մի խուլ քարե տուփ, մեկ նեղ լուսամուտով:

Կարլոսին տանջում եյին ամենօրյա հարցաքննություններով և շարունակ խոստովանեցնում: Որական յերկու անգամ ստիպում եյին նրան հրաժարվել իր համոզմունքներից, անիծել Լութերին և յերդվել՝ հավատարիմ լինել հոր—թագավորին: Կարլոսն ուզում եր ինքնասպանություն գործել, բայց թույնը նրանից վերցրել եյին: Այն ժամանակ նա հրաժարվեց սնունդից: Յոթանասուն ժամ նա չկերավ, նիհարեց, որ ու գիշեր նա տենդից դողում եր և չեր քնում: Ի վերջո չդիմացավ քաղցածության և սկսեց ուտել: Արքայազնը գլուխը խփում եր քարե պատերին, բայց լուրջ վերքեր չկարողացավ հասցնել իրեն: Հուսահատությունից նա կուլ տվեց մեծ ադամանդով մատանին— պատահմամբ մոտը թողնված միակ թանկագին իրը: Մատանին նրան չվնասեց: Այն ժամանակ Կարլոսը մի փորձ ևս արեց: Բժիշկը նրան ասել եր, վոր քաղցածությունից հետո շատակերությունը կարող է մը-

նասել կյանքին: Կարլոսը նորից յերկու օր վոչինչ չըկերավ, ապա միանգամից շատ ուտելիք խնդրեց, տապակած տաք միս և տաքացրած գինի: Ուտելուց և տաքանալուց հետո նա խմեց մի քանի բաժակ ձյունախառն ջուր և պառկեց աշտարակի սառն ջրով ծածկըված քարե հատակին: Հենց նույն գիշեր արքայազնը հիվանդացավ ջերմախտով ու վորովայնամաշկի բորբոքումով և յերկու օրից ամեն ինչ վերջացած եր: Ֆիլիպն ազատվեց իր անհնազանդ վորդուց:

— Մենք, իտալացիներս, այդքան դաժան չենք,— ծիծաղում եր Ակվավիվան,— մեզ մոտ այլ բարքեր են տիրում: Հռոմում, յեթե մի մարդ անցանկանալի յե դառնում, բյուրեղյա գեղեցիկ բաժակով վարդագույն խմիչք են մատուցում նրան, իսկ լուսաբացին ջղաձգությունից նա մահանում ե:

Նրանք գնում եյին լեռնանցքով: Ակվավիվայի չքախումբն ու իրերի կառքը շատ առաջ եյին անցել: Պրելատն ասպանդակեց ձիուն, վոր նրանց հասնի: Արդեն մթնել եր, լեռների մռայլ ստվերն ընկել եր ճանապարհի վրա: Միգելը ցնցվեց:

Այս տեղերում լեռները վտանգավոր եյին: Յուրաքանչյուր ցցված ժայռի ու քարի հետևը կարող եյին ավազակներ դարան մտած լինել:

Հանկարծ հետևից լսվեց ձիու սմբակների դոփյուն: Ակվավիվան անմիջապես հանեց ատրճանակը, Միգելը ձեռքը տարավ թրին:

Հեծյալը յերևաց ճամբի վոլորապտույտի վրա, բայց նա հարձակման մասին չեր ել մտածում: Նա բարձրացրեց ձեռքն ի նշան խաղաղ մտադրության և ինչ-վոր բան եր կանչում ու գլխով անում Միգելին:

— Խոզե՛,— բացականչեց Միգելը,— ի՞նչպես ընկար դու այստեղ:

— Ժամը յերեքից անընդհատ քշել եմ ձիս, հազիվ հասա ձեզ, դո՛ն Միգել,— ասաց Խոզեն, մոտեցավ նրանց և սկսեց իր թևնոցում ինչ վոր բան փնտռել:



Միգելի շփոթությունը տեսնելով՝ Ակվավիվան մի կողմ քաշվեց։

— Շտապ և գաղտնի նամակ ունի ձերդ վողորմածությունը, դոն Միգել, իմ տիրոջից,— շշնջաց Խոզեն և թևնոցից հանեց կնքված մի ծրար։— Դոն Լոպեսն այսպես ասաց ինձ.— Խոզե՛, անընդհատ քշիր ու քշիր ձիդ, մինչև վոր դոն Միգելին հասնես։ Յեվ հենց հասար՝ հանձնիր ծրարը և առանց պատասխան խնդրելու շուտ տուր ձիդ և հետ արի։ Գյուղերումն էլ վոչ մի տեղ կանգ չառնես և վոչ վոքի հարց ու փորձ չանես և վոչ վոքի հետ չխոսես,— ասաց դոն Լոպեսը...

Արդեն բոլորովին մթնել էր։ Միգելն առանց ծրարը բանալու պահեց ծոցում։

— Շնորհակալություն, Խոզե՛,— հանդիստ ասաց Միգելը և ձիուն խթանեց, վոր հասնի Ակվավիվային։

— Գնաք բարով, ձերդ վողորմածություն, բարի ճանապարհ։

Հեծելախումբը կանգ առավ գիշերելու մի լեռնային փոքրիկ գյուղում։ «Ձիերի համար խոտ ու ջուր, մարդկանց համար՝ անկողին ու ընթրիք», կարդաց Միգելը դարպասին կպցրած պարզ ցուցանակը։ Այսպիսի պատվավոր հյուրերի ներկայությունից վախեցած՝ տանտերն սկսեց ընտրել տան ամենալավ անկողինները։ Ծառան դուրս յեկավ բակը՝ ձիերն արձակելու և ջրելու։ Նա ջրհորի մոտ ամրացրեց ճյուղե մի ջահ։

Այդ ջահի ծխացող ու յերերուն լույսի տակ Միգելը պոկեց ծրարի կնիքը և կարդաց նամակը.

— Սիգուրան սպանված չէ, այլ ծանր վիրավորված։ Նա գիտակցության յեկավ և տվեց քո անունը։ Դե-Իվարրան պնդում է անպայման վորոնել քեզ։ Շտապիր, վորքան կարելի յե շուտ հեռանալ Իսպանիայի սահմաններից։

«Շուտ, շուտ, շուտ»— հնչում էր հիմա Միգելի գիտակցության մեջ գիշեր ու ցերեկ։ Ամեն մի դոփյուն՝ հետապնդում էր թվում, ամեն մի հայացք՝ կասկած։ Շո՛ւտ, շո՛ւտ...

Ակվավիվան նույնպես շտապում էր։ Մի շաբաթից հետո նրանք ծովափնյա Վալենսիայումն էին, վորտեղից նավով պետք է մեկնեյին դեպի Իտալիայի ափերը։

Ծովափնյա Վալենսիա քաղաքում տաճարներ և վանքեր քիչ կային, բայց դրանց փոխարեն գինետներն ու նավաստիների պանդոկները շատ էին։ Փողոցներում փչում էր ծովային աղի քամի և բուրում ձյութի ու վոստրեյի հոտ։ Յերեկոյան նրանք մեկնեցին։ Միգելին հատկացրին պրելատի շքեղ ու հարուստ սենյակի կողքին գտնվող փոքրիկ մի նկուղ։ Վառվեցին նավի հետևի կողմի լապտերները և նավն ուղղություն բռնեց դեպի արևելք։ Արդեն բոլորովին խավարի մեջ պառկած Միգելը լսում էր, թե ինչպես ալիքները զարկվում էին նավի կողքերին, ինչպես ճռճռում ու ամբողջությամբ ցնցվում էր հին, վաղուց չճյութած նավը։

«Կամ յեկեղեցի, կամ ծով, կամ թագավորի պալատ»— քուն մտնելով հիշեց նա իր հոր սիրած դարձվածքը։ Ծո՛վ, ծո՛վ, ահա վերջապես ծո՛վ...

Հենց այդ ժամին Մադրիդում տեղի յեր ունենում թագավորական դատարանի նիստը։ Վոճրագործին չեյին բռնել, դատեցին նրան նրա բացակայությամբ։ Գործը լուրջ էր։ Վիրավորանք և ծանր վերք էր հասցրված թագավորական թիկնապահների կապիտան Անտոնիո դե Սիգուրային։

Թագավորական դատարանի քարտուղարը քնատ ու խուպոտ ձայնով կարդում էր դատավճիռը.

«...Իսկ մեղադրյալ Միգել Սերվանտեսին բռնելու համար գործադրել բոլոր միջոցները, և հրապարակորեն անարգանքի յենթարկելով՝ կտրել նրա աջ ձեռքը և վռնդել թագավորության սահմաններից դուրս տասը տարի ժամանակով...»

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

ՊՐԵԼԱՏԻ ՄՈՏ

Հռոմում ամեն ինչ բոլորովին այլ կերպ գնաց: Սկզբում Ակվավիվան բոլորովին մոռացավ նոր պաժին, ապա հիշեց և ծանրաբեռնեց նրան ձանձրալի ու ստորացուցիչ պարտականություններով:

Վերջացան ճանապարհորդական մտերիմ խոսակցությունները գրականության ու բարքերի մասին: Միքելը պարտավոր էր առավոտները պրելատին տալ նարինջի ջրախառն հյութ, սրբիչ ու լվացվելու լագան, հետևել նրա հանդերձարանի սարք ու կարգին և զեկուցել այցելուների մասին: Վերջինս նրա համար ամենադժվարն էր:

Ակվավիվան, որ աշխարհական ժամանակ Ատրիական դուքսն էր եղել, գլխապտույտ առաջադիմության մեջ էր: Քսանչորս տարեկան հասակում նա արդեն պապական կարդինալ դառնալու հավակնություն ուներ: Նրա հարուստ տան ընդունելության դահլիճներում գիշեր և ցերեկ խռնված էին շողշողուն քահանաներ, հանդիսավոր վարդապետներ և ազդեցիկ աշխարհականներ: Միքելն այդ բոլորի մասին պետք է զեկուցեր, նրանց ճանապարհ դներ, հանձնարարություններ կատարեր, ներողություն խնդրեր ու ստեր: Նա անասելի կերպով տանջվում էր:

Բայց ո՞ւր գնար: Հայրենիք վերադառնալն անհնարին էր:

Ազատ ժամերին Միքելը թափառում էր հինավուրց քաղաքի փողոցներում:

Հրապարակներում դրված բրոնզե առյուծների բաց երախներից անընդհատ խփում էին արծաթափայլ ջրի շիթերը: Հսկայական կամուրջները նայում էին Տիբեր գետի դեղին ջրերին: Հռոմը Միքելին հիացնում էր իր հոյակապ ավերակներով և հրաշալի մարմարե բեկորներով: Կվիրինալյան բլուրը, Մարսյան դաշտը, Լատինյան դարպասները և նույնիսկ փո-

ղոցների անունները Միքելին թվում էին կենդանի պատմություն:

Այդ ամբողջ ժամանակը նա շատ կարդաց ու սովորեց: Երբ նա իտալերեն լեզվով կարդաց «Ազատագրված Երուսաղեմը», մի ամբողջ շաբաթ դիվահարի պես էր ման գալիս:

Միքելին ապշեցնում էր իտալացիների մշտական աշխույժ, շարժուձևերով ու կրքոտ խոսակցությունը և փողոցային կյանքի պարզությունը: Հիշում էր իր հայրենի Կաստիլիայի քաղաքները, փակ դռները, վարագույրներով ծածկված պատուհանները, վանքերի նմանվող տները և ամրոցների նմանվող վանքերը: Հիշում էր իսպանական իդալգոների մռայլ կերպարանքները, նրանց սև թիկնոցները, հպարտ քայլվածքը և զուսպ ու դանդաղ խոսակցությունը: Միայն երբեմն դեպի փողոցը պատահաբար կիսաբաց մնացած դռնից կարելի էր տեսնել ներքին բակի մի անկյունը, ուր փակված անցնում էր ընտանիքի կյանքը: Իսկ այստեղ, Իտալիայում, նեղ ու փոքրիկ փողոցներում, տան պատուհանը նայում էր դիմացի պատուհանին: Հարևանուհիները, լուսամուտներից կախվելով մինչև գոտիները, բարձրաձայն իրար նորություններ էին հաղորդում, և հենց այնտեղ էլ պարաններին փռված լվացքը կարծես թե ընդգծում էր գաղտնիքների բացակայությունը միմյանցից:

Միքելը վերադառնում էր տուն և գտնում պահանջկոտ Ակվավիվային, բամբասող ծառաներին և ընդունարանում աղերսական հայացքներով սպասողներին:

Պրելատն իր սպասավորներին հագցնում էր շքեղ կարված վերնազգեստներ, բայց վատ էր կերակրում: Միքելը հաճախ նախանձով էր դիտում մուրացկաններին, որոնք ծամում էին ողորմություն ստացած յուղից փայլող մակարոնը:

Բայց շատ շուտով Ակվավիվայի ընդունարանում տեղի ունեցող քաղաքական ձանձրալի խոսակցու-

թյունները Միգելին անսպասելի կերպով հետաքրքրեցին։

Միջերկրական ծովում սպասվում էր ժողովուրդների չլսված բաղխում։

Թուրքերը վաղուց ծովից սպառնում էին ամբողջ Հարավային Յեվրոպային։ Յերիտասարդ Օսմանյան կայսրությունը, լավ տիրապետելով յեվրոպական ռազմական արվեստին, ձգտում էր հափշտակել նոր յերկրներ և իշխել Միջերկրական ծովին։

Առաջին մեծ արշավանքը կատարեց թուրքական սուլթան Սելիմ II-րդը։ Նա Կիպրոս կղզին զորք իջեցրեց և պատերազմ հայտարարեց Վենետիկին։

Վենետիկյան վաճառականներն իրար անցան։ Հանրապետության դեսպաններն շտապեցին դեպի յեվրոպական բոլոր արքունիքները։

Ֆրանսիայի «Ամենաքրիստոնյա» թագավոր Կարլոս IX-րդը թուրքերով զբաղվելու ժամանակ չուներ։ Նա այնչափ զբաղված էր կաթոլիկ յեկեղեցու թշնամի հուգենոտներին կոտորելով, որ չէր կարող հանդգնել զբաղվելու նաև ծովային ավանտյուրայով։

Անգլիական Յեղիսաբեթ թագուհին չէր կամենում իր համար անօգուտ պատերազմի դուրս գալ։ Թուրքերը նրա ափերին չէյին սպառնում։ Եվ ի՞նչ կարիք կար անհանգստանալու։

Պորտուգալիայի յերիտասարդ թագավոր Սեբաստիանն ուրախ կլիներ օգնելու Վենետիկին, քանի որ մի շարք առևտրական պայմանագրերով ու ծովային առևտրի փոխադարձ արտոնություններով կապված էին միմյանց հետ, բայց իր յերկրում ժանտախտ էր տարածված, որը փողոցներում հնձում էր մարդկանց և Պորտուգալական նավերը կանգնած էին Լիսաբոնի նավահանգստում առանց անձնակազմի, առանց թիավարների։ Թագավորը վախենալով ժողովրդի ապստամբությունից՝ չհամարձակվեց պատերազմի դուրս գալ։

Վենետիկյան դեսպաններն արդեն սկսել էին հու-

սահատվել։ Յեվ հանկարծ ամենամոտիկ հարևանն ու հին թշնամին՝ Հռոմի պապը, առաջարկեց իր դաշնակցությունն ու օգնությունը։

Պիոս V-րդ պապը հասկանում էր, որ իր հարևան Վենետիկի ջախջախումը իրեն էլ կորստի կմատնի։ Վախենալով իր իտալական կալվածքները կորցնելուց՝ իսպանական թագավոր Ֆիլիպը հետևեց պապին և դաշնակցության մեջ մտավ թուրքերի դեմ։

Իսպանիայի պես մի հզոր դաշնակցի միանալը թուրքերի դեմ պատերազմը դարձնում էր քրիստոնեական աշխարհի միացյալ հարձակումը մահմեդական աշխարհի դեմ, յեվրոպականը՝ ասիականի դեմ։ Խաչը պատերազմում էր կիսալուսնի դեմ։

Հազիվ սկսվեցին պատերազմի մասին խոսակցությունները, յերբ Միգելն արդեն կորցրեց իր հանգստությունը։ Գիշերները նա շարունակ յերազում տեսնում էր ծովային կռիվ, ամբակածություններ, ծովային ավազակներ, սխրագործություններ... Իսկ յերբ միացյալ ուժերի հրամանատար նշանակվեց յերիտասարդ և ժողովրդականություն վայելող դոն Հուան Ավստրիացին և իսպանական հետևակ գնդերն սկսեցին ափ դուրս գալ իտալական նավահանգստներում, Ակվավիվայի մոտ ծառայելը Միգելի համար բոլորովին անտանելի դարձավ։ Նա դեն գցեց պաժի բաճկոնը, հագավ իր հին թիկնոցը և առանց հայտնելու հեռացավ պրելատի տնից։

Բոլոր հրապարակներում դրված էին զինվոր ցուցակագրելու սեղաններ։ Միգելը չէր համարձակվում մոտենալ նրանց։ Գուցե, հենց որ նա հայտնի իր անունը, նրան բռնեն ու շղթայակապ ուղարկեն նավի վրա թիավարելու։ Միգելը թափառում էր փողոցներում և առիթի էր սպասում։

Յեվ այդ առիթը ներկայացավ։

Սան Պյետրո փողոցում գտնվող եժանագին մի պանդոկից դուրս յեկավ իսպանական մի հարբած զինվոր։ Նա թեթև կաղում էր և նրա դեմքին գտնվող այ-

լանդակ ու կարմիր սպին բերանի անկյունից կորում էր մինչև քունքը: Զինվորը բարկացած էր: Ընկերները տանն այնքան շատ էին ասել իտալական կյանքի հրաշալիքների մասին, հավատացրել էին, վոր Իտալիայի գինին ամենալավն է, վոր նրանց աղջիկներն աշխարհում ամենագեղեցիկն են: Հեքիաթնե՞ր: Այստեղ, Հռոմում, հաստավիզ պանդոկապետը լցրեց նրա համար մի չափ թթու գինի, իսկ նրա գզգզված մազերով կեղտոտ աղջիկը մատուցեց անլվա բաժակները:

Զինվորը կռվեց պանդոկապետի հետ և այժմ մի մարդ էր փնտրում, վորի վրա կարողանար իր մաղձը թափել:

Պանդոկի դռանը կանգնած էր ինչ-վոր քաղցած կերպարանքով մի պատանի, հավանական է տեղական քրջոտներից էր, գունատ, նիհար դեմքով և հետ ցցած մուգ մազերով: Զինվորը դարձավ դեպի նա և մտքում իտալական բառեր էր ընտրում պանդոկապետին և նրա հետ նաև բոլոր իտալացիներին հայհոյելու համար, և հանկարծ սառած մնաց: Սառել էր և քրջոտը: Մի վայրկյան— և նրանք գրկախառնվեցին:

— Միգե՛լ:

— Ռոդրիգո՛:

— Ի՞նչպես ընկար դու այստեղ:

— Ի՞նչպես ընկար դու Հռոմ:

Մոռանալով իր վրդովմունքը՝ Ռոդրիգոն քարշ տվեց յեղբորը հենց նույն պանդոկը և պահանջեց հենց նույն թթված գինին, վորի համար հենց նոր կռվել էր:

— Իմ գունդը Ֆլանդրիայից է գալիս և վաղը չէ մյուս օրը մենք մեկնում ենք,— հայտնեց նա յեղբորը:

— Քանի՛ տարի յե մենք չենք տեսել իրար,— ասաց Միգելը:— Յես մտածում էի, թե դու արդեն կապիտան ես դարձել:

— Ով վոր հովանավորող ունի, նրա աստիճանն էլ կբարձրանա: Ահա իմ զինվորական աստիճանները:— Յեվ Ռոդրիգոն ցույց տվեց իր դեմքի սոսկալի սպին և վոտի չծալվող ծունկը:

— Դու ի՞նչպես ես, Միգել,— փոխեց անախորժ խոսակցությունը Ռոդրիգոն:— Արձակուրդում տանը յեղած ժամանակ յես լսեցի քո գործերի մասին:

Յեվ նա հաղորդեց Միգելին բարի լուրեր: Անտոնիո դե Սիգուրան, առողջանալով վերքից՝ մեկնել է Նոր Յերկիր: Մարկիզ դե Իվարրան մահացել է: Դոն Լոպեսը գործադրեց իր բոլոր կապերը և Միգելի գործը մոռացության տվեց:

— Այդ նշանակում է, վոր դու կարող ես վերադառնալ հայրենիք,— վերջացրեց Ռոդրիգոն:

— Վո՛չ, այդ նշանակում է, վոր յես կարող եմ մտնել բանակ,— ասաց Միգելը:

— Ի՞նչպես,— զարմացավ Ռոդրիգոն:— Իսկ քո գիտական ասպարե՞զը:

— Դա հօրս յերազանքն է: Աստված նրանց հետ,— ձեռքը թափ տվեց Միգելը:

— Իսկ գրքե՞րը, իսկ վոտանավորնե՞րը:

— Գրիչը սրին չի բթացնի, սուրն էլ գրչին,— պատասխանեց Միգելը կաստիլիական ասացվածքով:

— Շատ լավ,— ուրախացավ Ռոդրիգոն,— Այդ դեպքում անմիջապես ցուցակագրվիր: Յեվ աշխատիր ընկնել իմ վաշտը: Հիշիր Միգել դե Մոնկադայի գունդը, Դիեգո դե Ուրբինայի վաշտը:

Յերկու շաբաթ անց, 1751 թվի սեպտեմբերի 15-ին, յեղբայրները դաշնակից նավատորմի հետ «Մարկեզա» նավով մեկնեցին Մեսսինայի նավահանգստից:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԼԵՊԱՆՏՈՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Առագաստանավը ջենովացի դոն-Դորիայի հրամանատարությամբ առաջ էր ընթանում:

Բոլոր ջենովացիները հպարտությամբ պատմում

էյին իրենց փառավոր նավատորմի կատարած խիզախությունների մասին:

— Մենք հարվածել ենք Վենետիկը, հարվածել ենք պորտուգալացիներին, կջարդենք նաև թուրքերին,— պարծենում էյին ջենովացիները:

Բայց ինքը՝ Դորիան մռայլ քայլում էր, կամ նավի հետևի աշտարակում փակված էր մնում իսպանական հետևակի հրամանատար Դիեգո դե Ուրբինայի հետ:

Ցամաքի վրա մի քանի անգամ հարվածել են թուրքերին, բայց դեռ յեվրոպական վոչ մի նավ ծովային կռվում հաղթանակ չէր տարել թուրքերի դեմ:

Սուլթանական ծովային հրամանատարները յուրահատուկ գործելակերպ ունեյին: Նրանք հարձակվում էյին նավերը միացրած, ինչպես ամրակուռ մի շղթա: Թուրքերը դիվահարների պես էյին գրոհում և վորքան էլ նրանց սպանեյին կամ ծովը գցեյին, ընկած յենիչերիներին անմիջապես փոխարինում էյին ուրիշները, կարծես թե ինքը ծովը նրանց նորից հետ էր դարձնում:

Անհավատներն անհաղթելի յեն ծովի վրա— սուլթանական նավերն այսպիսի հռչակ էյին ստացել իտալական և իսպանական ափերում:

Նավի հատակին շղթայով ամրացված իտալական նավատորմի գերի մավրերը լուռ շարժում էյին ծանր թիերը ջրի մեջ: Նրանք թիավարում և լսում էյին քրիստոնյաների խոսակցությունը:

— Տասնչորս հազար իսպանական ու իտալական գերիներ են թիավարում թուրքական նավերի վրա,— խրախուսվում էյին ջենովացիները:— Հենց վոր ճակատամարտն սկսվի, թուրքական նավերի վրա գտնվող բոլոր քրիստոնյաները միանգամից կթողնեն թիերը և թիկունքից կհարվածեն անհավատներին:

Հոկտեմբերի հենց սկզբներին անսպասելի կերպով ցրտերը վրա հասան, փչեց հյուսիս-արևելյան քամին և ծովը սկսեց ալեկոծվել:

Ճանապարհ ընկնելու որից ինչ-վոր անհասկանալի բան էր կատարվում Միգելի հետ: Ամեն յերեկո մայրամուտին նա սկսում էր մրսել, քունքերը սաստիկ ցավում էյին և ականջները դժդժում: Գիշերը քնել չէր կարողանում, իսկ առավոտները տեղից դժվարությամբ էր վեր կենում, հազիվ էր կարողանում վոտքի կանգնել:

Ալեկոծությունը սաստկանում էր և «Մարկեզա» նավի վրա գտնվողների տրամադրությունն ընկնում:

— Վո՛չ, ծովի վրա թուրքերի ուժը չես կարող կոտրել—կիսալուսնի առագաստանավերը կախարդված են: Ինքը չար վոգին ոժանդակում է իր զավակներին:

Դաշնակից նավատորմի համար քամին անբարեհաջող էր փչում:

Ռոդրիգո Սերվանտեսը դեռ ցավող վոտը թեթևակի կողքի գցելով՝ շրջում էր տախտակամածի վրա և խոսում մարդկանց հետ:

— Մեր բարի թագավոր Ֆիլիպը թույլ չի տա,— հավատացնում էր Ռոդրիգոն,— վոր անհավատներն անարգեն սուրբ խաչը: Յերեսուն նավ էլ պատրաստ կանգնած են իսպանական նավահանգստներում և Վալենսիայում յերկու մեծ կարավելներ են պատրաստում մեզ ոգնելու համար:

Միգելը խոսակցություններին չէր խառնվում: Նա պառկել էր նավի հետևի նավասենյակում և սակավ էր բարձրանում տախտակամածը: Նա տենդի մեջ էր:

Կեֆալոնյան ափերի մոտ կայմին կապված տակառի միջից հերթապահը խուլ ձայնով բացականչեց:

— Ձախ կողմից նա՛վ...

Իտալական բրիգը*) վողջունեց դաշնակից նավատորմի առաջնորդող ֆրեգատին**): Ջարդված, գլխավոր կայմը կոտրված և կողքը ծակված՝ նա հազիվ էր պրծել թուրքական նավերի շղթայի միջից: Թշնամու նավատորմը մոտիկ էր:

*) Բրիգ - առագաստանավ:

**) Ֆրեգատ -զինվորական առագաստանավ:

Բայց անբարեհաջող քամին չէր փչում և միայն վեց օրից հետո, հոկտեմբերի 7-ին, Լեպանտոյից վոչ հեռու, դիմացից յերևացին օտար առագաստներ: Ծովակալի նավից վորոտաց թնդանոթը և պատերազմական դրոշակը ծածանվեց նավակայմի վրա:

Դա ճակատամարտի ազդանշանն էր: Բայց մարտը դեռ չէր սկսվում: Փչում էր հակառակ քամին և նավերին չէր թողնում շղթայաձև հարձակում գործել:

Իսկ յերբ վերջապես, սկսվեց ճակատամարտը, Միգելը դիակի պես փռված էր իր մահճակալին:

Յերեք շաբաթ ծովի վրա տանջվելը, անքնությունը, փոփոխական քամիները, թշնամու հանդիպման տենդագին սպասելը կատարել էին իրենց գործը: Միգելը բռնված էր խիստ ջղային տենդով: Ռոդրիգոն և Միգելի ընկերները հապճեպ կապում էին իրենց գոտիները, ստուգում հրացանները և բարձրանում վերև՝ նավապետից հրամաններ ստանալու: Իսկ Միգելն ուժասպառ գամված էր մահճակալին:

Թնդանոթային առաջին կրակոցների ծխի ամպերն արդեն տարածվել էին ծովի վրա և «Մարկեզայից» իջեցնում էին իններորդ զինված մակույկը, յերբ Միգել Սերվանտեսը յերերալով տախտակամած բարձրացավ:

— Նավապե՛տ,— ասաց Միգելը,— ինձ մարդիկ և մակույկ տվեք:

— Դուք հիվանդ եք, ցած իջեք,— պատասխանեց Դիեգո դե Ուրբինան:

— Իմ ընկերները կռիվ են գնում, յես նրանց հետ կգնամ,— կտրուկ ասաց Միգելը:— Յես կռվելու համար բավականաչափ առողջ եմ, նավապե՛տ:

— Նա զառանցում է,— բացականչեց Ռոդրիգոն,— Ցած ուղարկեցեք նրան:

Հին, փորձված ռազմիկ Դիեգո դե Ուրբինան ուշադիր նայեց Միգելի դեմքին:

— Մակույկ տվեք սրան,— անսպասելի կարգադրեց Դիեգոն:

Միգելին տվին մի մակույկ և տասներկու զինվոր:

Քամին նպաստում էր թուրքերին, բայց առավոտյան արևն ուղղակի նրանց աչքերին էր խփում: Թուրքական նավերը հարձակվում էին խիտ շղթայով, պարաններով իրար կապված և թիակները միացրած, վորպեսզի թշնամին չկարողանա խուսափել: Գրոհող նավերի այդպիսի շղթան անպարտելի յեր թվում:

Ուլջ-Ալի թուրքական խիզախ գեներալին հաջողվեց միանգամից կտրել ու շրջապատել դաշնակից նավատորմի ձախ թևը: «Մարկեզան» մնաց կռվի ամենատաք տեղը: Միգելը տեսավ, թե ինչպես հարևան նեապոլիտական նավը ստանալով կողքից յերկու արկ և կենտրոնում մեկ արկի հարված, իսկույն ճեղքվեց ու ջրասույզ յեղավ: «Մարկեզայի» նավացռուկի տախտակամածը բռնկվեց: Մարդիկ կարողացան հանգցնել կրակը, բայց մի նոր արկ ծակեց նրա ձախ կողքը: Նավերը մեկը մյուսի հետևից բռնկվում էին: Դաշնակիցների նավերի համարյա կեսը հրետանային ռմբակոծությամբ շարքից դուրս բերելուց հետո՝ Ուլջ-Ալին հրամայեց գրոհել:

Թշնամու նավակների ստվար խումբն ամպի նման սլացավ դեպի իսպանական նավերը: Այժմ արդեն կռիվը գնում էր ճակատ ճակատի: Կռվում էին նավերի տախտակամածների վրա, կռվում էին հակառակորդի նավերին ամրացրած նեղ կամրջակների վրա, կռվում էին մակույկների մեջ: Արյունով ներկված մուգ ջրերը յեռում էին նավերի շուրջը: Թնդանոթաձիգները թողնելով իրենց այլևս անօգուտ հրանոթները՝ հարձակվողների վրա յեռացրած ոճառ և չմարած կիր էին թափում: Խառնաշփոթության ու ծխի մեջ, խլացած ու կուրացած մարդիկ սայթաքում էին նավերի սահուն կողերից, ընկնում ջուրը, իրար կառչում և նորից մագլցում:

Յեգիպտական մի մեծ նավ հարձակվում էր «Մարկեզայի» վրա: Պարանով նավից կապված Միգել Սերվանտեսի և մյուսների նավակներն որորվում ե—

յին:— Հառա՜ջ— գոչեց Դիեգո դե Ուրբինան: Մի մեծ ալիք բարձրացրեց թշնամու մակույկը և Միգելը շատ մոտից տեսավ սպիտակ ու գոլավոր չալմաներ և թուրքերի մուգ դեմքեր: — Հառա՜ջ— բացականչեց Միգելը: Մակույկը ձգվեց պարանի ամբողջ երկարությամբ և Միգելը կանգնեց, որպեսզի առաջինը ցատկի հակառակորդի մակույկը: Գնդակը դիպավ նրա ուսին, բայց նա ցավ չզգաց: Նա տեսավ, թե ինչպես նավակի ծայրի զինվորն ընկավ և վրա թռավ, որպեսզի սպանվածի ձեռքից վերցնի թին: Մի գնդակ էլ սահեց նրա կաշվե բաճկոնակի վրայից, այս երրորդ գնդակն ուժգնապես դիպավ նրա կրծքին, և Միգելը, գիտակցությունը կորցնելով, ընկավ մակույկի հատակը:

Քամին փոխվեց ու սկսեց փչել հակառակ կողմից: Այժմ նա փչում էր հյուսիս-արևմուտքից և դաշնակից նավերը քշում ուղիղ դեպի թուրքերի շղթան: Վրա հասան մարկիզ դե լա Կրուսի հրամանատարությամբ պահեստի զորավոր ուժեր: Թուրքական նավերի շղթան յերերաց ու քայքայվեց: Ուժեղացող հակառակ քամին նրանց վերածեց. անկանոն կիսաշրջանի: Շղթայաձև հարձակման գործելակերպը լավ էր առաջ շարժվելու համար, բայց ոչ քամու ուղղությանն հարմարվելով: Շղթայաձև իրար կապված նավերը մեկը մյուսի հետևից բռնկվեցին: Դաշնակից նավատորմը հակադրոհի դիմեց և թուրքական նավերը ջարդված, անմարդացած, սկսեցին մեկը մյուսի հետևից անձնատուր լինել:

Միգելը ոչինչ չտեսավ: Նրան փոխադրեցին «Մարկեզայի» վրա և նա վիրավոր կրծքով ու խոցված ուսով ընկած էր տախտակամածին կիսամոռացության մեջ: Առավոտից նրան դողացնող տենդը փոխվեց թուլության: Նա յերբեմն լսում էր հաղթական բացականչություններ: Դաշնակից նավատորմը հաղթանակ էր տոնում: Թուրքական նավատորմի տասնչորս թիավարող գերիներ այդ օրն ազատություն ստացան: Միգե-

լը լսեց, թե ինչպես մի քանի թնդանոթ մի անգամից կրակեցին ողում, լսվեց հրճվանքի աղաղակ և դժվարությամբ բարձրանալով արմունկի վրա՝ նա տեսավ թուրքական հրամանատար Ալի-փաշայի կտրված գլուխը:

Լեպանտոյի նշանավոր ճակատամարտից այդ վերջին բանն էր, որ տեսավ և հիշում էր Միգել Սերվանտեսը:

Նրան արդեն անզգա վիճակում տարան կողքի աշտարակը: Վերքերը ծանր էյին, նորից կրկնվեց ջերմը: Միգելը տաքության մեջ շարունակ զառանցում էր և ոչ ոքի չէր ճանաչում: Ավելի ուշ ընկերները պատմեցին նրան, որ ինքը՝ դաշնակից նավատորմի գլխավոր հրամանատար դոն Հուան Ավստրիացին, թագավորի ոչ հարազատ յեղբայրը, մոտեցել է նրա մահճակալին: Դոն Հուանը գովել է Միգել Սերվանտեսին նրա քաջագործության համար:

Պայծառափայլ դոն Հուանը հրամայել է ռոճկից դուրս Միգելին տալ չորս դուկատ հավելում կռվի ժամանակ նրա ստացած վերքերի համար:

Կես տարի Միգելը պառկած մնաց Մեսսինայի հիվանդանոցում: Գնդակը հանեցին, կրծքի վերքը փակվեց: Բայց ուսի հոդակապերն անբուժելի վնասված էյին, որի պատճառով թևն ընդմիշտ կախված մնաց:

Լեպանտոյի հաղթանակը Սերվանտեսին թանկ նստեց: Նա զրկվեց ձախ թևից:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

„ԱՐԵՎ" ԱՌԱԳԱՍՏԱՆԱՎԸ

«Արև» կոչվող ոչ ռազմական առագաստանավը Նեապոլից Բարսելոն էր գնում:

Առագաստի կողքի մասում ծածկի տակ յերկու զինվոր էյին նստած— Ռոդրիգո Սերվանտեսը և նրա յեղբայր Միգելը՝ փաթաթած ձեռքով:

Նրա պայուսակում գտնվում էյին յերկու թանկարժեք նամակներ Մարկիզ դե լա Կրուսին ուղղ-

ված— մեկը դե Սեսա դուքսից և մյուսը հենց դոն Հուան Ավստրիացուց:

Պայծառափայլ դոն Հուանը և նեապոլիտանական դուքսը մարկիզին հանձնարարում էյին ընդունել Միգել Սերվանտեսին որպես փորձված զինվոր և քաջ կաբալյերո*):

— Յերդվում եմ— ասում էր Ռոդրիգոն Միգելին —այս անգամ մարկիզ դե Կրուսը քեզ կապիտանի աստիճան կտա:

Սեպտեմբեր ամիսն էր, պայծառ արևոտ օրեր ու տաք գիշերներ: Հաջողակ քամին առաջ էր մղում նավը, որը յերկու յեղբայրներին տանում էր դեպի իրենց հայրենի ափերը:

Պատվավոր վերքերը— «դեպի փառք տանող այդ աստղերը»— զարդարում էյին Միգելի կուրծքը: Նա հայրենիք էր վերադառնում որպես վաստակավոր զինվոր և Լեպանտոյի հերոս:

Յերկար ժամանակից հետո Միգելն առաջին անգամն էր նստել խաղաղ նավի տախտակամածի վրա: Հինգ տարուց ավելի յեր, ինչ նա անց էր կացրել Միջերկրական ծովի մարտերում:

Նա կռվել էր Նավարինի մոտ, Քորֆու կղզում և Թունիսում: Նա պաշտպանել էր Աֆրիկյան ափին գտնված Գոլետ բերդը և նրա մոտ գտնվող ամրոցը: Նա կրել էր իր վրա բերդի ամբողջ պաշարումը, դաժան ռմբակոծություններն ու տագնապալից գիշերները: Նա տեսել էր նաև վերջին գրոհը, յերբ բերդում կենդանի մնացած 700 պաշտպանողներից ոչ մեկը չըկար, որ վիրավորված չլիներ:

— Յես շատ բան եմ տեսել— ասաց Միգելը յեղբորը,— հիմա յես պետք է գրեմ:

Նա նստած էր Ռոդրիգոյի հետ «Արևի» տախտակամածի վրա և յերկուսով նայում էյին դեպի գիշերային խավարը:

— Յես պետք է գրեմ, Ռոդրիգո,— ասաց Միգե-

*) Կաբալյերո—ազնվական:

լը,— յես կորցրի իմ ձախ թևը, բայց նրա փոխարեն կարող եմ անմահացնել աջս:

Յերկու յեղբայր նայում էյին գիշերային խավարին և չէյին զգում, թե ինչ փորձանք է սպառնում իրենց:

Թուրքական ծովահենները մարած լույսերով ամբողջ գիշեր ծովի վրա հետապնդում էյին «Արև»-ին. մետաքսի հակերով բեռնավորված խաղաղ առագաստանավը նրանց լավ ավար էր խոստանում: Լուսադեմին թուրքական տասնհինգ նավեր շրջապատեցին «Արև»-ին:

«Առագաստանավը «Արև» էր կոչվում, բայց այդ արևի հակառակ կողմը իմ սև բախտն էր», մի քանի տարի անց գրում էր Միգել Սերվանտեսն արդեն Ալժիրում:

Յեթե արևելքից ուժեղ քամի փչելիս լիներ, թերևս առագաստանավը կարողանար ազատվել ծովահեններից, բայց գիշերվա ընթացքում քամին դադարել էր:

«Արևի» վրա գտնվող մարդիկ սրտատրոփ հաշվում էյին ծովահենների նավերը: Նրանց հետ կռվի բռնվելն անմտություն էր — մեկը տասնհինգի դեմ:

Ամենից մոտ գտնվող նավից մի մակույկ իջեցրին: Մի քանի ծովահեն մակույկով մոտեցան բանակցելու:

— Վախկոտնե՛ր, անձնատուր յեղե՛ք առանց կռվի...

«Արևի» նավապետը, Գվադալախարցի մի ծեր իսպանացի, վազեց դեպի նավախելը:

— Կրակ,— բացականչեց նավապետը,— կռվո՛ւմ եմ...

Առագաստանավի միակ թնդանոթը շուռ տվին ծովահենների ամենամեծ նավի կողմը և սկսվեց կռիվը:

Յեվ նորից, ինչպես շատ անգամ առաջներում, Միգել Սերվանտեսը հարկադրված էր իր ընկերների հետ մեկտեղ կանգնել առագաստանավի ցռուկի նեղ տախտակամածի վրա:

Բայց ուժերը չափազանց անհավասար էյին: Թըշ-

Նամուս վեց նավերը յերկու կողմից կիպ մոտեցան առագաստանավի կողերին և կամրջակներ նետեցին նրա տախտակամածի վրա: Հուսահատ կռվից հետո ծովահենները կենդանի մնացած խաղանացիներին կապեցին ու առագաստանավից փոխադրեցին իրենց նավը:

Նրանց գցեցին նավախելից վոչ հեռու ներքնահարկում գտնվող մի նեղ վանդակի մեջ: Այստեղ եյին տեղավորում յեվրոպական ափերին հափշտակած մարդկանց ու անասուններին:

Միգելը տասնմեկ որ, վիրավոր ու հիվանդ գերիների հետ միասին, ընկած եր գետնին, կեղտի ու աղբի մեջ, համարյա առանց սնունդի:

Մի անգամ նրանք լսեցին կռվի աղմուկ, կրակոցներ, անեծքներ: Ապա սկսեցին տենդորեն սուրալ: Թիակները ջրին խփում եյին և նավը ցնցվում եր ու դողում:

Ծովահենները փախչում եյին մի ինչ վոր նավի հետ անհաջող ընդհարումից հետո:

Տասներկուերորդ որը բացին վերնածածկը: Բացվածքից ներս թափանցեցին լույսն ու ծովային ոդը: Թուրքերը գավազաններով դուրս հրեցին գերիներին:

Սերվանտեսն ել դուրս յեկավ մյուսների հետևից: Առավոտյան լույսը շլացրեց նրա աչքերը: Տախտակամածի վրա վազվզում ու կարգադրություններ եր անում միջահասակ մի մարդ, լայն մորուքով ու դուրս պրծած աչքերով: Նա միանգամից հայհոյում եր յերեք լեզվով— իտալերեն, հունարեն և թուրքերեն:

— Զգուշացեք Կաղից,— շշնջաց գերիներից մեկը Սերվանտեսին:

Միգելը ցնցվեց: «Կաղը» թուրքերի մոտ փախած մի հույն եր, Ել-Կոխո անունով, Միջերկրականում հայտնի ծովահեն:

Գերիներին խուզարկեցին: Սերվանտեսից վերցրին նրա նամակները: Կաղը, կամ Դալի-Մամին, ինչպես թուրքերն եյին անվանում նրան, սուր հայացք գցեց Սերվանտեսի վրա և հրամայեց առանձնացնել

նրան ուրիշ յերեք հոգու հետ: Միայն հետո, ցամաքի վրա, Միգելը հասկացավ, թե դա ինչ ե նշանակում:

— Բերեք մյուսներին — ասաց Դալի-Մամին:

Տախտակամածի վրա աղաղակ բարձրացավ:

Սերվանտեսը հետ նայեց: Բոլոր թիավարները մի կողմն եյին նայում: Առագաստանավը շարժվում եր հանդարտ, կարծես վախենալով ծովափնյա խութերից: Սերվանտեսը նույնպես այն կողմը նայեց, ուր բոլորի հայացքն եր դարձած:

Առավոտյան մշուշի մեջ սպիտակին եյին տալիս ժայռերի վրա ցրված արևելյան մեծ քաղաքի տները:

Դա Ալժիրն եր, թուրքական ծովահենների բույնը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քարե պատերով շրջափակված եր լայն բակը: Ծածկի տակ պառկած են հիվանդներ, այնտեղ ոդը ծանրը ե, տնքոցներ, տոթ ու միջատներ: Դա յեվրոպացի ստրուկների ընդհանուր բանտն ե, բանյոն:

Այստեղ բերին գերիների մի նոր խումբ: Յուսուֆը՝ շերտավոր չալմայով, ականջներին արծաթե ողեր գցած մի հսկա թուրք, շղթայակապ արեց վոմանց ձեռքերը և վոմանց ել վոտքերը:

Տերը՝ Դալի-Մամին յեկավ վերջնական ստուգում և բաժանում կատարելու:

Կաղը զայրացած եր: Նրա վերջին արշավանքը շատ անհաջող եր յեղել: Յերկու տասնյակ ստրուկներ, այն ել նիհար, հիվանդ և հյուծված: Վոչ վոք չի գնի դրանց նույնիսկ կանացի աշխատանքի համար՝ —փայտե սանդի մեջ յեգիպտացորեն ծեծելու:

— Ի՞նչ եյիր դու քո հայրենիքում: Նավապե՞տ: Գնդի հրամանատա՞ր —մռայլ մոտեցավ նա Միգելին:

— Հասարակ զինվոր,— պատասխանեց վերջինս:

— Դու սկսում ես ստել,— տաքացավ Կաղը:— Հասարակ զինվորին ինքը ծովապետը նամակներ չեր տա:

— Այնուամենայնիվ յես միայն զինվոր եմ, — կրկնեց Միգելը:

— Դուք բոլորդ էլ խաբեբաներ ու չներ եք: Աղքատներ ու հասարակ զինվորներ եք ձևանում: Դուք ցանկանում եք, վոր ձեզ համար ամենացածր փրկանք նշանակեն: Բայց ինձ դեռ վոչ վոք չի խաբել: Յուսո՛ւֆ,— կանչեց Դալի-Մամին պահապանին, ցույց տալով Սերվանտեսի վրա:— Սա իր յերկրում կարևոր մարդ է, մեծ հրամանատար և թագավորի մերձավորը: Տար նրան թագավորականների բանտը:

Ցեվ Սերվանտեսին յերկու ուրիշների հետ տարան հարևան բակը, վորն ավելի փոքր եր և վորտեղ տեղավորված եր թագավորական բանտը: Թագավորական բանտում տանջվում եյին հատկապես կարևոր, հատկապես խստորեն պահպանվող գերիները: Թագավորական բանտում կամ դիմանում եյին մինչև փրկանքը տալը և կամ մահանում:

Առաջին մի քանի օրը Միգելը գտնվում եր անզգա վիճակում: Նա պառկած եր քարերի վրա բակի սալեքոտ տեղում, վոչինչ չեր ուտում և բութ հայացքով նայում եր պատին: Ի՞նչ եր խոստանում բախտը նրան և այս բոլորից հետո ի՞նչ սարսափելի վերջավորություն: Գերություն վայրենի աֆրիկական քաղաքում, ստրկություն Ալժիրում: Նա պառկած մտաբերում եր Լեպանտոյի կռվից հետո անցկացրած տարիները՝ Նավարինը, Թունիսը, Օրանը:

Օրա՞ն: Վերջին անվան վրա նա կանգ առավ:

Օրա՞ն: Իսպանական բանակի պարտությունից հետո աֆրիկական ափին գտնվող միակ կետը, վոր գտնըվում եր իսպանացիների ձեռքում: Այնտեղ գտնվում եյին քառասունյոթ թնդանոթ և հազար ութ հարյուր բերդապահ: Օրանում բնակչության կեսն իսպանացիներ են: Օրանից խաղաղ յեղանակին հասարակ նավով յերկու օրում կարելի յե հասնել Իսպանիայի ափերը:

Այդ օրվանից մի միտք — փախուստի միտքը — ամբողջապես համակեց Սերվանտեսին և այլևս բաց չթողեց նրան:

Անզգայությունն անցավ:

Հիմա նա արդեն չեր պառկում, այլ բանտի բակում տենդորեն հետ ու առաջ եր քայլում:

Ամենից առաջ նրան հարկավոր եյին համախոհներ: Նա ուշադիր սկսեց դիտել գերիներին: Այստեղ կային նաև իսպանացիներ: Աշխարհին հաղթողները նույն իսկ այստեղ, գերության մեջ, իրենց առանձնացած եյին պահում: Ցնցոտիներով ու շղթայակապ, բանտի բակով անցնելիս՝ նրանք հանդիսավոր կերպով բարևում եյին միմյանց:

Սա հուսալքված գերիների հին խումբն եր: Վերադարձի հույսը նրանց մեջ չափազանց թույլ եր և նրանք ամբողջ ուժով պաշտպանում եյին միմյանց: Կյանքից զրկված լինելով՝ նրանք ապրում եյին Իսպանիայի շահերով, այն Իսպանիայի, վորից նրանք հեռացել են շատ տարիներ առաջ: Քրքրված թիկնոցների մեջ փաթաթված՝ նրանք իրիկունները նստում եյին բակի մի անկյունում և վիճում Կարլոս թագավորի գահից հրաժարվելու մասին կամ հայհոյում վախկոտ ու դաժան Ֆիլիպին:

— Ֆիլիպը իսպանական արյունը թափում է քրիստոնյա Ֆլանդրիայում,— դատում եյին իսպանացիները:— Իսկ այստեղ, Ալժիրում, ուր հազարավոր դժբախտ քրիստոնյաներ են տանջվում, չի կամենում ուղարկել նույնիսկ մի փոքրիկ բանակ:

— Ալժիրն այնքան վատ է ամրացված, վոր հինգ հազար իսպանացի լրիվ բավական են քաղաքն ու ամրոցը գրավելու, փաշային տապալելու և գերության մեջ տառապող քսան հազար քրիստոնյաներին ազատելու համար...

— Մեր հանգուցյալ թագավորը, յերջանկահիշատակ անհաղթ Կարլոս հինգերորդը վաղուց արդեն վոչնչացրած կլիներ ծովահենների այս բույնը:

Սերվանտեսը սիրտ արավ: Նա հայրենակիցներին պատմեց իր ծրագիրը:

— Դուք ուզում եք փախչե՞լ,— հարցրեց գերիներից ամենածերը, Բե՛լտրան դե-Սալտոն, տասը արե-

վից խոժոռած հայացքը Միքելի վրա դարձնելով։— Յերբ յերիտասարդ եյի, յես էլ եյի ուզում փախչել։

Նա հետ գցեց ալեզարդ մազերի փունջը և Միքելին ցույց տվեց ականջի փոխարեն այլանդակ կերպով կծկված մի սպի։

— Դուք ուզում եք Որա՞ն փախչել,— ասաց մյուս գերին՝ Ռոբինը։— Մեկ ու կես տարի առաջ չորս իսպանացի փորձեցին փախչել Որան։ Նրանց բռնեցին, հետ բերին ու ցցերի վրա նստացրին։

— Յերկու ճանապարհ է տանում դեպի Որան— մեկը ցամաքով, մյուսը՝ ծովով,— ասաց յերրորդը՝ Նավարրեսը։— Ծովափը պահպանում են յենիչերիները և պահակ նավերը, իսկ ցամաքը։

Բայց ո՞վ սիրտ կանի ցամաքով գնալ... Յոթանասուն լեգ*), տասն օրվա ճանապարհ, անծանոթ տեղերով ու չոր անապատով....

— Ամեն ինչ կախված է ուղեկցողից,— ասաց Սերվանտեսը։— Յես ուղեկցող կգտնեմ։

Գերիներին ուտելիք եր բաժանում Իսաքարը՝ գանգուր մազերով և շաքարի պես սպիտակ ատամներով մի նեգր տղա։ Արաբները դեպի յերկրի ներսերը կատարած ավազակային մի արշավանքի ժամանակ փոքրիկ Իսաքարին գերի եյին բերել հոր հետ։ Հորը ծախել եյին վորպես նավի թիավար, իսկ Իսաքարին բռնի կերպով մահմեդական դարձրին և ստիպեցին ոգնել թագավորական բանտի պահապաններին։ Մահմեդականները խորշում եյին նեգրից, համարելով նրան «պիղծ»։ Տղան պահապանների հետ մի ընդհանուր բնակարանում չեր ապրում, այլ բակի մի անկյունում քարաշեն մի փոքրիկ պահականոցում, վորի միակ անցքը թե դուռ եր և թե պատուհան։

Սերվանտեսը փոքրիկ նեգրի դարչնագույն և տխուր աչքերում վիշտ և փախչելու ցանկություն կարդաց։ Գիշերը նա գաղտնի մոտեցավ Իսաքարի նկուղին։

*) Մոտ 300 կիլոմետր։



Նա լուռ դուրս սողաց և յերկուսով անցան պահականոցի հետևը գտնվող յեռանկյունաձև սև սալերի մեջ:

— Իսաքար,— ասաց Սերվանտեսը,— դու լսե՞լ ես Որանի մասին:

— Որա՞ն: Յես Որանը գիտեմ, Սերվա՛նտի— պատասխանեց Իսաքարը:— Տասը ֆրանկ սարուկներ յերկու տարի առաջ Որան փախան և էլ չվերադարձան: Հետո նրանց վոսկորներն անապատում գտան:

— Իսկ դու անապատով դեպի Որան տանող ճանապարհը գի՞տես, Իսաքա՛ր:

— Անապա՛տը— ասաց Իսաքարը և նրա բիբերը սարսափից լայնացան— անապա՛տը: Այնտեղ կարմիր ավազներ կան, և դեղին ավազներ, և գորշ ավազներ, մահվան ավազներ: Այնտեղից, Սերվա՛նտի, դեռ վոչ մի ֆրանկ սարուկ չի վերադարձել: Միայն տեղացիները գիտեն Որանի ճանապարհը:

Միգելը բռնեց տղայի ձեռքը:

— Իսաքա՛ր, դու ուզո՞ւմ ես ազատ լինել,— հարցրեց Միգելը:

— Ուզում եմ, Սերվա՛նտի:

— Բեր ինձ մոտ ճանապարհն իմացող մեկին, և յես քեզ էլ կտանեմ ինձ հետ:

— Յես վաղը մի մարդ կբերեմ քեզ մոտ, Սերվա՛նտի:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Ո Ր Ա Ն

Կլոր ու բարեհոգի դեմքով յերիտասարդ արաբ Ալիմը շատ շուտով համաձայնեց գերիներին տանել Որան, միայն պահանջեց մեծ գումար— յոթանասուն վոսկի: Իսպանացիները Սերվանտեսի վոգևորությունից վարակվելով՝ արագորեն հավաքեցին փողը:

Ընդամենը ինը մարդ պետք է գնային— Սերվանտեսը, Իսաքարը, Ռիոսը, Նավարրետը, Բել՛տրան դե Սալ՛տոն, Ոսորիոն, Մենեսեսը, Ռոդրիգոն և յեղբայրների հետ գերի ընկած նրանց ծովային արշավանքների հին ընկեր՝ Գաբրիել Կաստանյեդան: Ընդհանուր բակում գտնվող Ռոդրիգոյի ու Կաստանյեդայի հետ կապը պահպանում էր Իսաքարը:

Ծերունի Բել՛տրան դե Սալ՛տոն միայն փախուստի նախորյակին յերեկոյին մոտեցավ Սերվանտեսին:

— Ինձ էլ տարեք ձեզ հետ, կաբալյերո,— խուլ ձայնով ասաց Բել՛տրանը:— Յես յերկար չեմ ապրելու, — բայց գերության մեջ մեռնելն անապատից սարսափելի յե:

Հին գերիները վաղուց արդեն ազատվում էին ցերեկվա ժամերին քաղաք գնալու իրավունքից: Մի քանի ասպրա*) տալով պահապաններին՝ այդպիսի իրավունք ստացավ նաև Սերվանտեսը: Պահապանները հանգիստ էյին: Ալժիրի շուրջը տարածված անապատն ավելի լավ էր պահպանում գերիներին, քան բարձր քարաշեն պարիսպները:

Նրանք դուրս յեկան ցերեկը տարբեր ժամերին, վորպեսզի կասկած չհարուցեն: Շուկայում գնեցին պաքսիմատի, ապխտած մսի և բլիթի պաշար: Ալիմը ձեռք բերեց ջրով լիքը յերկու տիկ: Յերեկոյան դեմ, պայմանավորված ժամին, բոլորն էլ հավաքվեցին քաղաքի լեռնային ամենաբարձր մասում գտնվող Բաբ-էլ-Ուեդի դարպասների մոտ: Չեկավ միայն Իսաքարը: Նրան կես ժամ սպասեցին: Ալիմն շտապեցնում էր գերիներին և նրանք ստիպված յեղան շարժվել առանց տղայի:

— Ո՞ւմ ես տանում,— կանչեց Ալիմին քաղաքի դռների մոտ ննջող յենիչերին:

— Իմ տիրոջ՝ բարեպաշտ Ալի-Մուրադի հանձնարարությամբ գնած գերիների խումբն է. Էլ-Ադարեյում նոր կառուցվող տան համար եմ տանում,— ա—

*) Ասպրա — մանր դրամ:

րադ պատասխանեց Ալիմը և յենիչերու ափը դրեց արծաթե մի դրամ։

Վերջինս գլխով հավանության նշան տվեց ու թողեց գերիներին անցնել։

Նրանք սկզբում գնում էին մահմեդականների գերեզմանատան մոտով, ուր խավարի մեջ սպիտակին էին տալիս յեռանկյունաձև գերեզմանաքարերը, ապա թեքվեցին դեպի ձախ ու սկսեցին բարձրանալ սարը։ Բոլորն էլ լուռ էին։ Միայն յերբեմն լռության մեջ վորևե մեկի վոտքին դիպած քարն ու թափվող խոշոր ավազն էր խշրտում։

Հետևից հանկարծ լսվեց արագ քայլեր ու նիհար մի ձեռք բռնեց Սերվանտեսի արմունկը։

— Իսաքա՛ր,— քիչ էր մնում բացականչի Միգելը՝ արագ շուռ գալով։

— Այո՛, այդ յես եմ, Սերվա՛նտե... Յես սպասեցի մինչև Յուսուֆի քնելը։ Տե՛ս, թե ինչ եմ գողացել նրանից։

Տղան ինչ վոր մի բան դրեց նրա ձեռքը։ Մթության մեջ Միգելը շոշափեց հրացանի սառը փողը։

Ալիմը գնում էր առջևից և ցույց տալիս ճանապարհը։ Շուտով նա մտավ մի նեղ կիրճ։ Բոլորը հետևվեցին նրան լեռան յեզերքից ընթացող դահավեժ շավիղով։ Յերկինքը վերևում մի նեղ շերտ էր թվում, ցանված անհավասար մեծության փայլուն կետերով։

Լուսադեմին նրանք սկսեցին իջնել և արևի ծագման հետ նրանց առջևը բացվեց այս ու այն կողմից կտրված կարմրագույն ժայռերի գագաթներով ալժիրյան սարահարթը։

Համարյա յերեք հարյուր կիլոմետր պետք է անցնեյին քարքարոտ, արևախանձ, ամայի յերկրով։

Նրանք գնում էին դանդաղ, խնայելով իրենց ուժերը և հերթով տանելով ամենածանր բեռը՝ ջուրը։ Ժամը տասնմեկին կանգ առան և սպասեցին, մինչև որվա ամենատաք ժամերն անցնեն։ Բոլորն էլ լուռ էին։ Միայն Ալիմն էր փորձում խոսել, բայց նրան վոչ վոք չէր պատասխանում։ Իրիկնադեմին Ալիմն

անհանգիստ դարձավ։ Նա սկսեց ուշադիր դիտել չորս կողմը։

— Ի՞նչ ես փնտրում,— հարցրեց նրան Կաստանյեդան։

— Հարմար իջևան,— դժկամությամբ պատասխանեց արաբը, գլուխը շուռ տալով ուրիշ կողմ։

Արևը մայր մտավ և գիշերը, հանկարծ սև ծածկի նման իջավ անապատի վրա։ Ճանապարհորդներն ընտրեցին հալվե բույսով ծածկված ավազոտ մի փոքրիկ հովիտ և տեղավորվեցին այնտեղ գիշերելու համար։

Իսաքարն ու Ռոբլոն գնացին խարույկի համար ցախ ճարելու։ Սերվանտեսն ու Կաստանյեդան բաժանեցին ուտելիքը։ Ամենքին հասավ մի մի կտոր ապխտած միս, յերկուական բլիթ և մի քանի ումպ ջուր։

Շուրջը թափառում էին գիշատիչ գազաններ։ Հարկավոր էր ամբողջ գիշեր կրակը վառ պահել։ Դժվար ճամփորդությունից հոգնած՝ նրանք բոլորն էլ շուտով պառկեցին և քուն մտան։ Միայն Սերվանտեսն ու Ալիմը մնացին խարույկի մոտ։

Միգելը չարունակ չոր ճյուղեր էր ավելացնում կրակին։ Ալիմը չէր քնում և նայում էր նրան։

Շնագայլերը վոռնում էին հեռու անապատում։ Միգելի գլուխը հոգնածությունից ծանրացել էր կապարի պես։

— Գնա քնիր, յես կնստեմ կրակի մոտ,— առաջարկեց Ալիմը։

— Վո՛չ, յես հոգնած չեմ և քնել չեմ ուզում,— ասաց Միգելը, խառնելով առկայծող խարույկը։

«Ի՞նչ է սրա միտքը, մտածում էր Միգելը՝ նայելով ուղեկցողի սև ու անհանգիստ աչքերին։ —Ի՞նչ է ուզում անել։ Մեզ մատնել իր տիրոջ ձեռքը և փո՞ղ ստանալ, թե՞ ծախել անապատում թափառող արաբներին»։ Միգելը ստուգեց հրացանը և դրեց իր մոտ։

Բոցավառվող կրակը տատանվում էր և տարորինակ նախշեր առաջացնում։ Նրանց մեջ Միգելը տես-

նում էր ծանոթ կերպարանքներ, նավեր, զենքեր... Անտոնիո դե Միգուրան, բարձրացնելով փայլուն թուրը, գոռալով հարձակվում էր իրեն վրա: Ծովի արծաթավայլ ալիքները բախվելով «Արև» առագաստանավի խելին՝ ցրվում էին փոշու պես: Թշնամու նավը շուռ էր գալիս մի կողքի և այդ կողմում գտնը–ված թնդանոթները միանգամից կարմիր բոց էին արձակում...

Սերվանտեսը ցնցվեց ու զարթնեց: Լուսադեմին մեղմ քամին սահում էր հալվեյի վրայով: Գիշերային յերկինքը կարծես թե ավելի վեր քաշվեց և լուսացավ:

Խարույկի շուրջը բոլորն էլ քնած էին մեռածի պես: Ալիմը չկար:

Ալիմը չէր էլ մտածում զերիներին մատնել Կադիի ձեռքը և վոչ էլ ծախել թափառական արաբներին: Նա պարզապես վոչ մի րոպե չէր հավատում Սերվանտեսի ձեռնարկած գործի իրագործմանը: Փողն ստանալով՝ նա վերցրեց պաշարի մի մասը, մի տիկ ջուր ու փախավ: Արաբը կարծում էր, վոր զերիներն իրենք իրենց մի կերպ կվերադառնան Ալժիր:

Միգելն արթնացրեց բոլորին և տագնապ բարձրացրեց:

Հարկավոր էր վորոշել — վերադառնա՞լ, թե՞ առաջ գնալ:

— Առաջ գնալ,— ասաց դե Սալ’տոն:

— Մենք ճանապարհ չգիտենք,—ասաց Ռաոֆին:

— Մենք հետ դառնալու ճամբան էլ չգիտենք,— հակաճառեց Կաստանյեդան:

Միակ մարդը, վոր ընդհանուր գծերով գիտեր անապատի ծովափնյա շերտը, դա Ֆրանցիսկո դե-Մենեսեսն էր:

— Յեթե մենք շարունակ գնանք ծովին զուգահեռ դեպի արեվմուտք,— բացատրեց նա,—ամենաշատը յերեք որում կհասնենք Խելիֆ գետին: Իսկ ջուրը մեզ յերեք որ կբավականացնի:

Վորոշեցին առաջ գնալ:



Խելիֆը ջրաշատ գետ ե, Ալժիրյան սարահարթի միակ գետը, վորը չի ծծվում անապատի ավազուտների մեջ և հասնում ե մինչև ծովը։ Նրա այն կողմը գտնըվում են Ուարսենիսայի անտառապատ բարձունքները, վորտեղ շատ ջուր և խաղաղ արաբների գյուղեր կան։ Գուցե արաբներն օգնեն նրանց և ցույց տան Օրանի ճանապարհը։

Նրանք ամբողջ օրն առաջ գնացին, խնայելով իրենց ուժերը ու ջուրը և գիշերը տեղավորվեցին խարույկի շուրջը։

Ամբողջ գիշերը լսվում եր մոտակայքում թափառող հովազի մռնչոցը։ Վողբագին վոռնում եյին շնագայլերը և ծանր անհանգստությունը տանջում եր Միգելին։

Բացվեց շիկացած առավոտը։ Տոթաբեր արևը բարձրացավ ու կախվեց անշարժ յերկնքում։ Ճամբորդներն առաջ եյին գնում նույն ուղղությամբ։ Ռոդրիգոն տանում եր թանկարժեք բեռը — ջուրը։ Կեսորին յուրաքանչյուրն ստանում եր յերկու ումպ այդ պղտոր ու տաք հեղուկից։

Կեսորից հետո քամի բարձրացավ։ Նա փչում եր մայր ցամաքի խորքերից—տոթ ու չոր քամի՝ Սահարայի շնչառությունը։ Սամումն իր հետ բերում եր անապատի փոշին և ամեն ինչ ծածկում նրա տակ. Յերկինքը գորշացավ, արևը ծածկվեց ու մթագնեց, ամեն ինչ դժգունեց և շուրջը միայն անշունչ կապտագույն տափաստանն եր յերևում։

Այսպես նրանք դժվարությամբ անցան մի քանի կիլոմետր և հանկարծ Սերվանտեսը կանգ առավ։

Սամումը փչում եր հարավից ուղիղ նրանց ճակատին։ Նշանակում ե նրանք փոշու ամպերի մեջ աննկատելի կերպով շեղվել են ուղիղ ճանապարհից և շարժվում են վոչ թե դեպի արևմուտք, ինչպես յենթադրում եյին, այլ դեպի հարավ, մայր ցամաքի խորքերը։ Աստված գիտե, թե այդպես նրանք վորքան են անցել և Օրանը նրանցից վորքան հեռու յե։

Նորից սկսվեց խորհրդակցություն, ինչպես գտնել ճանապարհը և դեպի վոր կողմը շարժվել։

— Միանգամայն հակառակ ուղղությամբ,—վըճռականորեն ասաց Ֆրանցիսկո դե-Մենեսեսը,— մենք այս անշունչ անապատում ճանապարհ չենք գտնի։ Մենք պետք ե ուղիղ դեպի հյուսիս գնանք և ծովափ դուրս գանք։ Մենք համարյա ամբողջ ճանապարհը ծովին զուգահեռ ենք ընթացել և շատ հեռացած չենք լինի ծովափից։

Դարձան դեպի հյուսիս։ Քայլում եյին մեկը մյուսի հետևից։ Հետ նայելով Սերվանտեսը տեսավ Իսաքարի գունատ դեմքը, վորը հազիվ եր քայլերը փոխում։

«Յեթե մեզանից վորևե մեկն ընկնի, մենք կորած» ենք,— մտածեց Միգելը։

Բել՚տրան դե Սալ՚տոն գլուխը և ուսերը քրքրված թիկնոցը փաթաթած քայլում եր առջևից, դիք, նիհար ու հանգիստ, կարծես Տոլեդոյի փողոցներում լիներ քայլելիս։ Օսորիոն քայլում եր հետևից և շարունակ ջուր եր աղերսում, իսկ Ռոդրիգոն գլուխը բացասաբար եր շարժում, տիկի մեջ շատ քիչ ջուր եր մնացել, ավելի քիչ, քան նրանք հաշվել եյին։

Մայրամուտին Ռոդրիգոն բլրի լանջին մի մուֆլոն*) նկատեց։

Լեռնային այծը թեթև թռիչքներով հասավ բլրի գագաթը, կանգ առավ և գլուխը բարձրացրեց։ Նրա մեծ ու կլոր յեղջյուրները պարզ ու վորոշ յերևում եյին կարմրագույն յերկնքի ֆոնի վրա։ Ռոդրիգոն կրակեց։ Մուֆլոնը գլուխը հետ գցեց և ընկավ առջևի վոտների վրա, բայց հետո բարձրացավ ու փախավ, շարունակ առջևի վոտքերից կաղալով։

Այդ յերեկո իջևանատեղում Միգելը բոլորին բաժանեց ջրի վերջին ումպը։

Նա կարծում եր, թե այլևս չի լուսանալու։ Նա կորցրել եր ժամանակի հաշիվը։ Բայց լույսը բացվեց չոր ու շիկացած, և նրանք նորից առաջ քայլեցին։

*) Մուֆլոն—վայրի այծ։

Բել՛տրան դեՍալ՛տոն դարձյալ առջևից եր գնում, առաջվա պես դեմ ու անվրդով, բայց նրա բորբոքված աչքերն ու կապտած չոր շրթունքները սարսափելի եյին:

Ոսորխոն հեռուից քարշ եր գալիս և աղեկտուր տնքում: Սերվանտեսն այլևս նրա վրա ուշադրություն չեր դարձնում:

Իսաքարը քայլում եր նրա կողքով, կիսախուփ աչքերով և լուռ ծամում եր իր թիկնոցի ծայրը:

Միգելը միայն այժմ նկատեց, թե նրանք վորքան ծանր եյին շարժվում: Նրանք քայլելիս այնքան ճիգ եյին թափում, վոր կարծես տասնյակ կիլոմետրեր եյին անցել, մինչդեռ իրոք անցել եյին յերկու յերեքից վոչ ավելի:

Հանկարծ Իսաքարը ցնցվեց ու մեկնեց ձեռքը:

— Ջո՛ւր,— բացականչեց Իսաքարը և, որորվելով, անհաստատ քայլերով առաջ վազեց:

«Գիտակցությունը կորցրեց... Զառանցում ե»... տագնապով մոտեց Միգելը:

Բայց կես րոպե անց բոլորն ել իրենց առջև տեսան այն, ինչ առաջինը նկատել եյին տղայի սրատես աչքերը— տափաստանային ոազիսի կապտադորշագույն շերտը:

Մարդիկ վազեվազ հասան, ավազների մեջ խրվելով մոտ սողացին և յերկար ժամանակ ընկած մնացին աղահամ ու արևից տաքացած ջրի վրա:

Հետո լցրին տիկերը և ամբողջ որն անց կացրին ոազիսի ափին:

Իրիկնադեմին հեռվից, ժայռերի հետևից, ձգվեցին հովերն իջնող ուղտերի սապատներն ու սև յերիզներով սպիտակ ու դեղին բուրնուս հագած մարդիկ...

Փախստականները չեյին ցանկանում հանդիպել ավազակաբարո թափառական արաբներին, ուստի թաքնվեցին լանջերին տարածված խիտ թփերի մեջ և սկսեցին դիտել:

Քարավանն իջնում եր ջրի մոտ: Արաբներն, ըստ

յերևույթին, վերադառնում եյին «Հարրամից», նեգրերի գյուղերի վրա կատարած ավազակային արշավանքից: Փղոսկրի ծանր հակերը, բույսերի կապերը և գույնզգույն խսիրները կախված եյին ուղտերի սապատների յերկու կողմերից: Հակերի վրա զույգ զույգ կապկպված եյին կիսակենդան սև կանայք ու յերեխաներ, իսկ տղամարդկանց վոտքով եյին տանում: Արյունոտ մեջքերն ու շղթայակապ վոտքերը պարզորեն ասում եյին այն ճամփի մասին, վոր մարդիկ անցել եյին՝ կտրվելով հայրենի գյուղից ծովափնյա քաղաքի գերիների շուկան ընկնելու համար:

Արաբները ջրեցին ուղտերին և սուրճ պատրաստեցին իրենց համար: Մինչև ուշ գիշեր նրանց կոկորդային ձայներն ու աղաղակները չդադարեցին: Հետո հանդարտացան, իսկ վաղ առավոտյան՝ համարյա մթնով, նրանք շարունակեցին իրենց ճանապարհը:

Հազիվ եյին նրանք հեռացել, յերբ ժայռերի հետևից յերևաց յերկրորդ քարավանը:

— Մենք գտնվում ենք քարավանների ճանապարհի վրա,— ասաց Ֆրանցիսկո դե Մենեսես:— Այս ճանապարհը պետք ե վոր տանելիս լինի դեպի վորևե մեծ քաղաք՝ Բոզար, Մոստագանեմ: Պետք ե սրանց հետքերով գնալ:

Յերկրորդ քարավանն ել գնաց առաջինի ուղղությամբ: Փախստականները գնացին քարավանի հետքերով: Այսպես քայլեցին նրանք մինչև կեսոր: Ժայռերն ավելի մեծանում եյին, շատանում և դառնում ավելի բարձր: Լեռնաշղթաների լանջերին աջ կողմում սպիտակին եյին տալիս արաբների վրանները և յերևում եյին ժայռերի վրա մագլցող սև այծերը: Կածանը հետզհետե փոխվում եր ճանապարհի: Ավելի ու ավելի շատ նրա վրա յերևում եյին ձիավորներ և ձիավորների խմբեր: Ճանապարհը շրջվում եր բարձր ժայռախմբի մոտով և բարձրանում դեպի լեռը: Բել՛տրան դե-Սալ՛տոն վազում եր առջևից: Նա ամենից շուտ

բարձրացավ շրջապատին տիրապետող ժայռի գլուխը, վորտեղից և նայեց դիմացը: Նայեց և քարացած մնաց: Ապա գունատ դեմքով դանդաղորեն շուռ յեկավ դեպի ընկերները:

Մի քանի վայրկյանում Սերվանտեսը ժայռի գագաթին եր:

Նա տեսավ ծովը, ծանոթ նավահանգստի կապույտ ծվածիրը, քարափը, բոլոր յոթը ամրոցները և տասներկու մզկիթներն ու աստիճանները, դեպի լեռը բարձրացնող ծովափնյա Ալժիր քաղաքի սպիտակ տըների կտուրները:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՓՐԿԱՆՔԻ ԳԻՆԸ

Դալի-Մամին գլխի մազերը փետելով՝ վնասներն եր հաշվում: Վեց ստրուկները, թագավորական բանտի վեց ամենալավ ստրուկները բոլորի աչքի առաջ փախան դեպի անապատ: Մոտ յերկու հազար վոսկի. հաշվեց նա, ավաղի պես ձեռքից գնաց:

— Ո՞ւր եյիր դու,— մռնչում եր նա Յուսուֆի վրա,— դու քնա՞ծ եյիր, բորենի՛: Քեզ կենդանի կթաղեմ, մահու չափ կծեծեմ գավազանով: Գտի՛ր նրանց:

Յուսուֆը ինքն էլ ապուշ եր կտրել: Հետախուզումները վոչ մի արդյունք չտվին: Ալժիրը մեծ ե... քաղաքը շատ դռներ ունի, իսկ անապատը մեծ ե ու ընդարձակ:

Յեվ հանկարծ բոլոր վեց գերիներն էլ հնազանդ ինքները յեկան ու նստեցին բակի մի անկյունում:

Ուրիշ էլ ի՞նչ եր մնում նրանց անել:

«Կգանակոծե՞ն, թե գլխիվայր կկախեն: Ցցի վրա կնստացնե՞ն, թե ուղղակի մինչև վիզը կթաղեն գետնի մեջ»— յենթադրություններից տանջվում եր նայելով գերիների վրա Յուսուֆը:

Դալի-Մամին այնքան ուրախացավ, վոր նույնիսկ չպատժեց փախստականներին:

Գավազանով ծեծ կերավ միայն Իսաքարը: Միգելը լսեց ընդհանուր բակից յեկող նրա աղաղակն ու վոռնոցը: Արյունլվա և ուշաթափ տղային գցեցին իր բունը:

Միգելը սողաց դեպի նա և նրա վերքերին քսեց իր ստացած աղքատիկ բաժին ձիթապտղի յուղը:

— Լաց մի՛ լինի, Իսաքար,— ասաց Միգելը,— մենք նորից կփախչենք:

Զայրույթը, վոր նա առաջ չուներ, այժմ, այդ անհաջողությունից հետո, ամբողջապես համակեց Սերվանտեսին: Նա այժմ գիշերներն անքուն պառկած ավելի համարձակ ու խելացնոր ծրագրեր եր կազմում:

Մնացած գերիները հույսերը կորցրին, առանձնապես Կաստանյեդան: Նա վոչինչ չեր ուտում, նիհարում եր և նկատելի կերպով մաշվում: Յեվ անսպասելի կերպով առաջինը հենց Կաստանյեդան ազատվեց:

Ծերունի ծնողները մի տեղից փող ձեռք բերելով՝ ուղարկել եյին նրա փրկանքը: Վոտաբոբիկ Ֆրանցիսկյան կրոնավորը վոսկին բերեց ուղղակի բանտ: Կաստանյեդան ուրախությունից կարկամեց: Մինչև հրաժեշտի վերջին րոպեն նրա դեմքից չեր հեռանում յերջանկության ու զարմանքի արտահայտությունը:

Վերջապես Սերվանտեսը կարողացավ Կաստանյեդայի հետ նամակ ուղարկել Իսպանիա՝ իր հորն ու մորը:

Ռոդրիգո Սերվանտեսը Ալժիրից նամակ ստացավ:

Խե՛ղճ դոն Ռոդրիգո: Նրա յերկու վորդիները— Միգելն ու Ռոդրիգոն — ծովահենների մոտ գերի եյին... Խեղճ Դոնյա Լեոնո՛րա: Կվիճակվի՞ արդյոք նրան կրկին տեսնել իր վորդիներին...

Բոլոր բարեկամներն ու հարեվանները խղճում եյին ծերունի դոն Ռոդրիգոյին:

Սարսափելի լուրն ստանալու րոպեյից դոն Ռոդ-

րիգոն հանգստությունը կորցրեց: Արտասուք թափելը թողնելով կնոջն ու աղջիկներին՝ ինքն շտապեց գործի անցնել:

Յերկու շաբաթ դոն Ռոդրիգոն քաղաքը տակնուվրա արեց՝ փոխարինաբար փող ճարելու համար: Վաճառականները խղճում եյին նրան, բայց դժվարությամբ ու քիչ եյին տալիս: Միայն ազնիվ անունը դրամագլխի համար վատ ապահովություն է: Դոն Ռոդրիգոյին հաջողվեց հավաքել միայն հազար յերկու հարյուր ռեալ:

— Այս քիչ է, Լեոնորա,— ասաց նա կնոջը,— մեզ հարկավոր է կրկնակի, յեռակի:

Դոնյա Լեոնորայի պահարանում պահված եր յերկու աղջիկների օժիտը՝ ութ հարյուր ռեալ, վորը կուտակել եյին յերկար տարիների զրկանքների գնով:

Ծերունի իդալ'գոն նայում եր կնոջ վրա և չեր համարձակվում ասել այն, ինչ մտածում եյին յերկուսն էլ:

Դուռը բաղխեցին: Մեծ աղջիկը, Լուիսան, վոր վաղուց յերազում եր վանք քաշվել, յերևաց շեմքի վրա:

— Հայրի՛կ,— ասաց նա,— վերցրու իմ օժիտը և ուղարկիր յեղբայրներիս: Ինչի՞ս է նա պետք: Յես աշխարհիկ կյանքով չեմ ապրելու:

— Իմ օժիտն էլ վերցրու, հա՛յր,— լսվեց հեկեկանքից դողացող մի ձայն:

Գանդրահեր Անդրեան նայում եր քրոջ ուսերի հետևից: Նրա համար ապագայից հրաժարվելն ավելի դժվար եր: Աղջկա կլո՛ր այտերի փոսիկներն անհետացան և արցունքները սահեցին մուգ շագանակագույն աչքերից:

— Իմ օժիտն էլ վերցրու,— ասաց Անդրեան և խոսքը չվերջացնելով՝ ուժեղ փղձկաց ու փախավ իր սենյակը:

Բայց այդ փողն էլ քիչ եր:

Փրկանքի համար պետք եր ուղարկել յերեք հազար ռեալից վոչ պակաս:

Դոն Ռոդրիգոն ծախեց իր տունը, բանջարանոցը և տան մոտի փոքրիկ այգին, վաճառեց այծերը և տան աղքատիկ կահկարասին:

Վորդիներին փրկելու համար ամբողջ ընտանիքն աղքատ եր դառնում:

Յերբ ամեն ինչ ծախված եր և Ռոդրիգո Սերվանտեսն իր կնոջ հետ նստած եր այլևս իրեն չպատկանող տան շեմքին՝ յերկար ժամանակ իրեն զսպելուց հետո Դոնյա Լեոնորան գլուխը կախ գցեց ծնկներին և բարձրաձայն լաց յեղավ:

— Լաց մի՛ լինիր, Լեոնորա,— մեղմորեն ասաց դոն Ռոդրիգոն և շոյեց կնոջ գլուխը,— լաց մի՛ լինիր: Մեզ ախր միայն հարկավոր է դիմանալ մինչև Ռոդրիգոյի ու Միգելի վերադարձը:

Աֆրիկական նավահանգիստների հետ առևտուր անող մուրսիական վաճառականներն այս անգամ առանց սովորական արգելքների հաջողակ քամով նավարկեցին Ալիկանտեյից ուղիղ դեպի Ալժիր: Յերեք շաբաթ չանցած՝ Սերվանտեսը բանտում ստացավ յերեք հազար յերեք հարյուր ռեալ*):

Դրամը հենց ինքը տարավ Կաղին:

Կեղտոտ ու ցնցոտիներով ստրուկներին չեյին թողնում մտնել Դալի-Մամիի տունը, բացի այն դեպքերից, յերբ նրանք փող եյին բերում: Այժմ Միգելի առջև բոլոր դռները բացվեցին: Արաբ ծառան տարավ նրան մոզայիկապատ հատակ ունեցող ներքին բակով վարպետորեն կառուցված շատրվանի մոտով դեպի բուրումնալից կիսախավար ու մարմարածածկ զով սրահը:

Կաղը նստած եր ցածր բազմոցի բարձերի վրա:

— Յես ինձ և յեղբորս համար փող եմ բերել,— ասաց Սերվանտեսը վոսկիները մեկնելով հույնին:

Դալի-Մամին առանց շտապելու հաշվեց դրամը և աչքերը բարձրացրեց գերու վրա:

*)300 վոսկի դրամ

— Սա քո յեղբոր համար, — ասաց Դալի-Մամին, — իսկ քե՞զ համար:

— Դա յերկուսիս համար է, — գոռնալով ասաց Միքելը:

— Դու վատ ես հաշվում, — գլուխն օրորեց Դալի-Մամին և քմծիծաղը սահեց նրա դեմքի վրա: — Հինգ միայն քեզ համար յերկու անգամ ավելի յե պետք:

— Յերեք հարյուր ոսկին քի՞չ է յերկուսիս համար, — ասաց Սերվանտեսն ակամա մոտենալով կադին:

— Դու ինձ ձեռք ես առնում, կոնատ, — ասաց Դալի-Մամին, — դու ինձ հիմարի տեղ ես դնում: Թե՞ նրա համար եմ տասն չորս տարի ծովերում նավարկել և ֆրանկների նավերը խորտակել, վոր չգիտենամ ձիերի և մարդկանց գինը: Իմ աչքը դեռ վոչ մի անգամ չի սխալվել գերիների գնի մեջ: Թե՞ յես չեմ տեսնում, թե ինչպես ես արծվի պես անցնում մյուս ստրուկների միջով, ինչպես քեզ լսում են ծերերը, քեզանից վախենում են նույնիսկ ձեր իսպանական կրոնավորները, վորոնք նույնիսկ սատանայից վախ չունեն: Դու ուզում ես, վոր յես հավատամ, թե դուքս Սեսան և դոն Հուան Ավստրիացին գաղտնի նամակները հասարակ զինվո՞րին եյին տվել: Դու ուզում ես, վոր յես կալաբրիացի հասարակ նավաստուն հավասար մի բուռ վողորմելի ոսկով քեզ ազա՞տ արձակեմ: Դու այդ չե՛ս տեսնի, կոնա՛տ:

— Դու լավ վաճառական ես, Մամի՛, — խուլ արտասանեց Սերվանտեսը, — բայց քո հաշիվը ճիշտ չէ: Յես կամ շղթայակապ կփտեմ այստեղ, կամ կըփախչեմ:

— Բոլորն էլ այդպես են ասել և սխալվել են, — հեգնեց Մամին: — Դուք բոլորդ էլ աղքատ եք ձևանում: Յերեք հարյուր ոսկի տվողը հինգ հարյուրն էլ կտա:

Նա ձեռքը մեկնեց ծխամորճին և ավելի համար

նստեց, վոր ծխի: Կրակարանից կրակ վերցրեց, ներս քաշեց քաղցր ծուխը, նայեց Միքելին ու ցնցվեց:

Մի ձեռնանին սարսափելի տեսք ուներ: Վողորմելի, բոբիկ, ցնցոտիապատ, նա մոտենում էր սպառնալից: Նրա նիհար ու մերկ ձեռքերի մկանները ձգվել եյին և նույնիսկ անզոր կախված ձախը կարծես պատրաստ էր բարձրանալու և հարվածելու:

— Իմ աղքատ ընտանիքը, — ասաց գերին, — ամբողջ ունեցածը ծախել է և առանց ծածկի մնացել: Դու սրանից ավել վոչինչ չես ստանա, Մամի՛, բայց կարող ես շատ բան կորցնել:

Մամին շտապ կանչեց արաբ ծառային:

— Գնա՛, գնա՛, կոնա՛տ, հաշտ ձայնով ասաց Մամին: — Բաղի՛մ, ճանապարհ դիր սրան:

Յերբ Միքելի քայլերը լռեցին դռան հետևում՝ Մամին թեթևացած շունչ քաշեց:

— Կանչիր Յուսուֆին, Բաղի՛մ, — հոգնած ասաց ծառային:

Յերկու րոպե անց՝ Յուսուֆը կանգնած էր նրա առջև: Ծխամորճի փողից կապտավուն ծուխ էր բարձրանում: Մամին մատներով կրակը սեղմեց:

— Լսի՛ր, Յուսուֆ, — ասաց Մամին: — Այդ մի ձեռնանի իսպանացին վտանգավոր գերի յե... շատ վտանգավոր գերի...

Մամին դանդաղ ձեռքը մեկնեց ծխամորճին:

— Շղթայի՛ր նրան, — վերջացրեց նա:

— Ձեր հրամանը կատարված կլինի, տեր իմ, — խոնարհվեց Յուսուֆը, ձեռքը կրծքին խաչած:

— Յեվ տե՛ս, — շտապեց ավելացնել Մամին, — վորպեսզի վոչ մի քայլ պատերից դենը և վոչ մի խոսք ուրիշների հետ...

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը հասարակ ու համարձակ եր: Թվում եր, թե ամեն ինչ կանխամտածված ե, հաշված, բայց և այնպես հասարակ մի դեպք կամ անժամանակ այդտեղով անցած մի մարդ կարող եյին խորտակել ծրագիրը: Միջոցառումների կեսը հնարավոր եր, կեսը՝ վոչ, հիսուն տոկոսը— հիսունի դեմ:

Ծրագիրը պահանջում եր ժամանակ և խորամանկություն, խորամանկություն և աշխատանք, աշխատանք և հաջողություն:

Յերկաթյա շղթաները ծանր են ալժիրյան բանտերում, բայց բանտարկյալի համբերատար ձեռքերում գտնվող փոքրիկ պողպատե սղոցը— այդ շղթաներից ավելի համառ ե: Մեկ գիշեր, յերկու գիշեր, տասը գիշեր— և ընկնում են շղթաները: Անձայն քայլում են բոբիկ վոտները և մագլցում են բարձր պատի վրա: Յեվ խոր քնած են Դալի-Մամիի պահապանները—իրիկունը նրանք ճաշակել են արգելված քրիստոնեական գինին:

Սերվանտեսը գիշերները գնում եր քաղաքից դուրս և իր ծրագրին համապատասխան տեղ փնտրում: Նա թափառում եր ծովափին և նրա շրջակայքի ամենաամայի վայրերում:

Սերվանտեսին մի շարք պայմաններ եյին պետք— ծովի անմիջական մոտիկություն, մեկուսացած վայր, տասը—տասնհինգ հոգու համար յերկար ժամանակով մի վորևե ապաստան:

Արդեն հույսը կորցնելով՝ նա մեկ անգամ մեծ ճանապարհով հետ եր դառնում Ալժիր: Նա շտապում եր: Յերկնքի արևելյան մասն սկսել եր լուսավորվել և ծովի վրայով վազում եյին արշալույսի նախադուշակ գորշ կաթնագույն շերտեր: Հետևից լսվեց սմբակների դոփյուն: Դա գիշերային շրջագայությունից վերադարձող մեզվարների (քաղաքապահների) ջոկատն եր:



Ճանապարհն ուղիղ էր, առանց թեքվելու և պտույտների: Ճանապարհի յերկու կողմերում ձգված էին պարտեզների ցածր պատերը: Միգելը ցատկեց մի պատից և թաքնվեց:

Սմբակների դոփյունը մոտենում էր: Ցանկապատի մոտ ծառեր քիչ կային: Միգելը պարտեզ մըտավ, բարձրացավ հողաթմբի վրա և իջավ մյուս կողմը, վորպեսզի այնտեղ թաքնվի: Նա պառկեց թփերի մեջ և քիչ մնաց բացականչեր: Նրա վոտը ներս սահեց ինչ-վոր փոսի կամ քողարկված այրի մուտքի մեջ:

Նա հետ արեց թփերը, մտավ անցքից ներս մի կիսախավար ու փոքրիկ ստորերկրյա այր:

Ջոկատն անցավ: Միգելը կրկին բարձրացավ հողաթումբը, ու նայեց շուրջը: Անուշադրության մատնված, ըստ յերևույթին վաղուց անբնակելի, այս պարտեզը թեթև զառիվայրով բլրից իջնում էր ուղիղ դեպի ծովը: Ծովափի այս մասը ճանապարհից չէր յերևում: Նրան ծածկում էր բլուրը: Ափն ամայի էր և նույնիսկ ձկնորսական վոչ մի նավ չէր որորվում այնտեղ ծովափի քարերի մոտ: Իսկ այրը շատ լավ թաքստոց էր մի քանի մարդկանց համար... Սա ավելի հարմար էր, քան կիսավեր տունը, վոր ձգտում էր գտնել Միգելը:

Սերվանտեսը հետ ցատկեց ցանկապատից ու շտապեց քաղաք, վորպեսզի մինչև արևածագը հասնի բանտ, իր տեղը: Բայց ցանկապատի սողանցքը, պարտեզը, ծովափի այդ մասը և այրը նա լավ պահեց մտքում:

Նավարրացի ծեր ստրուկ Հուան Մորերոն առավոտները շատ վաղ էր վեր կենում և ամբողջ որն աշխատում էր: Նրա տերը՝ դադի*) Հյուսեյինը շատ գործ էր տվել նրան— մաքրել ամբողջ ծառուղիները, փորել ծաղկաթմբերը և ծաղիկներ տնկել նրա հին, վաղուց փշերով ծածկված, քաղաքից դուրս ծովի ափին գտնվող պարտեզում:

*) Դադի—դատավոր:

Իր չորս կանանց դադին շոգ ժամանակ տեղափոխում էր քաղաքից դուրս գտնվող վաղուց թողնված տունը և ցանկանում էր յերկու շաբաթվա ընթացքում ամեն ինչ պատրաստ լիներ: Իսկ գործ դեռ շատ կար:

Այդ առավոտ ծերուկն աշխատում էր ժամը հընգից: Նա ծովափին հավաքում էր սպիտակ մանր ավազ, լցնում սայլակը և կիտում էր պարտեզի մեջտեղը, վորպեսզի չորանալուց հետո նրանով ծածկի քարքարոտ ծառուղիները: Հյուսեյինի կանանց քնքուշ վոտները սովոր չէյին մերկ քարերի վրա ման գալու:

Հանկարծ մեկը ձայն տվեց ծերուկին: Հուանը գլուխը բարձրացրեց: Ինչ վոր մի նիհար մարդ, պատառոտված թիկնոցով, ձախ թևը փաթաթած գալիս էր ուղիղ դեպի ինքը: Հուանը վախեցավ: Ո՞վ կարող էր լինել այս վաղ ժամին:

— Մի՛ վախենար, բարեկամ,— ասաց մարդը,— լավ կլինի, յեթե խեղճ ճամբորդիս մի բաժակ ջուր տաս:

— Իսկ ո՞վ ես դու — հարցրեց Հուանը:

— Սերվանտես Սաավեդրան եմ, նույնպիսի բարի իսպանացի և դժբախտ գերի, ինչպես և դու: Թույլ տուր հանգստանամ քո պարտեզում և յես կպատասխանեմ քո բոլոր հարցերին:

Հուանը ջուր բերեց: Միգելը նստեց քարի վրա և պատմեց ծերուկին իր մասին: Հուանն էլ պատմեց իր կարճ պատմությունը:

Նա արդեն տասնութ տարի գերի յե, գուցե և ավելի, լավ չի հիշում: Տանը Նավարրայում մնացել են կինը և չորս վորդիները, բայց նրանք կենդանի՞ յեն արդյոք՝ ինքը չգիտե: Իր առաջին տերը՝ մի ծովահեն՝ ծախեց իրեն մի հրեա վաճառականի, իսկ վաճառականն էլ՝ դատավոր Հյուսեյինին, իր այժմյան տիրոջը: Նա աշխատում է վորպես պարտիզպան— դա իր արհեստն է: Նա տանն էլ, Նավարրայում, նույն գործով էր զբաղվում...

— Տանը, Նավարրայում,— ինքն իրեն ընդհատեց Հուանը և մտածմունքի մեջ ընկավ:

— Տասնո՛ւթը տարի—կրկնեց Միգելը:—Յեվ դու վոչ մի անգամ չե՞ս փորձել փախչել:

— Չորս անգամ փորձել եմ,—ասաց ծերուկը:

Յեվ նա Միգելին ցույց տվեց ձախ ձեռքի կտրված մատները, ճակատի ու այտերի դրոշմը և գավազանի հարվածներից առաջացած մեջքի սպիները:

— Լսի՛ր, ծերո՛ւկ,— հանկարծ վորոշելով ասաց Սերվանտեսը:— Յես մի ծրագիր ունեմ, հաստատ ծրագիր, շախմատի պես անսխալ: Արդյոք ուզո՞ւմ ես ոգնել մեզ:

Յեվ նա պարտիզպանին պատմեց փախուստի իր ծրագիրը:

Ուղարկված փողով կազատվի իր յեղբայր Ռոդրիգոն: Նա մի յերկու ամսից կճանապարհվի: Նրա հետ գնում ե Վիանը, փրկանքով ազատված մի ուրիշ գերի, վոր Մայորկա կղզուց ե, փորձված ծովագնաց և հավատարիմ մարդ: Ռոդրիգոն Բարսելոնում կամ Վալենսիայում մի նավ ձեռք կբերի, դրա համար նա գործ կդնի իր ունեցած բոլոր կապերը, կարիք յեղած դեպքում վաճառականներից փոխարինաբար փող կվերցնի և Վիանի հետ միասին կվերադառնա ալժիրյան ափերը: Նրանք տեղական լեզվին ու բոլոր պայմաններին ծանոթ են և, յեթե նրանց վրա ուշադրություն դարձնեն, նրանք հեշտությամբ կարող են տեղական ձկնորսներ ձևանալ:

Իսկ պայմանավորված տեղում, ծովափին, նրանց կսպասի գերիների մի ամբողջ խումբ, տասնհինգ մարդ: Վորպեսզի իրարանցում չառաջանա, Սերվանտեսն այդ յերկու—յերեք ամսվա ընթացքում մեկ—մեկ կամ յերկու—յերկու մարդ բանտից կփոխադրի ծովափի մի ապահով տեղ: Այդտեղ նրանք կսպասեն նավին:

— Մեզ հարկավոր ե միայն հարմար տեղ,—վերջացրեց Սերվանտեսը,— և այդպիսին կա քո պարտեզում:

— Վորտեղ,— արագ հարցրեց Հուանը:

— Բլրի լանջի այրը:

— Ըհը՛,— ասաց Հուանը,— բայց նա փոքր ե, պետք ե լայնացնել:

— Դրանով պետք ե...

— Յես զբաղվեմ,—վերջացրեց ծերուկը,—յես այդ կանեմ:

Հուանի տիրոջ՝ ղադի Հյուսեյինի ուրախության չափ չկար: Այնքան գոհ եր նա իր պարտիզպանից: Առավոտից մինչև իրիկուն ծերուկը, առանց ոգնական խնդրելու, աշխատում եր պարտեզում, փորում եր, ավազ եր կրում, ցանկապատերը նորոգում, բահն ու դույլերը չխկչխկացնում: Գործն ընթանում եր արագ: Պարտեզն անճանաչելի յեր դառնում: Ճշմարիտ վոր այդ նավարրացին մի գյուտ եր և արժեր իրեն համար վճարած փողին:

Ծերունի ղադին չգիտեր, վոր Հուանը նրանից թաքուն ավելի շատ գործ եր հասցնում: Հյուսեյինը չեր կասկածում, վոր այն ժամերին, յերբ ինքը մեկնում եր քաղաք Ալժիրի քաղաքացիների դատը տեսնելու, նրա պարտիզպանը կոշտացնում եր ձեռքերը փորելով ու խորացնելով պարտեզի գետնափոր այրը, վորի գոյության մասին տերն ինքը վաղուց արդեն մոռացել եր:

—Մահիցս առաջ մեկ անգամ ել փորձեմ բախտս,— մտածում եր ծերուկը, թքոտելով բռան մեջ:— Կարող ե պատահել, վոր իսկապես վորդիներս դեռ չեն մոռացել իրենց հորը և սպասում են, վոր նա տուն վերադառնա:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

ԴՈՄԻՆԻԿՅԱՆ ԿՐՈՆԱՎՈՐԸ

Դալի-Մամին քունը կորցրեց: Անբացատրելի համաճարակ ընկավ նրա գերիների մեջ: Նրանք անհետանում եյին անաղմուկ, անհասկանալի կերպով, համա-

րյա ամեն գիշեր, անհետանում էյին առանց հետք անգամ թողնելու: Հաջորդ օրը վոչ մի հետք, վոչ դիակ և վոչ էլ նշան... Հարցաքննությունները, դանակոծությունները—վոչ մի բան չեր ոգնում: Վոչ վոք վոչինչ չգիտեր: Ցեվ անհետանում էյին կարծես ընտրովի, ամենից թանգարժեքները:

Դալի-Մամին վագրի պես անց ու դարձ եր անում եր գորգերի վրա և կատաղությամբ հաշվում վնասները:

Հուան Ռամիրես — յերկու հարյուր վոսկի:
Լուիս Կիխադա— չորս հարյուր:
Դոմինգո դե Տորրես — հարյուր:
Պեդրո Կարմիլիանո — հարյուր:
Լուիս դե Գարսիա — յերեք հարյուր:
Թոմաս Մերկադո — հարյուր:

Հազարից ավելի վոսկի կորավ, չգիտես թե ուր:

Մամին դանակոծեց յերկու պահապաններին մինչև նրանց կիսամեռ լինելը, բայց հանցավորներին չգտավ:

Դալի-Մամին մի բանում հաստատ համոզված եր, վոր ըմբոստ, նախորդ փախուստը նախաձեռնող մի ձեռնանի հպարտ Սերվանտեսը այս անգամ մասնակից չեր: Նա նույնիսկ ուրախ եր դարձել, պահապանների հետ կատակներ եր անում, սովորում եր մավրիտանական մի լարանոց գիթար նվագել, չարունակ ինչ-վոր բան եր յերգում և ցերեկները քնում եր շատ...

Շատ եր քնում— այդ լավ նշան եր: Ճիշտ հատկանիշ, վոր մարդը հանգստացել ե:

Մամին այնքան գոհ եր Սերվանտեսից, վոր նույնիսկ թույլ տվեց հանել նրա շղթաները և յերբեմն էլ ցերեկվա ժամերին դուրս թողնել բանտից:

Այսպիսով Սերվանտեսը, վերջապես, ցերեկները դուրս գալու ազատություն ձեռք բերեց: Իսկ դուրս գալն անհրաժեշտ եր: Այրում նստած ութ ընկերներին հարկավոր եր ուտելիք հայթայթել:

Այն, ինչ Միգելը կարողանում եր խնայել իր ազ-

քատիկ բաժնից, կամ ձեռք բերել շուկայում, տանում եր այդ գերիներին:

Ալժիրում գերիների հեռագնումը բազմաթիվ ձևականությունների հետ եր կապված: Ռոդրիգոյի մեկնելուն մնում եր մեկ և կես ամիս վոչ պակաս: Այդ ժամանակամիջոցում պետք եր հաջողեցնել մնացած գերիներին ևս այլ փոխադրել, ուտելու պաշար հավաքել և նրանց միանալով սպասել նավի գալուն:

Գարուն եր: Արշավանքների շրջան: Ծովում վխտում էյին ծովահենների նավերը:

Համարյա ամեն օր նավահանգստից թնդանոթների վորոտումներով մեկնում էյին զարդարված առագաստանավեր և պարծենկոտ ավազակ նավապետներն ավելին խունված քաղաքացիներին հարուստ ավար էյին խոստանում:

Այդ օրերը Սերվանտեսը, ոգտվելով իրեն տրված ազատությունից, շատ եր ման գալիս Ալժիրի փողոցներով և դիտում այդ զարմանալի քաղաքը:

Նրա մշտական բնակիչները— խաղաղ արաբները— վաղուց յենթարկվել էյին թուրքերին: Քաղաքի կյանքին ուղղություն տվողը ծովահեններն էյին:

Միջերկրականի բոլոր ափերից փախած մարդիկ,— հույները, թունիսցիները, ալեքսանդրիացիները, իտալացիները, իսպանացիները, սիցիլիացիները,— կազմում էյին բնակչության կեսը: Դրանց մեծամասնությունը յեվրոպացի փախստականներ էյին, «ռենեգատներ», ինչպես անվանում էյին նրանց: Սենյորից տուժած գյուղացին, իշխանություններին չենթարկվող նավաստին, տուրքերից ճնշված քաղաքացին՝ ընդունում էյին իսլամություն և փախչում այստեղ, կիսավայրենի աֆրիկական ծովափի այս ազատ նավահանգիստը:

Թուրքերը ժամանակին հասկացան և իրենց հովանավորության տակ վերցրին այդ ավազակային ազատ բանը՝ պարզելով նրա վրա իսլամական կանաչ

դրոշակը և Թուրքական սուլթանը յերեք տարին մեկ անգամ ուղարկում եր այնտեղ իր փոխարքա փաշային:

Այս քաղաքը յերբեք հանգիստ չի յեղել: Շարունակ ավազակները պատրաստ են յեղել ապստամբելու Թուրքական փաշայի դեմ, արաբները՝ յերկիրն ավերող յենիչերիների զորքերի դեմ և յեվրոպացի ստրուկները— ավազակների, արաբների ու Թուրքերի դեմ:

Այս ավազակային բնում ամենաճնշված ստրուկները յեվրոպացի գերիներն եյին: Նրանց աշխատանքով եր պահվում ամբողջ քաղաքը: Նրանք սայլակներ եյին քաշում, ջուր եյին կրում, յերեխաներին խնամում, պատ շարում, ջրանցքներ փորում և Թիավարում նավերի վրա: Քաղաքի հարստությունը նրանցով եր ձեռք բերվում: Նրանց Թիվն այստեղ մոտ քսան հազար եր — ֆրանսիացիներ, իսպանացիներ, իտալացիներ և հույներ:

Ձնայած ավազակային արշավանքներին՝ Ալժիրն այդ ժամանակներն առևտրական յեռուն կենտրոն եր: Նավահանգստում կանգնած եյին անգլիական նավեր արճիճի և պղնձի բեռով, իսպանական նավեր՝ գինով, աղով և մարգարիտներով, ֆրանսիական՝ վառոդով, ոճառով և զենքով, ջենովական՝ Թավիշով և գույնզգույն կտորեղեններով, վենետիկյան՝ քանդակազարդ արկղիկներով, ապակիներով ու հայելիներով:

Յեվրոպայի և Աֆրիկայի, Արևմուտքի և Լեվանտի*) միջև գտնվող փոխանակման այս կետն եյին լցվում յերկրի հարստությունները Միջերկրական ծովի բոլոր ծայրերից: Առևտուրը բոլորին միավորում եր Ալժիրում, յեվրոպական վաճառականների Թիվը պակաս չեր տեղական արաբ վաճառականների Թվից: Փաշան Իսպանիայի և Իտալիայի վաճառականներին հյուրասիրաբար Թույլ եր տալիս մտնել նավահանգիստ: Բայց նավահանգստում նավերի կանգնած ժամանակ՝ յեվրոպական առևտրական նավերի ղեկն ուստա-

*) Լեվանտ—Մերձավոր արևելքի Միջերկրականի ափերը:

պաստաները հանվում եյին, հակառակ դեպքում քրիստոնյա գերիները փախուստի համար կարող եյին օգտվել իրենց հայրենակիցների նավերից:

Մի անգամ Սերվանտեսը դեպի ծով տանող պառիվայր աստիճանավոր փողոցներով իջնելիս նավահանգստում մեծ յեռուզեռ նկատեց: Հոծ բազմություն եր կանգնած ծովափին:

— Գալիմա՛, գալիմա՛*)— բացականչում եր ամբոխը և բարձրացնում ձեռքերը:

Ավազակային մի քանի նավեր մտնում եյին նավահանգիստ: Նրանցից մեկը իր հետևից քարշ եր տալիս իսպանական ջարդված մի նավ, նավախելը դեպի առաջ դարձրած: Նրա դրոշակները ջրի յերեսին քարշ եյին գալիս՝ իբրև գերի վերցրած նավի ստորացման նշան:

Խարիսխ գցելուց հետո, ծովահեններն ամենից առաջ հավաքեցին Թիերը և տարան ծովափնյա պահեստ: Այդ արվում եր նրա համար, վոր գերի Թիավարները՝ նավը դատարկելու ժամանակ չօգտվեն Թիերից և բոլոր Թիերով Թիավարելով չփախչեն դեպի բաց ծովը:

Նոր բռնած գերիներին սկսեցին ափ հանել:

— Մե՛ծ ավար, լա՛վ ավար,— բացականչում եյին կանայք նավամատույցում:— Ալլահ ակբար*): Մեր ամուսինները լավ ավար են բերում:

— Հարյուր քսան... հարյուր յոթանասուն... յերկու հարյուր յերեսուն...,— հաշվում եր ամբոխը:

Յերկու հարյուր ութսուն մարդ: Իսկապես վոր չտեսնված ավար եր:

Գերիներին խմբերի բաժանեցին և առաջ քշեցին: Սերվանտեսը գնում եր նրանց մոտով ու դիտում գերիներին:

Առաջին խմբում, ծայրից քայլում եր միջահասակ տարիքավոր մի մարդ, մավրի պես չխուզած մորու-

*) Գալիմա—ծովային ավար:

**) Ալլահը մեծ է:

քով և գիտնականի մուգ հագուստով: Այդ մարդու վզին կապտավուն դեռ չլավացած վերք կար, կախաղանի օղակի հետքի նման: Այդ մարդու դեմքը Միգելին արտասովոր թվաց և նա քայլեց նրա մոտով:

Սպի ունեցող մարդը դանդաղ էր քայլում և հաճախ կանգ առնում. նրա վոտքերը դավաճանում եյին իրեն:

— Շտապի՛ր,— և վերակացուն գավազանով հարվածեց նրա ուսերին: Իսպանացին արագացրեց քայլերը:

— Դոն Անտո՛նիո, դոն Անտո՛նիո, սպասեցե՛ք. յես վախենում եմ հետ մնալ ձեզնից:— Դարչնագույն փարաջայով հաստ կրոնավորը քրտնած ու կարմրած դեմքով հետևում էր տարիքավորին:— Մի՛ շտապեք այդչափ, դոն Անտոնիո:

— Առաջ, ազատության մեջ դու այնքան չեյիր ձգտում ինձ մոտ լինելու, հայր Սիմոնիո,— հեգնանքով պատասխանեց դոն Անտոնիոն:— Առաջ դու իմ մասին ուրիշ բաներ եյիր խոսում:

— Այդ յես չեյի, այլ հայր Բլանկոն,— գլուխը թափահարեց հաստ կրոնավորը:— Այժմ արդեն յես ձեզնից չեմ բաժանվի, դոն Անտոնիո: Յերբ Իսպանիայում իմանան, վոր դոկտոր Անտոնիո Սոդան գերի յե ընկել, ձեր բարեկամները, վորոնք շատ շատ են,— դրամ կհավաքեն և ձեզ կփրկեն: Գուցե այն ժամանակ ինձ էլ, խոնարհ կրոնավորիս, հաջողվի ձեզ հետ միասին հայրենիք վերադառնալ:

Դոկտոր Անտոնիո Սոդա՛: Նա ինքը, վորին կենդանի իջեցրին գարոտայից*): Միգելը լսել էր Սոդայի պատմությունը: Դոկտորը Սարագոսայում հանդես յեկավ գիտական դիսպուտին: «Աուտոդաֆեն Իսպանիայի նախատինքն է», ասաց դոկտոր Սոդան: Նրանք բարձրացրին նրան պրկոցի վրա (տանջելու գործիք), գլխիվայր կախեցին: Ապա դատապարտեցին գարոտա-

*) Գարոտա—խեղդամահ անելու յերկաթյա օղակ: Ծ. Թ.

յի— յերկաթյա օղակով խեղդելու: Գարոտայի դատապարտում եյին նրանց, ովքեր անարժան եյին համարվում խարույկի վրա այրվելու:

Անտոնիո Սոդային կենդանի իջեցրին գարոտայից: Գտնվեցին բարեկամներ, վորոնք կաշառեցին դահիճներին: Սոդան փախավ և արդեն շատ տարիներ ապրում էր Իտալիայում: Ի՞նչպես նա գերի ընկավ Աֆրիկայի այս վայրենի ափը:

— Այդ վոչ թե յես, հայր Բլանկոն գրպարտեց ձեզ— վողորմագին կրկնում էր հաստ կրոնավորը:— Յես այլևս յերբեք չեմ հավատա հայր Բլանկոյին: Նա ինձ համոզում էր, վոր իրենից թալիսման գնեմ և ասաց, ով վոր կրի այդ թալիսմանը, նրան չի դիպչի վոչ մի հարված— վոչ փայտի, վոչ յերկաթի և վոչ էլ պողպատի. բայց հենց միայն այսոր ինձ ծեծել են չորս անգամ և վախենում եմ....

Կարծես հասկանալով կրոնավորի խոսքերը՝ մոտիկ յենիչերին հարվածեց հրացանի կոթով նրա մեջքին:

— Լռի՛ր, պապ*),— բղավեց նա:— Յերբ չղթայակապ կնստես, այն ժամանակ շատ կխոսես:

Հայր Սիմոնիոն նեղացած լռեց: Բայց մի րոպեյից նա կրկին մրթմրթաց.

— Բլանկոն մեզ հետ միևնույն խմբումն է, սենյոր: Տեսնում եք, նա, ահա, այնտեղ է, վերջին շարքերում: Նրան նայելիս, իսկապես կարելի յե կարծել, վոր նա արդեն փրկվել է այստեղ, յերկրիս վրա, վոր նրա բոլոր մեղքերին արդեն թողություն է արված:

Սերվանտեսը հետ նայեց:

Վերջին շարքերում քայլում էր բարձրահասակ, թիկնավետ, ուռած կանաչավուն դեմքով և խորը փոս ընկած աչքերով մի կրոնավոր: Նա գոտուց կախված համրիչն էր գցում և աչքերը վեր հառած անընդհատ գունատ շրթունքներն էր շարժում — յերևի աղոթում էր:

*) Թուրքերը բոլոր կրոնավորներին պապ եյին անվանում:

Նրա ձախ հիվանդ աչքը կիսով չափ ծածկված եր կախ ընկած կոպով և դրանից թվում եր, թե նրա մեկ աչքը յերկինք ե նայում, իսկ մյուսը՝ գետին: Սերվանտեսը դարչնագույն Փարաջայից ճանաչեց, վոր նա դոմինիկյան կրոնավոր ե:

Գերիների խումբը շուտով թեքվեց կողքի նեղ փողոցը: Պահապանները Միգելին հրեցին հետ, հետո ամբոխը հավաքվեց ու բռնեց փողոցի մուտքը և Միգելին վերջնականապես անջատեցին: Նա նույնիսկ չկարողացավ հետևել, թե ուր գնաց գերիների այդ խումբը:

Դ

Նա յերկու որ դես ու դեն ընկնելով՝ բոլորին հարց ու փորձ եր անում, թե վոր տիրոջ ձեռքն ընկավ իսպանական նավից իջեցրած ծերունի գիտնական դոկտոր Սոզան: Վոչ վոք վոչ մի բան չկարողացավ ասել նրան:

Շուտով վրա հասան ուրիշ հոգսեր: Գերիները նստած եյին այրում: Նրանց պետք եր ուտելիք հայթայթել և Սերվանտեսը մոռացավ Սոզային:

Մի անգամ նա շուկա յեր գնացել գերիների համար ուտելեղեն գնելու: Շուկան աղմկալից եր: Իրենց խանութների շեմքերին նստած ալեոր մորուքներով արաբները կանչում եյին գնորդներին: Նրանք առաջարկում եյին մեղր, ծխախոտ, գորգեր, գունավոր մաշիկներ, կտորեղեն: Բերբեր կանայք ուղղակի գետնին եյին դարսում բանջարեղենի, ձմերուկների և թարմ արմավների կույտերը: Աննկատելի կերպով Սերվանտեսը հասավ Բադիստան, շուկայի ցանկապատած մասը, վորտեղ գերիներ եյին վաճառում: Այստեղ հանդարտ եր: Տարբեր տերերի գերիների մի քանի խմբեր նստած եյին գետնին:

Թուրք միջնորդը գերիներին մեկ-մեկ կանչում եր և ինչպես ձիեր քշում եր նրանց մի բաց տեղ, գովելով նրանց արժանիքները և բարձրացնելով գինը:

Թուրքն այժմ դուրս եր բերել ջարդված վոտքերով մի նիհար, հյուծված իտալացի: Թուրքը նրան

ստիպում եր ցատկել փայտի վրայից, ցույց տալ ատամները և ծանրություններ բարձրացնել:

— Ահա Ահմեդ-Ալիի խմբի ամենալավ գերին,— յերգելով ասում եր Թուրքը:— Սրա վոտքերը սյուների պես պինդ են, իսկ մեջքը՝ մարմարե կամար ե: Լեռնային այծը վազքի մեջ սրան չի հասնի, իսկ ատամներով կկտրատի ձեռքի հաստությամբ ջուտի պարանը:

— Վո՞րքան,— կանչում եյին գնորդներն ամբոխի միջից:

— Հիսուն վոսկի, և այդ ձրի յե, յերդվում եմ ալլահով:

— Քսան,— առաջարկում եր գնորդը, կասկածով շոշափելով իտալացու մկանները:

Նրանք յերկար բղավում եյին, կրծքներին եյին խփում, ալլահին հիշատակում և համաձայնում յերեսունի վրա:

Վեց իտալացի այնպես ծախվեցին արաբական գյուղերի դաշտային աշխատանքների համար: Արաբները լծեցին գերիներին յեզների տեղ:

Չորս իսպանացու տարան նավերի վրա թիավարելու:

Յերկու գերի ել գնեց մի հարուստ Թուրք՝ իր ձիերին խնամելու համար:

Մնում եյին մի քանի գերի հոգևորական զգեստներով: Գնորդների մեջ շարժում առաջացավ:

Կենդանի կապիտալը— ստրուկները— ամենալավ տոկոսներն են բերում: Հարկավոր եր միայն խեղճ կերպարանքի տակ ճանաչել նշանավոր կամ հարուստ մարդուն: Այն ժամանակ նրա համար յեռակի փրկանք կարելի յեր ստանալ և արդարացնել նրա վրա կատարած ծախսերը:

Վերակացուն մտրակելով դուրս բերեց հաստ կրոնավորին:

— Ահա Սարագոսայի ականավոր յեպիսկոպոսը,— հանդիսավոր հայտարարեց միջնորդը:— Նա կառա-

վարում է տասներկու մայր տաճարներ, և ինքը Թագավորը Հռոմ այցելելիս նրա մոտ է իջնում:

— Ցես Սան Դոմինգո վանքի խղճուկ լուսարարըն եմ,— խեղդված ձայնով բացականչեց կրոնավորը:— Ցես Թույլ եմ և հիվանդ և իմ հայրենիքում վոչ վոք չունեմ, վոր ինձ համար հինգ ռեալից ավելի փրկանք ուղարկի...

Կրոնավորը շուռ յեկավ և Միգելը ճանաչեց հենց այն հաստլիկին, վորը դոկտոր Սոզայի հետ նույն խմբումն եր:

Միգելը մոտեցավ վերակացուին և հարցրեց, թե ո՞ւմ է պատկանում գերիների այս խումբը:

— Ալի Քաուրին, Թլեմսենացի քաջ ծովահեն Ալի Քաուրին— պատասխանեց վերակացուն:

Միգելին այդքանը բավական եր գիտենալ: Ալի Քաուրն Ալժիրում հայտնի յեր:

Հենց նույն օրը Միգելը գնաց նրա մոտ:

Ալի Քաուրիմեծ բակում աղմուկ կար: Գերիներին բռնի բակի կենտրոնն եյին քաշում և շրջանաձև նստեցնում գետնին: Նրանք շատ եյին— հավանորեն, ինչ վոր հանդիսավոր դեպքի առթիվ այստեղ գերիներ եյին բերել նաև ուրիշ բակերից: Այստեղ եր նաև հաստ Սիմոնիան, վորին, հավանորեն, չեր հաջողվել ծախել: Ցերկարահասակ Բլանկոն չեր յերևում: Չեր յերևում նույնպես դոկտոր Սոզան:

Գերիների դալուկ յերեսներին Սերվանտեսը կարդում եր բութ հնազանդություն: Բակում սպասում եյին մոլլային, մուսուլմանների հոգևորականին: Նըրանց, վորոնց չեր հաջողվել ձեռնտու պայմանով վաճառել, տերերը փորձում եյին մահմեդական դարձնել:

— Ո՞ւր է գերի Անտոնիո Սոզան— հարցրեց Սերվանտեսը պահապանին:

Պահապանը լուռ եր:

Միգելը հանեց հինգ ասպր և դրեց սալահատակին պահապանի վոտքերի մոտ: Թուրքը վոտքի բութ մատով փողը մոտ քաշեց իրեն: Արծաթյա դրամը վայրկենապես անհետացավ լայն շալվարի ծալքերում: Թուրքը վեր կացավ, վեր քաշեց շալվարը և Միգելին տարավ հետևի բակը:

Հետևի բակում պահապանը Միգելին տարավ մի ցածր շենքի մոտ, շատ նման հարթ կտուրով քարաշեն նկուղի:

— Ահա,— անտարբեր ասաց Թուրքը, ցույց տալով նեղ պատուհանը:

— Դո՛ն Անտոնիո,— կանչեց Սերվանտեսը՝ մոտենալով պատուհանին:— Դո՛ն Անտոնիո:

— Ո՞վ է կանչում ինձ,— լսվեց մի Թույլ ձայն:

— Այստեղի սորուկ, խսպանացի Սերվանտես Սաավեդրան: Դո՛ն Անտոնիո, ինչո՞ւ համար են ձեզ մազմորա*) նստացրել:

— Ինձ յեպիսկոպոսի տեղ ընդունեցին և հազար վոսկի փրկանք նշանակեցին,— ասաց Սոզան:— Ապաստիճանս բարձրացրին և հայտարարեցին կարդինալ ու իսպանական Թագուհու գլխավոր խորհրդական: Հիմա ինձ փրկելու համար յերկու հազար վոսկի յեպետք:

Սոզան շղթան զրնգացնելով կամեցավ լուսամուտին մոտ սողալ, բայց հառաչեց և նստած մնաց տեղում:

— Այդ նշանակում է, վոր յես մինչև իմ կյանքի վերջը նստած կմնամ այս փոսում:

Դիտելով զնդանի ներսը՝ Սերվանտեսը մԹան մեջ նկատեց Սոզայի գունատ դեմքը, շղԹայակապ վոտքերը և յերկաԹյա վզնոցը:

— Դոկտոր Սոզա,— ասաց նա կխաշշշուկով,— մենք ընկերներով փախչելու ծրագիր ունենք: Փախչենք միասին:

Դոկտոր Սոզան լուռ ցույց տվեց իր շղԹաները, ուռած վոտները, ախտոր մորուքը և դողացող ձեռքերը:

*) Մազմորա Ալժիրում անվանում եյին ստորերկրյա ներքնատները, ուր տանջվում եյին առանձնապես կարևոր գերիները:

— Ցես ձեզ կօգնեմ,— ասաց Սերվանտեսը:— Մենք բոլորս էլ կօգնենք ձեզ:

Սոզան լուռ էր, ապա, կարծես սթափվելով, բարձրացրեց գլուխը:

— Իմ փախչելն անօգուտ չէ,— ասաց Սոզան,— յեթե յես վոտք դնեմ իսպանական հողը, ինձ կբռնեն և դարձյալ այսպիսի մի զնդան կգցեն: Դու տեսա՞ր գերիների մեջ դեղնագույն դեմքով կրոնավորին: Դա սուրբ ինկվիզիցիայի կոմիսար Բլանկո դե լա Պազն է: Նա արդեն իմ մասին ամբաստանագիր է պատրաստել: Թերևս իմ բախտից է, որ ծովահենները գրավեցին մեր նավը... Այս փոսն այստեղ, արաբ աղայի ձեռքից ստացած մի կտոր հացն ավելի լավ է, քան հայրենիքում խարույկն ու գարոտան:

— Մի՞թե Իսպանիայում ոչինչ չի փոխվել,— հարցրեց Սերվանտեսը:

— Իսպանիան մի մեծ բանտ է,— գլուխն օրորեց Սոզան:— Ո՛չ, Սերվանտես, ավելի լավ է, թողեք ինձ իմ զնդանում: Իսկ յեթե քեզ և քո ընկերներին պետք լինի շատ բան տեսած մարդու զգուշավոր խորհուրդը, ինձ մոտ յեկեք և յես միշտ էլ կօգնեմ ձեզ:

Սերվանտեսը հուզված վերադառնում էր մեծ բակի միջով: Կանաչ չալմայով սպիտակամորուս մոլլան ծալապատիկ նստած էր գորգի վրա գերիների առաջ: Մի ուրիշ ավելի յերիտասարդ ու ճարպիկ, ցանցառ մորուքով ու անհանգիստ աչքերով մոլլա կանգնած էր նրա կողքին:

— Մեր հավատքն ավելի լավ է ձեր պիղծ հավատից,— արագ գոռում էր յերիտասարդը,— մեր Ալլահը ճշմարիտ աստված է, մեծ աստված է, արդարադատ աստված է: Ով հավատում է Ալլահին, նա հաղթում է: Իսլամի զավակները նվաճեցին Ասիան, Արաբիան, Յեգիպտոսն ու Ալեքսանդրիան, Ալժիրն ու Թունիսը և Տրիպոլիսը.. ով հավատում է Ալլահին, առավոտյան և յերեկոյան աղոթքն է անում, լսում է մոլլային ու ղազիին և չի խմում գինի, նա ար-

ժանի կլինի արդարի կոչման և մահից հետո դրախտ կգնա: Իսկ ով կդավանի ձեր շան հավատը, նա շան պես էլ կսատկի և կփտի գերեզմանի մեջ:

— Թքում են: Այդ նրանցն է շան հավատ,— մռայլ ասաց իր հարևանին հարբեցողի կարմիր քթով գերին:— Դա ի՞նչ հավատ է, յեթե չի կարելի գինի խմել...

— Բոլորդ լսեցեք,— կանչեց մոլլան,— բոլորդ լսեցեք Ալլահի և նրա մարգարե Մուհամմեդի խոսքերը:

Նա մի ձեռքով բարձրացրեց հաստ կաշեկազմ գիրքը:

— Լսեցեք բոլորդ ղուրանի, հայտնության գրքի խոսքերը:

Մյուս ձեռքով մոլլան ձեռնածուի պես սպասավորի ձեռքից խլեց փայտե գրակալը ու դրեց գետնին ծեր մոլլայի առաջ: Կրկնակի տախտակը չխկալով բացվեց: Նա գիրքը տեղավորեց նրա վրա:

— Բիսմիլլահ ռահմանի—ռահիմ,— սպառնալից բակլսեց ծերը:

Պահապաններն ավելի կիպ մոտեցան: Գերիները չարժվեցին: Նրանք գիտեյին, որ ղուրանի խաղաղ ընթերցումը հաճախ վերջանում է մտրակի հարվածներով:

Միգելն չտապում էր: Նա այրում թաքնված գերիներին տանում էր յերկու թարմ հաց, մի փոքր կուժ ձեթ և մի կապ սոխ: Միգելն այլևս չսպասեց, թե հետո ի՞նչ է լինելու և հեռացավ Ալի Թառուրի բակից:

Արդեն գիշերը վրա յեր հասել: Ալժիրում շուտ էր մթնում, ինչպես և հարավում ամեն տեղ: Կազբայի լեռնային թաղամասի ծուռ նրբանցքներից մեկում Սերվանտեսը տեսավ դոմինիկյան կրոնավոր Բլանկոյի յերկար կերպարանքը: Հայտնի չէ, թե ինչպես և յե՞րբ էր Բլանկոն գնվել գերությունից, բայց ակնհայտ էր, որ նա ազատ էր և գանձապահի պայուսակով

ղաղտագողի գնում էր դեպի Սան-Պեդրո մատուռը, Ալժիրի միակ քրիստոնեական աղոթատունը:

— Ի՞նչպես հաջողվեց քեզ այդպես շուտ ձեռք բերել քո փրկանքը, հայր իմ,— չհամբերելով հարցրեց Սերվանտեսը կրոնավորին:

Բլանկոն նայեց նրան իր անգույն աչքերով: Անորոշ յերկյուղն ու վրդովմունքն առկայծեցին նրանց մեջ:

— Յես քեզ չեմ ճանաչում, գերի՛,— չոր պատասխանեց Բլանկոն:

— Իսկ յես քեզ արդեն ճանաչում եմ, հայր սուրբ,—հեգնանքով ասաց Սերվանտեսը:— Դու Բլանկո դե լա Պասն ես, դու յեկար դոկտոր Սոզայի հետ, իսպանական «Սան-Պաբլո» նավով: Կարող եմ հայտնել քեզ և իմ անունը — Միգել Սերվանտես:

Բլանկոն անտարբեր դեմք ընդունեց և շուտ յեկավ: Բայց յերբ Սերվանտեսը հեռացավ, նա դարձնելով իր օձի գլուխը յերկար նայեց նրա հետևից:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Այրի մեջ գտնվող գերիներն սկսեցին անհանգստանալ: Յերկրորդ ամիսն էր, ինչ նրանք նստել էին խոնավության ու մթության մեջ: Մաքուր օդ շնչելու համար միայն գիշերներն էին համարձակվում դուրս գալ: Իսկ Ռոդրիգոյի մեկնելու օրը շարունակ հետաձգվում ու հետաձգվում էր: Այդ բոլորին ավելացավ և այն, որ Սերվանտեսի քաղաքից դուրս գալն սկսեց դժվարանալ:

Քաղաքում անհանգստություն էր տիրում: Յենիչերիների խմբերը վազվզում էին փողոցներով, բակից բակ, ճռճռում էին կեռ դաշույնները և անիծում քրիստոնյաներին:

Ալժիրում լուր տարածվեց թե Վալենսիայում իսպանացիները խարույկի վրա այրել են ուղղափառ-մահմեդական և քրիստոնյաների փոխերիմ թշնամի ծովահեն Ահմեդին:

Անիծյալ դյավուրները ի՛նչքան ուզում են թող այրեն իրենց անհավատներին, յեթե այդ է պահանջում նրանց հավատը: Բայց մահապատժի յենթարկել ուղղափառ մահմեդականին, այն էլ ծովահենի՛ն... Ազատասեր ծովահենների ամբողջ ցեղը զայրացած էր:

Դա մահմեդական տարվա իններորդ ամիսն էր, ռամազանին*), ծոմապահության և աղոթքների ամիսն: Ամբողջ գիշեր տներում լույսերը վառվում էին և ամբողջ գիշեր թափառում էին ծովահենների խմբերը, մտնելով բակերը, բանտերը, խուզարկելով բոլոր անկյունները: Նրանք քրիստոնյա զոհ էին փնտրում, բայց վոչ հասարակ, այլ այնպիսին, վոր արժենար այրել Ահմեդի փոխարեն:

Քաղաքի դռներից դուրս չէյին թողնում քրիստոնյաներից վոչ մեկին, վոչ ցերեկը և վոչ էլ գիշերը: Այրում գտնվող գերիներին մահ էր սպառնում քաղցից:

Այստեղ Միգելին օգնության հասավ Ռոդրիգոն: Նա գտավ Յեվրոպայից փախած և մահմեդականություն ընդունված մի հույն, վորը ծածուկ յերազում էր կրկին վերադառնալ հայրենիք:

Արհեստով այդ մարդը վոսկերիչ էր և Ալժիրում էլ դրամով էր զբաղվում: Նրան այդպես էլ անվանում էին — Դորադոր**): Դորադորը ուրախությամբ հանձն առավ օգնելու գերիների փախուստին: Նա հույս ուներ այդ բանի շնորհիվ իր հայրենիքում ներումն խնդրել կրոնափոխության համար: Սերվանտեսի համար այդպիսի մարդը գյուտ էր: Վորպես մահմեդականի նրան ամեն տեղ թողնում էին: Նա առանց վորևէ վտանգի կարող էր քաղաքից դուրս գալ և կապ պահպանել այրի հետ:

Ծովահենների կատաղությունը շարունակվում էր: Նրանք գտան զոհին—իսպանական քահանա Միգել

*) Ռամազանը մահմեդականների ծոմապահության ամիսն է:

**) Դորադոր-ը իսպաներեն նշանակում է վոսկերիչ:

Արանդային, վորին գցեցին մազմուրս և նշանակեցին մահապատժի որը:

Առավոտից նավահանգստում պատրաստեցին չոր ճյուղերից մի մեծ կույտ, գետնին ամրացրին ծանրագույն խարիսխ: Արանդային մերկացրին, ձյութ քսեցին մարմնին, թավալեցին փետուրների մեջ և երկար ժամանակ քարշ եյին տալիս փողոցներով: Կեսորից հետո կիսակենդան Արանդային քարշ տվին նավահանգիստ:

Միգելը Ռոդրիգոյի և ուրիշ շատ գերիների հետ մի կողմը խմբված՝ նայում եյին այդ տեսարանին: Մինչև անգամ Անտոնիո Սոզային դուրս բերին նայելու, թե ինչպե՛ս իսպանացին այրվում է խարույկի վրա:

Արանդային կապկպեցին յերկաթյա ժանգոտ շղթայով և այդ շղթան ամրացրին գետնի մեջ թաղված խարիսխին:

Յենիչերիների ջոկատի պետը նշան տվեց: Լուռ ամբոխը հնազանդ ճամփա տվեց, և այրված ծովահենի յեղբայրը, մի բարձրահասակ արաբ, դուրս յեկավ նրա միջից: Նա կռացավ, և մի մեծ գորշ քար սուրալով ճեղքեց ոդը: Առաջին քարից հետո ամպի նման թռան ուրիշները:

— Վրե՛ժ... վրե՛ժ...—գոռում եյին մահմեդականները:—Գյավուրներն այրում են մեր յեղբայրներին, մեր վորդիներին: Վրեժխնդիր լինենք նրանցից: Վրե՛ժ...

— Բիսմիլլա՛հ,— մոլեգին աղաղակում եր ինչ-վոր մի ծերուկ, թափահարելով բռունցքները,—Բիսմիլլա՛հ: Գյավուրները թող իմանան, թե վորքան արյուն արժե մեկ այրված ուղղափառը: Մենք կկոտորենք նրանց գերիներին, մենք կհեղեղենք նրանց ափերը, մենք կվոչնչացնենք նրանց անիծյալ սերունդը:

Արանդան կախեց արյունաշաղախ գլուխը, բայց դեռ կանգնում եր: Խարսխի շղթան պահում եր նրան:

Ինքը՝ մոլլան վառեց Արանդայի շուրջը դարսած

ճյուղերը: Առաջին ծխախառն բոցը խանձեց նրա փռված մազերը, այրեց դեմքը: Արանդան շարժեց շրթունքները, կարծես ուզում եր ինչ վոր բան ասել: Բայց թանձր ծուխը ծածկեց նրան և մի քանի վայրկյան լսվում եր միայն կրակի ֆշշոցը և ամբոխի խուլ աղմուկը:

Միգելը փակեց աչքերը: Նա հիշեց հերետիկոսի մահապատիժը Տոլեդոյում: Միգելն ութը տարեկան հասակում մեկ անգամ տեսել եր խարույկահանդեսը:

Նույնպիսի բազմամարդ, բայց ավելի լուռ ու վախեցած ամբոխ: Դատապարտվածների յերթ: Ներկած բարձր թասակների տակ գունատ դեմքեր: Հերետիկոսների դեղին յերկար զգեստներ: Ձեռքերում բռնած կանաչ մոմեր: Տախտակամած և նրա վրա կանաչ պաստառով փաթաթված խաչ: Թաղման յերգեցողություն: Ճյուղերի կույտեր: Սև ծխի քուլաներ: Բարձրացած ձեռքեր և այրվողների սոսկալի տնքոցներ: Աուտոդաֆե:

Միգելը բացեց աչքերը: Ամբողջապես ածխացած Արանդան սևացած գլխով ընկած եր ֆշշացող շիկացած քարերի վրա:

— Անհավատնե՛ր, բարբարոսնե՛ր...— բռունցքներն եր սղմում Ռոդրիգոյի մոտ իսպանացի մի գերի,— մենք վրեժ կառնենք նրանցից:

— Անհավատնե՞ր... Իսկ մենք, կաթոլիկներս, մի՞թե նրանցից լավ ենք, բարձր ձայնով իսպաներեն ասաց Սոզան:

Գերին լռեց:

—Իսկ մենք մի՞թե անհավատներից լավ ենք,— դարձյալ բարձրաձայն կրկնեց Սոզան,— մի՞թե մենք չենք այրում խարույկների վրա բոլորովին անմեղ մարդկանց:

— Դո՛ւք իրավացի յեք, դո՛ն Անտոնիո,— ասաց մի մեղմ ձայն: Դա իսպանացու ձայն եր: Բոլորն ել շուռ յեկան: Մի ձեռնանի Սերվանտեսը գերու քաթանե գլխարկը գլխին կանգնել եր Սոզայի մոտ:

Իսպանացիները հասկանում էին, որ Սոզան ճշմարիտ է ասում, բայց լուռ էին գալիս, չհամարձակվելով պաշտպանել նրան։ Նույնիսկ այս օտար, մահմեդական քաղաքում, աշխարհի ծայրին, ուրիշ մայր ցամաքի վրա, նրանք վախենում էին ընկնել հավատաքննության սուրբ ատյանի ճիրանները։

Թերևս զգուշացողներն իրավացի էին։ Հարևան շարքերից յերևաց կրոնավորի ոձային գլուխը։

Ռոդրիգոն մեկնում էր։ Հասել էր մտադրությունն իրագործելու ժամանակը։

Օգոստոս ամիսն էր։ Ծովը խաղաղ էր։

Ամբողջ Ալժիրն զբաղված էր նոր փաշայի գալստյամբ։ Փաշան փոխվում էր յերեք տարին մեկ անգամ։ Նրան ուղարկում էր Թուրքական սուլթանը։

Յերաժշտությամբ, վողջույններով, յենիչերիների յերթով դիմավորեցին նոր փաշային։ Ամրությունների և ծովափնյա պաշտպանության նավերի բոլոր հիուն թնդանոթները վողջունեցին նրա մուտքը պալատ։ Դյուրահավատ ալժիրցիներն արդեն մոռացել էին նախկին կառավարչի խստությունները և նորից արտոնություններ և թեթևացումն էին սպասում։

Բայց նրանք սխալվեցին։ Նոր փաշան, Հասան աղան, արժեր հներից տասին։ Նա ազգաբնակությանը ծանրաբեռնեց չլսված տուրքերով։ Նա ծովահեններից պահանջեց իրենց ավարի յոթերորդ մասի փոխարեն հինգերորդը։ Ամենալավ նավերը նա հափշտակում էր իր օգտին, գնում էր գերիներին և կրկնապատկում էր նրանց փրկանքի գումարը, գրավում էր ամբողջ հացահատիկը, հավաքում էր մանր դրամը և յեվրոպացի ստրուկների օգնությամբ ձուլում այն։ Բռնագրավում էր շուկայի ապրանքները, վերցնում էր իրեն համար մեղր, բրինձ, յուղ, արմավ և վողորմածաբար իր յենիչերիների համար թողնում էր սոխ և կաղամբ։ Նա ստիպում էր շրջակայքի արաբ բնակչությանը՝ վճա-

րել հարկը բնամթերքով, իսկ հետո հենց նրանց մթերքները ծախում էր նրանց՝ քառապատիկ գնով։ Ժողովուրդը հեծեծաց, ծովահենները հուզվեցին, բողոքներ թռան դեպի Ստամբուլ, ուղղակի սուլթանին։ Բայց սուլթանը խուլ էր։ Հասան աղան սուլթանական արքունիքում ուժեղ պաշտպաններ ուներ և Ալժիրում ստանձնած պաշտոնի համար նա սուլթանին վճարել էր յերեք հարյուր հազար վոսկի։

Ալժիրում սով սկսվեց։ Ավելի աղքատ ծովահենները՝ չիմանալով ինչով կերակրել գերիներին՝ ազատում էին նրանց կամ տասնյակներով կոտորում։ Բոլորն զբաղված էին իրենց սեփական հոգսերով և փախչելու համար հասավ ամենաբարենպաստ վայրկյանը։

Ռոդրիգոյի մեկնելուց առաջ Միգելը յեղբորը մեկ անգամ էլ տարավ ծովափ, ստուգեց տեղադրությունը և հարյուրերորդ անգամ պայմանավորվեց նրա հետ նշանների և փոխադարձ ազդանշանների մասին։ Յեղբայրները հրաժեշտ էին տալիս կարճ ժամանակով։ Նրանք հույս ունեյին հանդիպել յերկու շաբաթից վոչ ուշ։

Ռոդրիգոն մեկնեց։ Սերվանտեսը վերջին պատրաստությունները տեսավ, վերցրեց իր հետ Իսաքարին, հրաժեշտ տվեց դոկտոր Սոզային և փակվեց այրի մեջ։

Այդ կատարվեց 1577 թվի սեպտեմբերի յերկրորդ կեսին։ Հուանը հսկում էր դրսից։ Դորադորն ուտելիք էր բերում։ Իսաքարը գնում էր հետախուզության։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

ԱՅՐԻ ՄԵՋ

Փոքրիկ, նեղ և առանց ոդանցքի այրում տասնըհինգ հոգի էին գտնվում։ Բայց այժմ նեղվածքը, հիվանդությունները, քաղցածությունը, անբավականությունը — ամեն ինչ մոռացված էր։ Նրանք պառկած էին գետնին իրար կողքի յեգիպտացորենի ծղոտի վրա և սպասում էին նավին։

Մի գերի բլրի գագաթին գտնվող խիտ թփերի միջից շարունակ հսկում եր:

Անցավ հինգ, վեց, յոթ որ: Սերվանտեսը հանգիստ եր: Նա գիտեր, վոր նավ պատրաստելն այնքան ել հեշտ բան չե, վոր Ռոդրիգոյին ու Վիանին մեկնելու համար կարող եյին զանազան արգելքներ հանդիպել:

Հասավ տասներկուերորդ որը: Այրի մեջ լուռ լարվածությունը հասել եր իր գագաթնակետին: Բայց չեյին խոսում: Պառկած եյին հարդի վրա և վերևից ազդանշանի սպասում: Խոնավությունից հիվանդացած Դիեգո Կաստելյանոն և Թոմաս Ռոհասը պատի տակ կամաց տնքտնքում եյին:

Գիշերները լուսնկա եյին և փչում եր քամին: Արևմուտքում, հորիզոնի վրա, ամպեր եյին կուտակվել: Նրանք ավելի լուսավոր եյին, քան անաստղ ու սև յերկինքը: Մուգ կարմրավուն ու մռայլ լուսինը բարձրանում եր ծովի վրա:

Խեղդուկ, ծանր ու տանջալից սպասողականությունը ճնշում եր այրի մեջ գտնվող մարդկանց սրտերը:

Այդ գիշեր բլրի վրա հսկում եր նոր գերի ընկած կորիճ պատանի Լուիս դե Գարսիան: Իսաքարն ամեն րոպե վազում եր նրա մոտ հետախուզության:

Գերիներից միայն Դորադորն եր փորձում խոսել: Բայց վոչ վոք նրան չեր պատասխանում: Բոլորը պառկել եյին և լուռ ականջ եյին դնում:

Հանկարծ լսվեց մի թեթև աղմուկ և մուտքի մոտ հողի կոշտեր թափվեցին: Իսաքարը վոչ թե սողաց, այլ գլորվեց այրը:

— Սերվա՛նտե,— կանչեց Իսաքարը սաստիկ հուզված,— Սերվա՛նտե, ծովի վրա լույս կա: Կարմիր լույս: Նավ ե...

Բոլորը վեր ցատկեցին տեղներից:

— Պառկեցեք բոլորդ ել և լռեցեք, մինչև յես



չկանչեմ,— կարգադրեց Սերվանտեսը: Նա վառեց պատրաստի ձյութե ջահը և դուրս սողաց:

Ծովի վրա, վոչ հեռու, պարզ նկատվում եր մի կարմիր լույս: Նա մոտենում եր, դարձավ ավելի պարզ և վորոշակի բաժանվեց յերկուսի, մեկը մյուսից վեր:

Դա պայմանական նշան եր: Ռոդրիգոն գլխավոր կայմի վրա պետք եր յերկու կարմիր լույս կախեր, սպասեր պայմանական պատասխանին և ապա նավակին իջեցներ ափ:

Սերվանտեսը վազեց բլրի գագաթը և ջահը թափահարեց:

Նավի լույսերը հանգան, ապա նորից վառվեցին: Այդ նշանակում եր, վոր ազդանշանը նկատել են և նավակն ուղարկվում ե:

— Այժմ, դոն Լուիս, դուք ինձ կոգնեք հիվանդներին դուրս բերել,— ասաց Սերվանտեսը հերթապահին և միասին ներքև վազեցին:

Բայց արդեն գերիներն իրենք եյին դուրս վազում այրից և հերթով ծովափ իջնում: Հիվանդները կաղալով, սողալով քարշ եյին գալիս նրանց հետևից: Վերջապես վաղուց սպասված փրկությունը հասավ, և մարդիկ մոռացան զգուշության մասին: Նրանք միասին անկանոն կերպով խռնվեցին ափին:

Սպասողական մի քանի յերկար րոպեներ և ջրի վրա ընկած լուսնի շողքը հեռվում ճեղքեց նեղ, թռչունի պես սև ստվերը — դա նավակն եր:

— Պառկեցե՛ք գետնին, յերեսն ի վայր,— աղաչում եր Սերվանտեսը՝ վազելով մեկից մյուսի մոտ:

Չլսելով նրան՝ մարդիկ ջուրն եյին մտնում նավակին դիմավորելու:

Լուիս դե Գարսիան, ամեն ինչ մոռանալով, նորից վազեց բլրի գագաթը, վերցրեց ջահը և սկսեց գլխավերևում թափահարել, լայն շրջաններ կազմելով, կարծես թե դրանով արագացնում եր փրկությունը:

Յեվ այստեղ այս խաղին մասնակցեց պատահական

մի դեմք, վորին վոչ մի կերպ վոչ վոք չեր նախատեսել:

Ձկնորս Աբու Թալեբը ուշ գիշերով Ալժիրից վերադառնում եր տուն, իրենց գյուղը: Ճանապարհը կարճելու համար նա իր ընկերներից հետ մնաց և ցատկեց ցանկապատից, վորպեսզի ծովափով գնա: Ցանկապատի այն կողմը նա տեսավ բլրի վրա ջահը ձեռքին բռնած մարդուն, ծովափին տասնհինգ ստվերներ, ծովի վրա կարմիր լույսեր և մոտեցող նավակ...

— Ոհո՛, այստեղ դավադրություն կա: Անիծյալ գյավուրները մտադրվել են փախչել,— գլխի ընկավ ձկնորսը և սուր շվոցով ձայն տվեց ընկերներին:

Կես րոպե անց արդեն ամբողջ ծովափով սուլոցներ տարածվեցին, բոլոր աշտարակները տագնապ հնչեցին և պահակ նավերը դուրս յեկան նավահանգստից ոտար նավին ընդառաջ:

Նավակը ցնցվեց ու կանգ առավ:

— Շուտ, շուտ— հուսահատ ձեռքերն եյին թափահարում գերիները դեպի նավակը:

Նավակն որորվեց ջրի վրա, կարծես մտմտալով, ապա շուռ յեկավ դեպի հետ: Նավի վրայի լույսը հանգավ: Նրանք լսել եյին տագնապը:

Շորերն ու վոտքերը ծնկից վեր թրջելով՝ ցնորված գերիները ջուրն եյին վազում և ալիքների հարվածներին հազիվ դիմանալով ձեռքներն եյին թափահարում ու հեռացող նավի հետևից կանչում:

— Կաբալյե՛րոս, հետ դարձեք,— կանչում եր Սերվանտեսը:— Հետ դարձեք դեպի այրը, ապա թե վոչ մենք կորած ենք...

Նա համարյա զոռով բոլորին հրեց հետ դեպի այրը: Տագնապը շուտ հանդարտվեց, բայց նավն արդեն հեռացել եր և այլևս չեր յերևում:

Գերիները նորից մեկ մեկ դուրս եյին սողում այրից և մոտենում ափին:

Նրանք հույս ունեյին, թե նավը կվերադառնա, նա չի կարող չվերադառնալ: Ռոդրիգոն կամ Վիանան

ով էլ վոր լինի այնտեղ, չի վախենա յերկվայրկյան տագնապից և հնար կգտնի կրկին յերևալու ափի հանդեպ:

Սերվանտեսն այդ գիշեր չկարողացավ գերիներին իրեն յենթարկել և միայն լուսադեմին հավաքեց բոլորին այրի մեջ:

Նա հաշվեց նրանց: Դորադորը չկար:

Մութն է: Ջահերը չեն վառվում, վորպեսզի մարդկանց շնչելուդը չապականեն: Մթան մեջ միայն գերիների զուսպ շնչառությունն ու հիվանդների ծանր տնքոցներն են լսվում: Յեվ բոլոր անկյուններից Միգելին եյին հառել փայլուն, սպասող, հարցական և սպառնալից աչքեր:

— Դոն Միգել, մենք վոչ մի կտոր հաց չունենք:

— Դորադորը մեզ համար հաց կբերի, ինչպես միշտ:

— Դոն Միգել, մենք նրան արդեն յերկու որ է սպասում ենք: Նա յերբեք այդքան յերկար չեր թողել մեզ:

— Նա շուտով կգա:

— Սերվա՛նտի, թույլ տուր, յես գնամ և գտնեմ նրան:

— Մի՛ գնա, Իսաքար, քեզ կբռնեն: Հանգիստ պառկիր ու լռի՛ր, նա շուտով կգա:

Միգելն արդեն ինքն էլ իր ասածին չեր հավատում: Դորադորը անհետացավ հենց անմիջապես, յերբ տեսավ, վոր նրանց փորձն անհաջող անցավ: Մկան պես, զգալով կործանումը՝ նա առաջինը փախավ:

— Բայց գուցե թե... գուցե թե ավելի վատ: Գուցե թե իր կաշին փրկելու համար նա շտապեց ամեն ինչ փաշային հայտնելու:

Այրի մեջ պառկած յերկրորդ տանջալից որն էլ անցավ: Մուտքի բացվածքից թափանցող լույսի աղոտ հետքն էլ խավարեց: Վրա հասավ գիշերը:

Հեռու անկյունից, զենքը զրնգացնելով, դուրս յեկավ յերիտասարդ Լուիս դե Գարսիան:

Նա ամբողջ հասակով ձգվեց և ակամա կռացավ՝ գլուխը դիպցնելով հողաշեն կամարին:

— Կաբալյե՛րոս, — բարձրաձայն ասաց դե Գարսիան, — մի՞թե մենք վախկոտներ ենք, վոր նստենք այստեղ և սպասենք, մինչև վոր մեզ մկների պես թակարդով բռնեն: Թե՞ դուք մոռացել եք, վոր մենք կաստիլիացիներ ենք և վոչ թե վոչխարներ: Մենք զենք ունենք, դուրս գանք և փորձենք պարտեզից հեռանալ:

— Այո՛, այո՛, — վեր թռան բոլորը: — Մենք կգնանք և կփորձենք ազատվել այստեղից: Ինչո՞ւ համար սպասենք այստեղ:

Բոլորը միանգամից հարձակվեցին Սերվանտեսի վրա:

— Վոչ մի մարդ այստեղից դուրս չի գա: Դա կործանումն է — ասաց Սերվանտեսը:

Նորից լռություն: Վո՛րը մտքերի մեջ եր թաղվել, վո՛րը ջերմում եր, վո՛րն էլ յերազի մեջ տնքում:

Գիշերվա վերջին Իսաքարը Միգելի մոտ սողաց:

— Լսո՞ւմ ես, Սերվանտի, — շշնջաց նա:

Գիշերային լռությունը խանգարվեց ինչ-վոր քայլերի խշխշոցով և զենքերի թույլ զրնգոցով:

— Յես գնամ դիտելու, Սերվա՛նտի, — շշնջաց տղան:

— Կարիք չկա, Իսաքար, հանգիստ պառկիր:

Գերիները չեյին շարժվում: Քնած են, լուռ են, թե՞ քնած են ձևանում:

Ձայները շատանում եյին: Խշխշոցը մոտենում եր: Զինված մարդկանց շղթան սեղմվում եր այրի շուրջը:

Հանկարծ սուր աղաղակն ու լացը խզեցին լուսադեմի լռությունը:

— Այդ Հասանն է.... Նրան տանջում են... Մեզ մատնել են, — աղաղակեց դե-Գարսիան:

— Մեզ մատնել են,— բոլորը վեր ցատկեցին:— Հիմա այստեղ կգան...

— Մեզ ծախել են: Մեզ ծուղակն են գցել—հարձակվում եյին բոլորը Սերվանտեսի վրա:

— Լռեցեք,— ասաց Միգելը:— Չշարժվեք տեղներիցդ: Լսեցեք ինձ: Յես հավաքեցի ձեզ այստեղ, վորպեսզի ազատեմ: Յեվ յես ել պատասխանատու յեմ անհաջողության համար: Դուք բոլորդ ել անվնաս կմնաք: Միայն ինձ լսեցեք: Նրանց միայն ճիշտ կասեք, վոր դուք վոչ մի բանում մեղավոր չեք, վոր ձեզ խաբել են: Ամեն ինչ յես եմ նախապատրաստել:

Յեվ Միգելը լայն քայլերով մոտեցավ յելքին, ձեռքով հետ պահեց իրեն հետեվողներին և այրից դուրս յեկավ:

Քսան չորս հեծյալ և քառասունից ավելի հետևակ յենիչերիներ հավաքվել եյին պարտեզում: Լուսաբեմի կանաչավուն մթնշաղի մեջ ինքը՝ փաշայի սպա աղաբաշին փետրափունջ չալման ծածկած, կացած մոտենում եր այրի մուտքին:

Սերվանտեսը կանգնեցրեց սպային:

— Այնտեղ մի՛ գնա, աղա: Այնտեղ անմեղ մարդիկ են: Ամեն ինչում մենակ յես եմ մեղավորը: Յես եմ համոզել նրանց, խաբել ու հավաքել այրի մեջ: Ի՛նձ բռնիր:

Աղա-բաշին մի փոքր զարմացած՝ ձեռքով նշան արեց և ութը յենիչերիներ հարձակվեցին Միգելի վրա:

— Ո՞ւր տանենք, տեր իմ,— հաճոյակատար կերպով հարցրեց մեկը, կապելով Միգելի ձեռքերը:

— Ել Ճեզայիր, փաշայի մոտ, տանջանքների բակը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Այնպիսի մի օր եր, վոր պահակներն անգամ թողնելով պահակակետերը՝ հավաքվել եյին փողոցում և դեպքերի եյին սպասում: Պահապաններն առանց

թույլտվության բակերից դուրս վազող դերիներին անգամ չեյին կանգնեցնում:

Ճեզայիրի թաղից անընդհատ վազելով գալիս եյին ռենեգատները, մավրերն, ազատագրվածները և վերջին լուրերն եյին հաղորդում:

Առավոտվանից հարցաքննություն եր գնում: Թուրքական սուլթանի փոխարքայի առաջ կանգնած եր նիհար, ձեռքերն ու վոտքերը կապոտած իսպանական դերին:

Փաշան ամենից առաջ Սերվանտեսից ուզում եր լսել դավադիրներին փողով ոգնած վորևե վաճառականի անունը: Մի ամբողջ նավ պատրաստելն առանց վորևե հարուստի մասնակցության գլուխ չեր գա: Հարկավոր եր միայն ձեռք գցել նրանց և նրանց քսակները:

Հարցաքննությունը յերկարում եր և Սերվանտեսը չեր զիջում: Փաշան նրանից չկարողացավ կորզել վոչ մի ցուցմունք, վոչ անուն և վոչ ել ակնարկ:

— Ամեն ինչում յես եմ միայն հանցավորը,— դունատ շրթունքներով կրկնում եր Սերվանտեսը,— յես մասնակիցներ չեմ ունեցել:

Այրի գերիները վոչինչ չեյին հասկանում: Նրանց վոչինչ չարեցին, միայն պարտեզից հետ տարան բանտ: Յեվ այժմ ուրիշների հետ դարպասների մոտ կանգնած՝ նայում եյին ու նորությունների սպասում:

Շուկայից վազելով գալիս եյին յերեխաները և լուրեր բերում:

Ծերուկ Հասանին շուկայում կախեցին գլխիվայր: Նա խոխոում եր, կապտավուն արյունը գլուխն եր իջել, մահ եր կանչում և յերկար ժամանակ չեր մեռնում:

Այս ուրեմն ի՞նչպիսի մահապատիժ եր սպասում Սերվանտեսին, այս բոլոր արարքների հեղինակին ու գործադրողին:

Ամբողջ քաղաքը հետաքրքրվում եր հարցաքննության վախճանով:

Ժամը յերեքին լուր տարածվեց, թե փաշան հրամայել ե Սերվանտեսին գավազանի յերկու հազար հարված տալ:

Յերկու հազա՜ր: Դա մա՜հ եր: Յերեք հարյուր— չորս հարյուր հարվածին քչերն եյին դիմանում, իսկ հինգ հարյուրից հետո վոչ վոք կենդանի չեր մնում:

Մարդիկ կանգնած եյին Էլ-Ձեզայիրի դարպասների մոտ և սպասում եյին Սերվանտեսին դուրս բերելուն:

Այդ դարպասներից շատ անգամ են ուռած այլանդակված, արյունաշաղախ դիակներ դուրս տարել ուղիղ դեպի յեվրոպական գերեզմանոց:

Արևն արդեն մայր մտավ, և մզկիթում փռված գորգերի վրա յերկարամորուք արաբները կարդում եյին յերեկոյան աղոթքը՝ մոհրեբը:

Սերվանտեսին դուրս չեյին բերում:

Փաշայի ծառաներն սկսեցին փսփսալ, թե փաշան փոխել ե մահապատիժը՝ ուրիշ ավելի խիստը նշանակելու համար:

Տանջանքների բակից վոչ մի ձայն չեր լսվում:

— Յես ճանաչում եմ Սերվանտեսին, նա լուռ մեռնում ե: Նրանք տանջեցին նրան,— խուլ ձայնով ասաց Բելտրան դե Սալ՛տոն:

— Սերվանտեսն մեռա՞վ, նա ինձ համար և՛ հայր եր, և՛ մայր: Սերվանտեսն մեռա՞վ, իսկ նա ինձ համար այս աշխարհում ամեն ինչ եր,— դարպասի տակ լաց եր լինում փոքրիկ Իսաքարը:

Վրա հասավ գիշերը:

Սերվանտեսը գիշերն ել չվերադարձավ:

Առավոտյան փաշան իր մոտ կանչեց Միգելի տիրոջը՝ Դալի-Մամիին:

— Ի՞նչ փրկանք ես նշանակել այս համառ կաստիլիացու համար,— հարցրեց փաշան:

— Հինգ հարյուր վոսկի,—վախեցած պատասխանեց Մամին:

— Յես կարող եյի նրան ուղղակի սպանել, կամ խլել քեզանից, առանց մի դրոշ անգամ վճարելու, վողորմածաբար ասաց փաշան,— բայց դու առանց-այն ել այս գարնանը վոչինչ չես թալանել, և յես չեմ ուզում քեզ զրկել, Մամի: Յես վերցնում եմ քեզանից գերուն և փողը վճարում եմ լրիվ:

— Ալլահը թող վարձատրի քեզ, տեր իմ,—ուրախացավ Մամին: Հավատա ինձ, նա արժի այդքան: Նա ծովապետ Հուան Ավստրիացու գլխավոր խորհրդականն ե: Դու նրա համար կստանաս վեց հարյուր կամ յոթ հարյուր, վոչ պակաս:

— Հազա՜ր,— ասաց փաշան: Յես նրա համար կնշանակեմ ճիշտ կրկնապատիկը՝ հազար վոսկի:

Յեվ կրկնապատկելով Սերվանտեսի գինը՝ փաշան հրամայեց զնդան գցել նրան:

«Յերեկ բոլորն այստեղ սպասում եյին նավով փախուստ նախաձեռնող Սերվանտեսի մահապատժին: Բայց որն անցավ և նա կենդանի մնաց»․ այսպես գրեց այդ որն իր «հիշողություններ»-ում դոկտոր Անտոնիո Սոսան:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆ ՆԱՎԱԶԱՆԳՍՏՈՒՄ

Առանց ապակու նեղ լուսամուտ, յերկաթյա վանդակ, քարե հատակ, կիսախավար, ջրով մի կուժ անկյունում և պաքսիմատի կապոց,— ահա արաբական մազմորան, վոր յերկար ժամանակով Սերվանտեսի բնակարանը դարձավ:

Լուսամուտը բացվում եր մի բարձր պատի դիմաց: Մեծ և անտաշ քարերով շարված այդ պատը լրացնում եր լեռնային աստիճանավոր դարատափը, այն դարատափերից մեկը, վորոնց վրա կանգնած եր ամբողջ Ալժիրը: Պատի հետևը մի այնպիսի գահավեժ քարափ կար, վոր փաշան նույնիսկ պետք չեր համարում այդտեղ պահակ կանգնեցնել: Վոչ վոք չեր համարձակվի մագլցել այդ ուղղաձիգ լանջով:

Իսաքարի արագաշարժ վոտքերն ու ձեռքերն այդ ուղղաձիգ լանջի վրա գտան կառչելու տեղեր, և շուտով մազմորայի բանտարկյալը կարողացավ կապ հաստատել փաշայի մյուս գերիների հետ:

Երեք որից հետո Սերվանտեսն արդեն ուներ վենետիկյան թղթի մի կտոր և գրիչ, իսկ վեց որից հետո, Նավարրետի բարեկամ, փորձված մավր Իբրահիմն արդեն Միգելի գրած նամակը հետն առած գնում եր Ալժիրի տափաստաններով դեպի արևմուտք—Որան:

Նամակն ուղղված եր Որանի բերդի պարետին, վորով խնդրում եր ուղեկիցներ և պահակային զորքեր ուղարկել իսպանական փախստականների մի մեծ խմբի համար:

Այժմ մնում եր սպասել, և Միգելը համբերությամբ սպասում եր: Իր անկյունում նստած՝ նա հաշվում եր պատի վրա ընկած արևի ծագման և մայրամուտի ճառագայթները:

Տասնութ որ անցած—վոչ վաղ և վոչ էլ ուշ—փաշայի բանտերում, գիշերը տագնապ կսկսվի—կխփեն չաչանակները, կհաչեն շները և մարդիկ կվազվզեն: Մթան մեջ չփակված պահեստներից կանհետանան շղթաների մուրճերն ու բանալիները, կարձակվեն կապկպված ձեռքերի ու վոտքերի շղթաները և զգույշ շարժվող ստվերները դահավեժ զառատափից ցած կսահեն կտրից կտուր, դեպի քաղաքի պարիսպը: Իսկ պարսպի հետևը, պայմանավորված տեղում՝ հուսալի պահակ կլինի և յոթ որ ճանապարհ գնալուց հետո—Որան, իսպանական բերդ:

Բայց տասն որից հետո լուսամուտի վանդակին մոտ սողաց Իսաքարը: Նա հազիվ եր կարողանում խոսել և սարսափից նրա սև դեմքը գորշացել եր:

Իբրահիմին բռնել եյին Որանից յերկու որվա ճանապարհ հեռավորության վրա: Նրան հետ բերին Ալժիր, փաշայի մոտ, տանջանքների բակը: Նրա ձեռքերն ու վոտքերը ճախարակի վրա վոլորել եյին, ձյութով այրել եյին ձեռքերի ափերը, զանակոծել եյին կուրծ-



քըն ու փողը, բայց մայրը ոչինչ չէր ասել։ Չէր ասել, թե ո՞վ է իրեն տվել նամակը, չէր ասել ո՛չ անունը և ո՛չ մի խոսք... Տանջելուց ձանձրացած՝ փաշան հրամայել էր ցցի վրա նստացնել Իբրահիմին։

Ծրագիրը խորտակվեց։ Այս հույսն էլ կորավ։ Եվ ի՞նչ էր մնում սպասել, ի՞նչ յելքի։

Ընդհանուր բանտի գերիների համար դեռ վորևէ հույս կար։ Մի յերկու ամիս որինակելի վարք — և ծանր շղթան թեթևացնում եյին կամ բոլորովին հանում։ Պահակի ափը մի քանի ասպր դնելով՝ բացվում էր փողոցի յելքը դեպի հարևան քրիստոնեական պանդոկը և դեպի շուկան։ Մազմորայի բանտարկյալների համար հույս չկար։ Մինչև անգամ նավերի համար թիավարներ ընտրելիս զնդանների ծանր դռները չեյին բացվում։

Միգելը դադարեց հաշվել պատի վրա ընկած ճառագայթները։ Յե՞րբ է լինելու սրա վերջը, կամ յեթե վոչ՝ գոնե փոփոխություն։

Փոփոխությունը յեկավ դրսից այն ժամանակ, յերբ Սերվանտեսն արդեն հույսը կորցրել էր։

Ձմեռվա վերջին Ալժիրում լուրեր տարածվեցին, թե իսպանական թագավոր՝ Ֆիլիպը պատրաստվում է հարձակվել ծովահենների բնի վրա։

Վաճառականները, ծովահենները և յեվրոպական ափերից փախածները պատմում եյին, թե Ֆիլիպը հրամանատարներ է նշանակում, նավեր է զինում և մեծ բանակ է կենտրոնացնում Թերակղզու հարավային նավահանգիստներում։

Հասան փաշան վախեցավ և սկսեց բոլոր գերիներին աշխատեցնել նավահանգստում՝ ծովափն ամրացնելու համար։

Նա մի քանի հազար մարդ դուրս բերեց իր և ուրիշների բանտերից։ Այդ դեպքի պատճառով բացվեցին նույն իսկ մազմորայի դռները և Սերվանտեսն էլ դուրս յեկավ ուրիշների հետ։

Առավոտյան ժամի 5-ին գերիներին վեր եյին

կացնում և գավազաններով քշում դեպի նավահանգիստ։ Այստեղ նրանք հսկայական քարեր եյին կրում, պատ շարում և խրամատներ փորում։

Կեսօրին բաժանում եյին նրանց հոտած բրինձ և թույլ եյին տալիս կես ժամ հանգստանալ ստվերի մեջ։ Ապա նորից աշխատանքի եյին անցնում մինչև առաջին աստղերի յերևալը։

Սերվանտեսին արդեն բոլորն էլ ճանաչում եյին։ Նրան «այրի հերոս» եյին անվանում։ Նրա մոտ գալիս եյին զրույց անելու, իրենց դարդերը պատմելու և խորհուրդներ ստանալու։

Այստեղ, նավահանգստում, Միգելը հնարավորություն ուներ ծանոթանալու բոլոր բանտերի գերիների հետ։

Ֆրանսիացիների և իտալացիների հետ նա խոսում էր «ֆրանկերեն»,— իսպանական, ֆրանսիական և իտալական լեզուների մի խառնուրդ։ Այդ լեզվով խոսում եյին բոլոր գերիները և այն հասկանում եյին Ալժիրի բոլոր արաբներն ու թուրքերը։

Միգելի մտքում սկսվեց կազմվել մի նոր ծրագիր, ավելի մեծ ու համարձակ։

Մի անգամ կեսօրվա դադարին Միգելն ու Իսաքարը չհանգստացան, այլ սկսեցին թափառել ծովափին։

Նավամատույցից վոչ հեռու կանգնած էր ծովահենների մի միջակ նավ։ Նա հենց նոր էր մոտեցել ափին և վերակացուն թիավարներից հավաքում էր թիակները։

Միգելն ու Իսաքարը բոլորովին մոտեցան նավին։

Ափի կողմը գտնվող նավակողի վրա նստարանին շղթայով կապված նստել էր հաղթանդամ մի նեգր։ Նա բարձրացրեց գլուխը և բութ հայացքով նայեց տղային։

Հանկարծ նրա աչքերը ինչ-որ փայլ առան։ Նա նստարանից բարձրացավ։

— Նյանգո՛,— խուլ ձայնով ասաց նեգրը։

Իսաքարը ցնցվեց և մոտ վազեց ջրին։

— Ատա՜յ,— մեկնելով ձեռքերը հուսահատ կանչեց Իսաքարը,— Ատա՜յ։

Իսաքարը ճանաչեց հորը և իր մայրենի լեզվով կանչում էր նրան։

— Նյանգո՛,— կրկնեց նեգրը, տեղից վեր կենալով։ Դա Իսաքարի անունն էր նրա հայրենի ցեղի լեզվով։— Նյանգո՛։

Նեգրը ձգեց իրեն նստարանին ամրացնող շղթան, կարծես փորձելով պոկել այն։

Վերակացուն մոտեցավ նեգրին, մտրակով խփեց նրա ուսերին և կռացավ, որպեսզի թիակը վերցնի։

Բայց նեգրը կանգնեց և ամբողջ հասակով ձգվեց։ Ցուլի պես գլուխը կախելով նա վրա բերեց թիակը և վերակացուին հետ ցատկեց։

Թուրքական նավերում յերեք թիավարներ միասին նստած թիավարում են մի հսկայական թիակով։ Այդ թիակն այնքան մեծ է, որ յերեք մարդ դժվարությամբ են շարժում այն ջրի մեջ։

Ծանր թիակը սև ջլուտ ձեռքերում ահեղ մի զենք դարձավ։

— Ռինգո՛,—մռնչում էր նեգրը, կատաղորեն թափահարելով վերակացուի վրա։

Կարծես հրամանի համաձայն՝ նավի յերկու կողքերի թիակները մեկ անգամից բարձրացան։ Շների պես մռնչալով, մարդիկ բարձրանում եյին, ջարդում շղթաները, ցատկում նավից և լողում դեպի ափը։

Դա խռովություն էր։ Շփոթված անձնակազմը խռնվեց նավի հետնամասում։

Անձնակազմին օգնության հասավ ծովափնյա պահակախումբը։ Յենիչերիները, հենց ճամբին դուրս քաշելով իրենց կեռ դաշույնները, վազում եյին թիավարների ճամբան կտրելու։

— Խփեցե՛ք սև շներին։ Խփեցե՛ք կեղտոտներին,— գոռում եյին յենիչերիները։

— Մի՛ թողնեք առաջ անցնեն։ Կտրեցե՛ք ճամբան։ Մեկ մեկ բռնեցեք,— ինչ-որ տեղից վազելով հրամայում էր պետը։

Նեգրը, Իսաքարի հայրը, դեռ վազում էր վերակացուի հետևից։ Վերակացուն տախտակամածի վրա դես դեն էր ընկնում, խուսափելով թիակի հարվածից։ Բայց անձնակազմի միջից մեկը նեգրի վրա ուղղեց հրացանը։

— Ատա՜յ— հուսահատ կանչեց Իսաքարը, աշխատելով ջուրն ընկնել,—Ատա՜յ, շուտ արի այստեղ։

Հայրը շուռ յեկավ դեպի ափը, վազեց դեպի նավակողը, բայց այդ վայրկյանին հրացանը որոտաց և նեգրը գնդակակոծված գլխով ջուրն ընկավ։

Միդելն աղաղակող Իսաքարին հեռացրեց նավի մոտից։ Ափի վրա պահակախումբը քշում էր գերիներին, որպեսզի նրանք օգնեն իրենց՝ ապստամբված թիավարների ճամբան կտրելու և արգելեն նրանց քաղաք մտնել։ Բայց գերիները ծանր մուրճերով, քլունգներով, լոմերով և կամ ուղղակի քարերով զինված՝ սկսեցին թիավարների կողմն անցնել։

Սրտապնդված ամբոխն արդեն հարձակվում էր յենիչերիների վրա, գրավում նավահանգստի մուտքերը։

Միդելն ամբոխի մեջ կորցնելով Իսաքարին՝ ինքն էլ չիմացավ, թե ինչպես մի րոպե անցած արդեն բոլորի հետ միասին սկսեց կանչել, վազել, կարգադրել, քար կրել, գերաններ քարշ տալ և նավահանգիստ տանող նեղ նրբանցքներից մեկի դուռը ծածկել նրանցով։

Գերիները գրավեցին ամբողջ նավահանգիստը։ Նրանք ձյութ լցրին մուտքերի մոտ ընկած գերանների վրա և կրակ տվին։

Նրանք զինաթափ արին նավամատույցում կանգնած մի քանի նավերի անձնակազմին, իսկ մի քանիսը, ավելի խելոքները, արդեն վազում եյին դեպի զինանոցը, ուր զենքեր եյին դարսված։

Այդ արդեն խռովություն չէր։ Արդեն ապստամբություն էր սկսվում։ Սակայն պետը սթափվելով՝ ժամանակին օգնություն պահանջեց։ Քաղաքից վրա հասան մի քանի գունդ զինվորներ։ Գերիներին փա-

կեցին նավահանգստում, հանդարտեցրին և տարան իրենց բանտերը:

Խռովությունը վոչ մի արդյունք չտվեց: Սակայն այդ դեպքը Սերվանտեսին ցույց տվեց, թե ի՛նչպիսի ուժ կարող էին ներկայացնել իրենցից նույն այդ գերիները, յեթե նրանց բոլորին պատրաստեն, կազմակերպեն և միացնեն:

Ֆիլիպի պատրաստած հարձակումը ինքնըստինքյան ապստամբություն էր հրահրում:

Յերբ իսպանական նավատորմը ծովից կպաշարի Ալժիրը և կսկսի ռմբակոծել, թուրքական բոլոր նավերի թիավարները միասին վայր կդնեն թիակները, իսկ ցամաքի վրա զինված ու պատրաստված գերիները թիկունքից կհարվածեն իրենց տերերին:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՄԵԾ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն րոպեյից, յերբ Սերվանտեսի գլխում վերջնականապես ձևակերպվեց և հասունացավ այդ միտքը, փաշայի բանտը դարձավ Ալժիրի բոլոր բանտերի մշտական շտաբն ու բանակցությունների վայրը:

Բաղնիքում անհանգստություն էր տիրում: Փաշայի նշանակած անողորմ ու ապորինի տուրքերը և տարվա անբերրիությունն ազգաբնակչությանը քաղցի ու հիվանդության մատնեցին, բանտերի կարգապահությունն ընկավ և այժմ գերիները յերկար ժամանակ նստում և նույն իսկ գիշերում էին իրենց ընկերների մոտ:

Արշավանքի լուրերն ավելի ու ավելի վորոշակի և ահավոր էին դառնում: Ֆիլիպ թագավորի մերձավոր Վասկեսն ինքն էր վարում արշավանքի պատրաստությունները: Փաշան դողում էր և կրկնապատկում պաշտպանության ձեռնարկումները:

Միգելի կողմից ընդհանուր բանտերն ու առանձնացման մազմորաները— բոլորն էլ նախազգուշացված էին և պատրաստվում էին ապստամբության: Գերիների յերեք քառորդն ընդգրկված էր դավադրության մեջ: Ամեն մի բակ ուներ իր փոքրիկ շտաբը և շտաբի յուրաքանչյուր պետը, ստուգված մի մարդ, պատասխանատու էր յուրայինների համար: Գերիները գուշակություններ էին անում, հուզվում, հուսահատվում և սպասում: Նույնիսկ դոկտոր Անտոնիո Սոզան ներգրավված էր դավադրության մեջ:

— Մաթեո Վասկեսն այժմ թագավորի աջ ձեռքն է,— ասաց Սոզան Միգելին,— Յես ճանաչում էի Վասկեսին, նա ուրիշների պես ստորաքարշ մարդ չէ: Նամակ գրիր նրան:

Յերկու ազատագրված գերիներ գտնվեցին, վորոնք հանձն առան նամակը տանել արքունիք, թագավորի ֆավորիտին:

Միգելը կազմեց ուղարկվելիք գրությունը: Նա աղերսում էր Վասկեսին՝ շտապեցնել արշավանքը: «Արշավանքը հեշտ կլինի— հավատացնում էր Միգելը,— խնդիրն այն է, վոր վոչնչացվեն թույլ ամրություններն ու ավելի վատ պահպանվող ավազակային բույնը: Ամեն որ դժբախտների խմբերը հայացքներն ուղղում են հորիզոնին, հուսալով հեռվում տեսնել իսպանական նավատորմը... Պայծառափայլ կոմս, ձեր ձեռքումն է տխուր բանտերի բանալին, վորտեղ վոչնչանում են քսան հազար քրիստոնյաներ...»

Մաթեո Վասկեսը նամակին չպատասխանեց:

Ամառը վերջանում էր, և ավելի ու ավելի պարզ էր դառնում, վոր Ֆիլիպի արշավանքը չի կայանա:

Յեվ զինվորական գործողությունների խիստ փըքուն պատրաստությունն ու զորքերը հարավային ափերին կենտրոնացնելը— այդ բոլորը կատարվում էր պատերազմի համար, բայց վոչ թե թուրքերի, այլ հարևան Պորտուգալիայի հետ: Թուրքերի վրա արշավանք կատարելու սուտ լուրը դիտմամբ էր տարածված: Ֆիլիպը սիրում էր հետքերը կորցնել:

Գերիները հուսահատության մեջ էին: Այն ժամանակ դոկտոր Սոզայի գլխում մի նոր միտք ծագեց:

Ալի Քաուրի բանտը հաճախող ազատագրվածներից մեկը Սողայի աչքին եր ընկել:

Ազատագրված Խիրոնը, կամ ինչպես մահմեդականներն եյին անվանում — Աբդ-ել-Ռահմանը, փրկանքով վաղուց ազատվել եր գերությունից, բայց տուն չեր վերադարձել: Հենց Իսպանիա մեկնելուց առաջ՝ Խիրոնը տանից լուր ստացավ, վոր իր ամբողջ ընտանիքն ու բոլոր հարազատները մեկ ամսում մեռել են սոսկալի վարակիչ ժանտախտ հիվանդությունից: Ազատագրվածը մնաց Ալժիրում, արմավի առևտրով զբաղվեց և փոքրիկ կարողություն ձեռք բերեց: Բայց ծերության հասակում նրան սկսեց տանջել հայրենիքի կարոտը: Նա փող չեր խնայում և պատրաստ եր ամեն ինչ տալ, վորպեսզի ոգնի փախչելու մտադրված հայրենակից իսպանացիներին:

Դավադիրների համար այդպիսի մարդն անգնահատելի յեր: Աբդ-ել-Ռահմանը բոլոր ծովահենների հետ բարեկամ եր և փաշան նույնիսկ հարգում եր նրան:

Սողան իր մոտ կանչեց Սերվանտեսին և բացատրեց նրան իր ծրագիրը:

— Խիրոնը կերթա Հասան փաշայի մոտ և կասի, վոր իրեն ձանձրացրել ե չորացած արմավի առևտուրը, վոր նա կամենում ե փորձել իր բախտը մեծ գործի մեջ: Խիրոնը փաշայից թույլտվություն կխնդրի մի նավ պատրաստելու ծովային արշավանքի համար:

Փաշան նրան թույլտվություն կտա: Խիրոնը կըվերցնի ուտելեղեն, թիավարներ, անձնակազմ, ծով դուրս կգա: Իսկ ծովում բոլոր թիավարները միանգամից ցած կդնեն թիերը, կկապեն անձնակազմին և կուղևորվեն դեպի իսպանական ափերը:

Միգելը լսեց Սողային:

— Վո՛չ, դա անպետք ծրագիր ե,— ասաց Միգելը:— Նավով կփրկվեն յերկու հարյուր հոգուց վոչ ավելի:

— Անհանգիստ մարդ, մի՞թե դա քեզ համար քիչ ե,— զարմացավ դոկտոր Սողան:

— Քիչ ե,— ասաց Սերվանտեսը,— իսկ մնացածնե՞րը: Իսկ իմ հազար հինգ հարյուր գերիներն ի՞նչ անեն: Վոգևորել նրանց յերևակայական ազատությամբ, իսկ միայն յերկու հարյուր մա՞րդ փրկել:

Սողան լուռ եր:

— Բայց կա մի ուրիշ հնարավորություն,— ասաց Սերվանտեսը:— Խիրոնի նավով դուրս գալ, հասնել Իսպանիա, այնտեղ մարդիկ և փող հավաքել, պատրաստել յերեք չորս զինված նավեր, վերադառնալ այստեղ և խռովություն բարձրացնել ամբողջ ծովափին:

Սողան լուռ, բացասաբար գլուխը շարժեց:

— Դուք կարծում եք, դոն Անտոնիո, վոր այդ անհնարի՞ն ե: Իսկ Սարխայի յոթ հարյուր մարդու ապստամբությո՞ւնը: Իսկ Մոստագանեմի ինն հազարանոց ապստամբությո՞ւնը:

Միգելը թեքվեց դեպի դոկտոր Սողան, սպասելով պատասխանի:

Նա դեռ չարունակում եր շարժել գլուխը:

— Հնարավո՞ր ե, թե վոչ,— համբերությունից դուրս գալով կրկին հարցրեց Սերվանտեսը:

— Այդ հնարավոր ե,— դանդաղ, շատ դանդաղ պատասխանեց դոկտոր Սողան,— բայց դրա համար արիություն ե պետք, մեծ արիություն: Յեվ զգուշություն, մեծ զգուշություն: Բայց այնուամենայնիվ առ այժմ հարկավոր ե, վոր փաշան արշավանքի թույլտվություն տա:

— Դու, Աբդ-ել-Ռահման, ծերության հասակում բա՞խտդ ես ուզում փորձել, զիջողաբար ասաց փաշան,— ծովի վրա ավա՞ր ես վորոնում: Ի՞նչ կա վոր, փորձի՛ր:

Ալժիրի փաշայի անունը Հասան եր: Նրա գլուխը փաթաթված եր ձյունի պես սպիտակ չալմայով և դեմքը ծածկված եր լայն ու չխուզված մորուքով, ինչպես արաբներինը: Բայց չալմայի տակից նայում եյին յեվրոպական յերկնագույն աչքեր, և դեմքից ու բոլոր շարժումներից հեշտությամբ կարելի յեր գուշա-

կել, որ փաշան ծովափնյա Վենետիկի խորամանկ սերունդի ծնունդ է:

Խիրոնը նրա առջև հեզությամբ ծունկ էր չոքած, մահմեդականների սովորության համաձայն ձեռքերը կրծքին խաչած:

— Բայց ինձ համար այնպիսի ավար չբերես, ինչպես Ջաֆարը կամ Մալ'տրապիլլոն,— շարունակեց փաշան:— Ջաֆարն այս գարնանը հինգ հակ Թրջված բրինձ և մի տասնյակ այծ բերեց, իսկ Մալ'տրապիլլոն ավելի վատ՝ մի փոքրիկ տակառ քացախ և յերեք կիսակենդան գերի:

— Ալլահը պահի ինձ առաջինի յերկչոտությունից և յերկրորդի անհաջողությունից,— ավելի խոր խոնարհվեց Խիրոնը, քմծիծաղ տալով բեխի տակ:— Մի ուրիշ վողորմություն էլ եմ ուզում խնդրել իմ տիրոջից, վոր Թույլ տաք Թիավարներ ընտրեմ ծովահենների գերիների միջից:

— Վորտեղից ուզում ես ընտրիր, իմ բանտերից էլ կարող ես,— սիրալիր ասաց փաշան,— բայց այդ դեպքում արդեն ավարի վոչ Թե հինգերորդ, այլ չորրորդ մասն է իմը:

— Ալլահը Թող վարձատրի քեզ, տե՛ր իմ,— խոնարհվեց Խիրոնը հետ գնալով դեպի դուռը:— Թշնամիներիդ գլուխները Թող ձիուդ վոտների տակ ընկնեն...

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՍՈՒՐԲ ՀԱՎԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԸ

Ազատագրված Խիրոնը յերկու հարյուր գերի վարձեց և նավահանգստում կառուցում էր մի նոր ու մեծ նավ:

Գերիներն իրենց ձեռքով կառուցում եյին այն նավը, վորն իրենց պետք է հայրենիք տաներ:

— Աբդ-էլ-Ռահմանը ծերության հասակում մտադրվել է ծովահեն դառնալ,— ծաղրում եյին ալժիրցիները:— Թող Ալլահը հաջողություն տա նրան:

Խիրոնը յուրաքանչյուր գերու համար նրանց տերերին վճարում էր ոսկյա հինգ բլանկո: Խիրոնի համեստ դրամագլուխը յերկար չբավականացավ: Նա գնաց իրեն ծանոթ յերկու հարուստ իսպանացի վաճառականների մոտ—Եկզարխի ու Տորրեսի— և հայտնեց նրանց փախուստի ծրագիրը:

— Յերկու հարյուր մարդ է մեկնում ինձ հետ,— բացատրեց Խիրոնը վաճառականներին,— նրանցից քառասունից վոչ պակաս ազնվատոհմ ու հարուստ մարդիկ են: Հայրենիքում նրանք ձեր պարտքը տոկոսներով լրիվ կվերադարձնեն:

Փաստը համոզիչ էր և վաճառականները բաց արին իրենց սնդուկները Խիրոնի առաջ:

Դեռ յերբեք Ալժիրի նավահանգստում աշխատանքն այնպես առաջ չէր գնացել:

Մարտին նավը ջուրն իջեցրին:

Միգելին այնքան ամիսներ տանջող տենդն այժմ իր գագաթնակետին հասավ: Կրոնավորները վխտում եյին գերիների մեջ: Նույն իսկ այստեղ, աֆրիկյան այս ափին, դոմինիկյանները հետապնդում եյին ազատամիտներին ու հերետիկոսներին: Նրանք լրտեսում եյին նորեկների մեջ:

Ամեն որ վորևէ մեկը կարող էր բերանից խոսք Թռցնել: Սերվանտեսը ցերեկները բերանը փակում էր, իսկ գիշերը վեր էր ցատկում և ինքն ականջ դնում իր զառանցանքներին: Նա իրեն վրա վստահ էր: Բայց ի՞նչպես յերաշխավորել այն գաղտնիքի համար, վոր վստահել էր մի քանի հարյուր մարդկանց:

Գաղտնիքը իմացողների Թիվը քանի գնում ավելանում էր:

Միգելը նայում էր ամենքի աչքերին, արդյո՞ք նա բերնից խոսք չի փախցրել, ա՞րդյոք չի վաճառել իրենց, վորևէ բանով չի՞ մատնել արդյոք ինքն իրեն և ուրիշներին:

Արդեն ամեն ինչ սարքավորված էր, նավակողերն ամբողջովին ձյութված և պարանասարքերն ստուգված: Արդեն բարձել եյին նավին խմելու ջուր, բրնձի

ու պաքսիմատի հակեր, քացախի ու ձիթապտղի յուղի տակառներ: Արդեն սպասավորը այլանդակ մարաքուն —մահմեդական կախարդը— դեպի արևելք դարձած աղոթեց, ջրի ու փոշխարի արյան մեջ նայելով անձնակազմի համար գուշակեց բարեհաջող քամի ու հարուստ ավար: Յեվ արդեն նշանակեցին մեկնելու ժամկետը — ապրիլի 15-ի առավոտը:

Ապրիլի 10-ին առավոտյան Սերվանտեսը բոլոր տակերից հավաքված վստահելի գերիներին վերջին կարգադրությունները արեց:

Բոլորը ցրվեցին: Գերիներից մեկը, մալագացի յերիտասարդ հովիվ Գաբրիել Կարինեսը, վորը նորերս եր գերի ընկել, չեր հեռանում: Նա վարանած կանգնել եր ու շփոթված նայում եր Սերվանտեսին, կարծես ինչ-վոր բան եր ուզում ասել, բայց չեր համարձակվում:

— Ի՞նչ ե, Գաբրիել,— հարցրեց Միգելը, նախազգալով դժբախտություն,— դու ուզում ես ինձ վորեվե բա՞ն հաղորդել:

— Այո՛...— վարանեց Գաբրիելը, —յես ուզում եյի... Յերեկ յես խոստովանվեցի քահանային և ստիպված եյի....

— Դու խոստովանվեցի՞ր, Գաբրիել,— լալեց Սերվանտեսը,— ո՞ւմ:

— Յես ինքս ել լավ չգիտեմ, դոն Միգել: Յես յերեկ գնացի մեր Սան-Պեդրոյի մատուռը՝ քահանա փնտրելու: Ճանապարհ եմ գնալու, մտածում եմ, և աստված գիտե, թե ի՞նչ կարող ե պատահել ծովի վրա: Պետք ե խոստովանվել և մեղքերի թողություն ստանալ: Մատուռի մոտ ինձ մի դոմինիկյան կրոնավոր մոտեցավ և հարցրեց, թե ո՞ւմ եմ յես փնտրում: «Կանոնիկոս հայր Ֆրանցիսկոյին,— բացատրեցի յես կրոնավորին,— «յես վտանգավոր ճամբա յեմ գնալու, և մեկնելուցս առաջ ուզում եմ խոստովանվել: «Իսկ ո՞ւր ես մեկնում»,— հարցրեց նա,— «և ինչո՞ւ յե վտանգավոր ճանապարհը»: Այստեղ յես տատանվեցի,

իսկ նա ասաց. «Հայր Ֆրանցիսկոն հիմա այստեղ չե, բայց յես նույնպես ատծու պաշտոնյա յեմ և կարող եմ մեղքերիդ թողություն տալ»: Յեվ կրոնավորն ինձ տարավ խոստովանության և ամեն ինչի մասին հարց ու փորձ արեց:

— Յեվ դու ամեն ինչ ասացի՞ր նրան,—գունատվելով հարցրեց Սերվանտեսը:

— Ստիպված եյի ամեն ինչ ասել, դոն Միգել,— լացակումած պատասխանեց Գաբրիելը:

Յեվ անո՞ւնը: Դու նրան անուննե՞րս ել ասացիր:

— Միայն ձեր անունն ասացի, դոն Միգել և այն ել պատահաբար... Ախր նա վոչ վոքի չի պատմի, դոն Միգել, չե՞ վոր խոստովանության գաղտնիքը....

—Ի՞նչ արեցիր, ա՜խ, այդ ի՛նչ արեցիր, Գաբրիել,— գլուխը բռնեց Սերվանտեսը:— Իսկ կրոնավորը իր անունն ասա՞ց:

— Այո՛, դոն Միգել: Նա ասաց, վոր իր անունը Բլանկո դե լա-Պաս ե:

Այդ որը Միգելը համարյա կիսամեռ յեկավ դոկտոր Սոզայի մոտ:

— Գուցե դեռ ամեն ինչ կորած չե՞,— ասաց Սոզան, Միգելին լսելուց հետո:—Գուցե Բլանկոն մեզ չի մատնի փաշային:

Նրանք յերկար խորհրդակցում եյին բակի անկյունում, իսկ յերեկոյան Սերվանտեսը գնաց բոլոր բանտերը՝ կարգադրություններ անելու:

Բոլոր գերիները պետք ե այնպես կարծեյին, վոր վոչինչ չի փոխվել: Մեկնելը չեր հետաձգվում և բոլոր պատրաստությունները առաջվա պես շարունակվելու եյին: Բայց յուրաքանչյուր բանտի վստահելի գերուն, այսինքն բանտային փոքրիկ շտաբի պետին, Սերվանտեսը հայտնեց վտանգի մասին: Նրանք պետք ե պատրաստ լինեն, վոր վերջին գիշերը մեկնելուց առաջ, պայմանավորված նշանով մեկնելու ժամկետը կփոխվի:

Այդ ամբողջ օրը, նաև հաջորդ օրը Սերվանտեսը արտասովոր սպասում էր փաշայի վորևէ կարգադրությանը — տանջանքների կամ հարցաքննության:

Բայց փաշան հանգիստ էր: Գուցե, նա իսկապես վոչինչ չգիտե՞ր:

Այսպես սկսվեց մկան ու կատվի խաղը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՄԿԱՆ ՈՒ ԿԱՏՎԻ ԽԱՂԸ

Անցավ ամսի տասներկուսը, տասնչորսը, բայց փաշան վոչ մի անհանգստություն չէր ցուցաբերում: Հասավ տասնչորսի յերեկոն: Գաբրիելը յերեկոյան նավահանգստումն էր: Նա շրջեց նավահանգստի մոտ գտնվող փողոցները:

— Ամեն ինչ հանդարտ է,— ասաց Գաբրիելը Սերվանտեսին,— նավահանգստում սովորական պահակախումբ է, զորանոցներում քնած են և վոչ մի պատրաստություն չկա: Փաշան վոչինչ չգիտե:

— Յես գիշերը մեկ անգամ էլ կգնամ, Գաբրիել,— ասաց Սերվանտեսը:

Յերբ գիշերը քաղաքը լռեց ու հանդարտվեց, Միգելը փողոց դուրս յեկավ:

Խավար ու լուռ էր: Քաղաքի վերին մասերից լըսվում էր պահակների բուհի պես սուր ու կտրուկ կանչը:

Կատարյալ խավարի մեջ խարխափելով՝ Սերվանտեսն անցավ ծածկված նրբանցքով և պատերի տակ թագնվելով սկսեց դիմել դեպի նավահանգիստ տանող փողոցը:

Փողոցի շրջապտույտում քիչ մնաց նրան վայր գցեյին: Մի քանի ստվերներ անաղմուկ սահեցին իր մոտից և ծածկվեցին անկյունում:

Սերվանտեսը թագնվեց պատի խորքում և շունչը պահեց:

Մի րոպե անց դարձյալ մի քանի յենիչերիներ ըզգույշ քայլերով անցան:

Հավասար ընդմիջումներով այդպես անցան Սերվանտեսի մոտով Կազբի նեղ նրբանցքով հինգ թե վեց խումբ զինվորներ:

Սերվանտեսը չհամարձակվեց այլևս նավահանգիստ գնալ այդ նրբանցքով: Հիշելով, վոր կա ևս մի շրջապտույտ փողոց, նա անձայն հեռացավ պատից և հետ գնաց: Նա անցավ շուկայի դատարկ հրապարակով, փակ խանութների մոտով դեպի քարաշեն կիսավեր պատը, նրա անցքից իջավ խրամատը և սողաց նրա հատակով:

Խրամատը դեմ էր առնում կիսաբոլորակ ցածր շենքի հետևի խուլ պատին: Դա զինանոցն էր: Նրա ճակատը դարձած էր դեպի նավահանգիստը: Այստեղ զենքերն եյին պահվում և զինանոցի դռները միշտ ամուր փակված եյին ու փոքր լուսամուտները խավար:

Սերվանտեսը վոտի կանգնեց, վորպեսզի շենքի կողքից պտույտ տալով՝ նավահանգիստ հասնի: Հանկարծ նրան թվաց, վոր շենքի ներսից նա ինչ-վոր շարժումներ է լսում: Նա հասավ մինչև անկյունը և զգուշությամբ նայեց:

Զինանոցի ցածր դռնակները բացվում ու փակվում եյին: Կռացած զգուշորեն ներս եյին մտնում այնտեղ յերեքական, չորսական մարդ:

Քսան րոպեյում Սերվանտեսի աչքի առաջ դռնից ներս մտան հիսուն հոգուց վոչ պակաս:

Ամեն ինչ պարզ էր: Բլանկոն մատնել էր գերիներին: Փաշան նախազգուշացված էր և հարված էր պատրաստում:

Փաշայի ծրագիրը պարզ էր: Վորպեսզի չխրտնեցնի դավադիրներին, նա դիտմամբ մինչև այժմ չէր ցույց տալիս, թե վորևէ բան գիտե, բայց գիշերը նա ուժեր էր կենտրոնացնում նավահանգստում: Զինանոցի շենքը գտնվում էր Խիրոնի նավի կանգատեղի

հենց մոտը: Փաշան ուզում էր գերիներին հնարավորություն տալ հավաքվելու նավի վրա և հենց մեկնելուց առաջ հարձակվել նրանց վրա: Այդ դեպքում բոլոր գլխավոր դավադիրները միանգամից նրա ձեռքում կլինեյին:

Նույն ճանապարհով էլ, չուկայի միջով, Սերվանտեսը վերադարձավ քաղաք:

Այդ գիշեր Ալժիրի բոլոր բանտերի պատերի տակ հսկող գերիները լսեցին բուեճի յեռակի կանչը և պատասխանեցին պայմանական մեղմ սուլոցով:

Նավի մեկնումը հետաձգվում էր: Փաշան ճիրանները բաց կանի, վորպեսզի հարվածի, բայց թաթը կիջեցնի դատարկ տեղում:

Շրջապատելով բոլոր բանտերը՝ Սերվանտեսն ուղղվեց դեպի իր բանտը, բայց չուտով դանդաղեցրեց քայլերը և կանգ առավ:

Յերբ փաշան իմանա, վոր իր ծրագիրը խորտակվել է, նա ամենից առաջ կհարձակվի այն դավադիրների վրա, վորոնց անունները արդեն իրեն հայտնի յեն:

Նա կտանջի նրանց, մինչև վոր մյուսների անուններն էլ իմանա:

Հանկարծակի թուլությունը, մարդկային թուլությունն ու սարսափը համակեցին Միգելին: Նա նստեց մի պատի տակ սալահատակին: Նրան մեկ անգամ արդեն հարցաքննել էր փաշան: Նա ուժ չուներ կրկին հարցաքննվելու.

Այդպես էլ Միգելն այդ գիշերն անցկացրեց ուրիշի տան պատի տակի սալահատակի վրա: Առավոտյան վեր կացավ և գնաց, ինքն էլ չիմանալով թե ուր:

Նա այդպես թափառեց մինչև կեսօր և ինքն էլ չնկատեց թե ի՞նչպես ընկավ քաղաքի արևմտյան հարուստ թաղամասը, վոր ավելի խաղաղ էր, քան մյուսները:

Փակ սպիտակ տներ, ամեն մի դռան առաջ անպայման հալվեյի թութ: Լուսամուտ չունեն: Միայն մի տեղ չիկացած սպիտակ պատի վրա մի վանդակապատ աչք: Լուսամուտները բացվում են ներսի կողմը, դեպի ներքին բակը. այնտեղ ջրի ծփյուն է, կանաչի ձայներ և խաղացող յերեխաներ:

Հանկարծ Միգելը մի բան հիշելով կանգ առավ: Հենց այդ թաղամասում ապրում է Ոնոֆրիո Էկզարխը, այն յերկու հարուստ վաճառականներից մեկը. վորոնք գիտեյին իրենց դավադրության մասին և դրամով ոժանդակում եյին Խիրոնին:

Միգելը միայն այժմ զգաց, թե վորքան հոգնած է ու քաղցած:

Նա գնաց վաճառականի մոտ: Վերջինս հանդիստ նստած եր տան շեմքին և քարի վրա ածուխով ինչ վոր հաշիվներ եր գրում:

— Դուք դեռ վոչինչ չե՞ք լսել, դոն Ոնոֆրիո,— կանգ առավ նրա առջև Սերվանտեսը:

— Վո՛չ, իսկ ի՞նչ է պատահել,— անհանգստացավ վաճառականը:

— Փաշային հայտնել են և մեր ծրագիրը խորտակվեց,— ասաց Սերվանտեսը:— Յես իմ բանտից դուրս յեկա և չեմ կարող հետ վերադառնալ:

Սերվանտեսը մոտեցավ վաճառականին: Բայց վերջինս կանգնեց և հետ գնալով փակեց մուտքը նրա առջև:

— Յեվ դու յեկար այստեղ ի՞նձ կործանելու,— դունատված չրթունքներով հազիվ խոսեց վաճառականը:— Գնա՛, շուտ գնա՛ այստեղից:

Սերվանտեսը հետ քաշվեց միանգամից չհասկանալով:

Նա արդեն ուզում եր շուռ գալ ու հեռանալ, բայց վաճառականը մի րոպե տուն վազելով՝ անմիջապես հետ յեկավ մի ծանր քսակ ձեռքին:

— Վերցրու, վերցրու, այս քեզ,— նա կոխում եր քսակը Միգելի ձեռքը:— Սրա մեջ փող կա, շատ փող: Գնա մուծիր քեզ համար կրկնակի, յեռակի

փրկանք: Նստիր հենց առաջին նավն ու մեկնիր այստեղից: Եթե դու մնաս, քեզ կբռնեն ու կտանջեն, դու կմատնես ինձ ու Տորրեսին և այն ժամանակ մենք կորած ենք: Շուտ գնա, (թերևս փրկիչների միաբանությունը*) քեզ թաքցնի, այդքան փող ունեցողին նրանք չեն վանդի:

— Ո՛չ,— ասաց Սերվանտեսը — ուշ է: Ես կրոնավորների մոտ չեմ գնա: Նրանք արդեն ինձ մեկ անգամ ծախեցին:

— Վերցրո՛ւ, վերցրու,— Եկզարխը նրա ձեռքն էր կոխում վոսկին, չլսելով նրա պատասխանը,— գնա՛ ծովահենների մոտ, Մայորապիկյոյի մոտ, նա այս գարնանը սնանկացել է և փաշայի հետ լավ չէ: Նա քեզ կնստեցնի իր նավն ու կտանի:

— Ո՛չ,— ասաց Սերվանտեսը ու թափահարեց գլուխը: Կես րոպե անց նա արդեն քայլում էր դիք փողոցով դեպի վեր, Ալժիրի մյուս թաղամասը:

Նրա վոտքերը ծալվում էին և գլուխը՝ պտտվում:

Նա գնում էր քաղաքի վերին մասը, արհեստավորների թաղը — կլայեկողների, կոշկակարների և դերձակների թաղամասը:

Այնտեղ նա մի ընկեր ուներ— Դիեգո Կաստելլիանո:

Դիեգոն առաջներում Դալի-Մամիի գերին էր: Նա յերկու տարի առաջ փրկանքով ազատվել էր, բայց Իսպանիա չէր մեկնել: Դիեգոն բնակվեց այստեղ Ալժիրում և ամուսնացավ արաբ գեղեցկուհի Այշեյի հետ, մահմեդականների թաղամասում կոշկակարի արհեստանոց բաց արեց և իր կրպակի դռների առաջ նստած ուրախ կարում էր կոշիկներ և մերթ անդալուզական, մերթ արաբական յերգ էր մրմռում:

Միգելին նա հասկացավ խոսքի կեսից և առանց հարց ու փորձ անելու տարավ իր արհեստանոցը: Փոքրիկ դռնակն այնտեղից տանում էր նեղ ու բո—

---

*) Փրկողների միաբանությունը զբաղվում էր գերի ընկած քրիստոնյաներին փրկագնելով:



լորովին մութ մառանը։ Այնտեղ, միայն ներքևում, հենց գետնի մոտ դրսի պատի վրա գտնվող ողանցքից արևի պայծառ շողքն ընկնում էր հատակին։

Այս մութ մառանում, այծերի ու յուղերի կաշիների սուր հոտի մեջ, Սերվանտեսն անցկացրեց մեկ շաբաթից ավելի։ Մառանի դրսի պատն անմիջապես դեպի փողոց էր դուրս գալիս և հատակի կաշիների կույտի վրա պառկած հենց ողանցքից Սերվանտեսը լսում էր արաբական թաղամասի ձայներն ու աղմուկները։

Իններորդ օրվա ցերեկը Սերվանտեսը փողոցից աղաղակ լսեց, որից նրա արյունը սառեց երակներում։

— Գուցե ինձ թվա՞ց միայն,— մտածեց Սերվանտեսը։

Ձայնը լռեց, կանչողը հեռացավ։ Բայց մարդը վերադարձավ և աղաղակը կրկնվեց։

— Լսեցե՛ք, լսեցե՛ք, լսեցե՛ք,— կանչում էր սուր ու անտարբեր ձայնով Ալժիրի մունետիկը։— Լսեցե՛ք բոլորդ։ Փաշայի մի ձեռնանի գերի Սերվանտեսը բանտից փախել է... Նրան թաքցնողին փաշան մահվան պատիժ կտա... Ով նրան փաշային կհանձնի, նա հարյուր ոսկի պարգև կստանա... լսեցեք բոլորդ... հարյուր ոսկի պարգև...

Դիեգոն նույնպես լսեց։ Նա մառան մտավ։

— Դա ոչինչ բան է,— հանգիստ ասաց Դիեգոն,— պառկիր ու լուռ կաց։ Քեզ այստեղ ոչ ոք չի գտնի։

— Ո՛չ,— ասաց Սերվանտեսը,— դու կարող ես տուժել, Դիեգո։ Ես պատճառ չեմ լինի, որ դու ուրիշի համար պատասխան տաս։

Մի ժամից հետո նա արդեն փողոցում ցած էր իջնում դեպի շուկա։ Դիեգոն նրան տվեց աղատագրվածի հին թիկնոց ու լայնեզր գլխարկ։

Նա քայլում էր դանդաղ և անվստահ նայում էր հանդիպողներին։

Արևն անտանելի կերպով այրում էր նրա մերթ ճակատը և մերթ մեջքը։

Թափառաշրջիկ քոսոտ շներն առուներից ջուր էյին խմում և պոչերը շարժում։

Առանց չադրայի*) բորոտ կինը ծռված բերանով խոխոում էր և չաչանակ խփում։

Թուրք յերեխան սանդալներով հարվածում էր ալեխառն մորուքով հրեային նրա համար, որ նա մզկիթի մոտով անցնելիս ոտնամանները չէր հանել։

Ալժիրն իր կյանքովն էր ապրում՝ չմտածելով գերու մասին։

Սերվանտեսը հանգստանալու համար նստեց մի ինչ որ պահեստի քարե լայն նստարանին։ Քիչ անց նույն նստարանին նստեցին յերկու Թուրք, մեջքով դեպի նա։ Սերվանտեսը նրանց դեմքը չէր տեսնում, բայց լավ լսում էր նրանց խոսակցությունը։

— Վաղը մենք շատ աշխատանք ունենք, Ալի՛, ո՛չ շատ աշխատանք,— ասաց մեկը։

— Ինչո՞ւ — ծուլորեն հարցրեց մյուսը։

— Վաղը փաշան Առյուծի բանտի բոլոր գերիների հարցաքննությունն է նշանակել։ Այնտեղ դավադրություն է բացվել, բայց գլխավոր դավադիրը փախել է և փաշան ուզում է գերիներից դուրս քաշել մնացած դավադիրների անունները։ Նա մինչև իմանալը պետք է հարցաքննի։ Իսկ յեթե չիմանա, յուրաքանչյուր տասից մեկին պետք է մահապատժի յենթարկի ու կախի։

Նստարանից մի փոքրիկ քար ընկավ և գլորվեց սալահատակի վրայով։ Թուրքերը գլուխները շուռ տվին։ Նրանց մոտ մեջքով նստած թիկնոցով մարդն արագ վեր կացավ և գնաց Հասանի պալատի ուղղությամբ։

*) Այդ ժամանակներում Ալժիրում առանց չադրայի մոտ էյին գալիս հրեուհիները, նեգրուհիները ու բորոտ կանայք։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԶԱՄԱՌ ԻՍՊԱՆԱՑԻՆ

Փաշան նստած էր ցածր գահին, գորգե բարձերի վրա: Նրա շուրջը, բազմոցների վրա, ծալապատիկ նստել էին խորհրդականներն ու մերձավորները:

Ծառաները, յենիչերիներն ու սովորական հանդիսատեսները խռնվել էին չորս կողմը:

Նոր պատրաստված կախաղանը գտնվում էր քիչ հեռու:

Այս անգամ փաշան իր պալատի ծածկված մուտքը բաց էր արել բոլորի համար: Նա ցանկանում էր այդ հարցաքննություն—մենամարտությունը հանդեսի վերածել, որտեղ միմիայն ինքը կարող էր հաղթել:

Սերվանտես Սաավեդրան դերու ցնցոտիների մեջ շղթայակապ կանգնած էր նրա առջև:

— Դու ինքդ, քո ցանկությա՞մբ ես յեկել ինձ հետ խոսելու, կռնատ,— սկսեց փաշան:

— Այո՛, տեր,— պատասխանեց Սերվանտեսը:

— Ցեվ պատրա՞ստ ես իմ բոլոր հարցերին պատասխանելու:

— Պատրաստ եմ, տե՛ր:

— Լա՛վ: Ասա, ո՞վքեր են դավադրության ղեկավարները:

— Միայն յես, տե՛ր:

— Միայն դո՞ւ յես համոզել բոլորին և նավի կառուցման համար փող ձեռք բերել:

— Միայն յես, տեր:

— Կռնա՛տ, դու յեկել ես այստեղ ինձ ծաղրելո՞ւ:

Փաշան նշան արեց և նեգր ծառան կախաղանի փայտից քարշ արեց օղակավոր պարանը: Փաշայի թիկնապահ Ահմեդը մոտ ցատկեց և օղակը դցեց Սերվանտեսի վիզը:

— Այսպես դու շատ ավելի բան կասես,— խաղաղասիրաբար ասաց փաշան:— Սկսենք սկզբից, դու մենա՞կ մտածեցիր ու գործադրեցիր այդ դիվային դավադրությունը: Դո՞ւ ցանկացար զրկել ինձ իմ գերի-



ներից և նավերից։ Դո՞ւ իմ ամբողջ քաղաքն ուզեցիր ապստամբեցնել իմ դեմ։ Դու համախոհներ չունեյի՞ր։

— Չունեյի, տե՛ր։

— Ձգեցեք պարանը։

Նեգրը ձգեց պարանի ծայրը և օղակն ամուր սեղմեց Սերվանտեսի կոկորդը։

—Դե՛, ասա, ո՞վ էր քեզ հետ։

Սերվանտեսը գլուխը բացասաբար շարժեց։

— Ասա՛, թե չէ մեկ վայրկյանից դու վերևում կճոճվես։

Փաշան մատնացույց արեց կախաղանի վերևի փայտը։

Սերվանտեսը լուռ էր։

— Ավելի ուժեղ ձգեցեք պարանը։

Օղակն ավելի սեղմվեց և այնպես հուպ տվեց կոկորդը, վոր Միգելի աչքերն ու քունքերն արյունով լցվեցին։ Նա մի քայլ հետ գնաց և տատանվեց, հազիվ պահելով հավասարակշռությունը։ Նրան թվում էր, թե գետինն իր ոտքերի տակից փախչում է։ Նա մի քայլ էլ արեց և ոտքերն իրարից հեռացնելով՝ ամուր հենվեց գետնին։

— Կասե՞ս — նորից հարցրեց փաշան։

Սերվանտեսը գլուխը թափ տվեց։

— Ուժեղ ձգեցեք պարանը...

Ամբոխը ցնցվեց։ Տանջվողի աչքերն արյունով լցվեցին։

— Հիմա կասի՛,— բացականչեց Ահմեդը։

Սերվանտեսը կարծես թե իսկապես ուզում էր ասել։

— Թուլացրեք պարանը,— շտապեց փաշան,— ասա՛, կռնաս,— յես քո բոլոր խնդրածը կտամ։ Ասա՛ դու համախոհներ ունեյի՞ր։

— Այո՛, ունեյի,— շնչահեղձ ասաց Սերվանտեսը։

— Թուլացրեք օղակը։ Մոտեցի՛ր։ Ասա՛, ո՞վքեր էին, քանի՞սն էին։

Սերվանտեսը լուռ օրորվում էր։

— Չորս հոգի — ասաց նա։

Ամբոխը պապանձվեց։ Նա հայտնում է։

— Լուիս դե-Գարխիա...— սկսեց Սերվանտեսը։

— Ե՞լ ով, ե՞լ ով։

— Թոմաս Սոլանո, Ալոնսո դե-Նավարրա, Ռաֆայել դե-Ռապլիտա։

Ամբոխն աղմկեց։

Դրանք այն չորս ազնվական և հարուստ գերիների անուններն էին, վորոնք ճիշտ յերեք շաբաթ սրանից առաջ փրկանքով ազատվեցին և բարեհաջող մեկնեցին իսպանական նավով։

Փաշան կատաղությունից մթագնեց։

— Ձգեցեք պարանը,— ցույց տվեց նա ձեռքով։

Օղակը նորից սեղմվեց վզին, շնչահեղձ անելով նրան։

— Ոչի՞նչ չես ասի այլևս։

— Ո՛չ։

Նեգրն ավելի ուժեղ ձգեց պարանը։

— Ոչի՞նչ։

— Ո՛չ։

Նեգրը համարյա կախվել էր պարանի ծայրից։

— Ուրիշ ոչի՞նչ։

Սերվանտեսը լուռ, ձեռքով ցույց տվեց իր փակ բերանը, սեղմված կոկորդը և բացասաբար շարժեց գլուխը։

Պարանն ավելի յեր սեղմում նրա վիզը։ Սերվանտեսի աչքերի առաջ կրակե շրջանակներ գոյացան։

Նա լուռ էր։

Յեվ այստեղ փաշան շփոթվեց։ Փաշային հարկավոր էր միայն ձեռքով մի փոքրիկ շարժում անել, վորպեսզի այդ անհանգիստ իսպանացին ճոճվեր ոդում։ Յեվ յեթե այստեղ ամբոխն աղմկեր, թշնամական խոսք շպրտվեր, կամ ընդհակառակը պաշտպաներ Սերվանտեսին,— դրանով հարցը վճռված կլիներ։ Բայց ամբոխը լուռ էր, զսպված, ահավոր, և փաշան շփոթվեց։ Նա չէր հասկանում լռության իմաստը։

Այսպես տևեց մի քանի վայրկյան։

— Տարե՛ք դրան,— ասաց վերջապես փաշան, յերեսը դարձնելով:— Յես այլևս չեմ ցանկանում նրա մասին վոչ լսել և վոչ ել գիտենալ: Տարեք դրան և գցեք Ոձափոսը:

Ամբոխը հետ քաշվեց, վախեցած խուսափելով բակի միջով տարվող մարդուց:

Սերվանտեսը գնում եր կորացած, շուրջը վոչինչ չտեսնելով, տանջանքից կուրացած աչքերով առջևը նայելով: Իր ամբողջ արիությունը, չորս տարվա գերության մեջ կոփված կաստիլիացու ամբողջ համառությունը կոտրվեց այդ հարցաքննության ժամանակ: Փաշայի բակից որորվելով դուրս եր գալիս կորացած, յերեխայի պես դողացող ու թույլ, վողորմելի մի գերի:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

ՈՁԱՓՈՍԸ

Խավար: Կատարյալ խավար: Վոչ լույսի շողք, վոչ արտացոլում և վոչ ել մի դորշ հետք: Խավար: Ձախ պատից թափանցում ե դարշ խոնավությունը և ջրի կաթիլները ձեռքի վրայից ծուլորեն գլորվում են գետնին: Պատի մոտ հատակին լճացած ե ջուր: Յերբեմն լճացած ջրի միջով վազում ե առնետը, դիպչելով ձեռքին: Վոչ մի լույսի շող, մարդկային վոչ մի ձայն և վոչ մի հնչյուն:

Դուրս միակ ողանցքը տանում ե դեպի հենց նույնպիսի ստորերկրյա խավար միջանցք: Յերբեմն դուռը բացվում ե և մեկը շոշափելով դնում ե սափորով ջուր և յերկու յերեք չոր բլիթ: Ուրիշ վոչինչ:

Վզի յերկաթե պինդ ողակի հաստ շղթան ամրացված ե վոտքից— չի կարելի ձգվել, չի կարելի կանգնել, կարելի յե միայն կռանալ:

Ժամանակի հաշիվը կորել ե: Ազատության մեջ ժամանակը չափվում ե արևով, քնի և աշխատանքի ժամերով: Այստեղ վոչնչով կարելի չե ժամանակը չափել և նա անհասկանալի յե անցնում: Յերբեմն նա

թռչում ե րոպեների պես, յերբեմն ձգվում տարիների պես:

Ինչ վոր շատ յերկար ժամանակ անցնելուց հետո— պատմությունը հայտնի յե, վոր հինգ ամսից ավելի— պահապանի ձեռքը դռնից ներս մտնելով հատակին թողեց ջրից ու բլիթներից բացի, պղնձե ճրագ, թղթի մի կապոց, թանաք և սագի մի քանի փետուր:

Թե ով խղճաց գերուն, և աղաչեց կամ կաշառեց պահապանին, այդպես ել անհայտ մնաց:

Այդ որվանից թմրությունն անցավ: Սերվանտեսը գրում եր, գրում եր տենդորեն, քնելու համար հազիվ կտրվելով աշխատանքից, իսկ արթնանալիս նորից եր վերցնում գրիչը:

Նա գրում եր Ալժիրի մասին, գերիների և մավրերի մասին, ստրկության սարսափների մասին, բռնության, դաժանության մասին, այն ամենի մասին, ինչ նա տեսել եր գերության այդ տարիներին:

Սերվանտեսի համար ժամանակը հասկանալի դարձավ: Այժմ նա ուներ աշխատանքի և քնի ժամեր:

Դատարկությունը չքացավ, խավարն ամբողջովին լցվեց հենց իր ստեղծած կերպարանքներով: Նրանք վերացրին նրա մենակությունը:

— Լավ հսկեցեք այդ չոլախ իսպանացուն,—ասաց փաշան իր յենիչերիներին, հիշելով մեկ անգամ Սերվանտեսի մասին:— Քանի դեռ նա յերեք կողպեքի տակ ե գտնվում, յես կարող եմ հանգիստ լինել իմ նավերի, իմ գերիների և իմ ամբողջ քաղաքի համար:

Յեվ Սերվանտեսին լավ եյին հսկում:

Նա ինքն ել մոռացավ իր ծրագրերի և փախուստի մասին: Նա չեր լսում, թե ինչպե՛ս ե բացվում իր դուռը, ինչպե՛ս որական յերկու անգամ զենքերը զրնգացնելով վերևում փոխվում եր պահակը:

Գերիները տանջվում եյին իրենց բանտերում, փրկանքով ազատվում եյին կամ մեռնում: «Այրի հերոսի» մասին սկսեցին մոռանալ:

Բայց մի քանի մարդ տանը, թերակղզու վրա հիշում եյին Միգել Սերվանտեսին:

Ծերունի դոն Ռոդրիգոն չէր կարողանում հանգըստանալ՝ քանի դեռ իր կրտսեր վորդի Միգելը մնում էր Ալժիրում գերության մեջ:

Նա ընտանիքով տեղափոխվեց Մադրիդ, ապրում էր աղքատիկ վաստակով և աշխատում էր վորդու ազատագրման համար:

Դոն Ռոդրիգոն այնքան համարձակություն ստացավ, վոր խնդրագիր ներկայացրեց թագավորի անունով և նրան կցեց վկաների պաշտոնական ցուցմունքները, վորոնք հաստատում էին Միգելի պատերազմներում ցույց տված քաջագործություններն ու հերոսական վարմունքը գերության մեջ:

Ծերունին մեռավ՝ թագավորից իր դիմումի պատասխանը դեռ չստացած:

Կինն ու աղջիկները շարունակեցին ապրել Մադրիդում: Մեծ աղջիկը՝ Լուիսան չկարողացավ տանել աշխարհիկ կյանքի դժվարությունները: Նա վանք մտավ, վորպեսզի մեղքերը քավի և աստծուց խնդրի յեղբոր վերադարձը:

Բայց Անդրեան գերադասեց ուրիշ բան: Նա մնաց հասարակության մեջ և մոր հետ միասին արիաբար պայքարում ու աշխատում էր, վորպեսզի Միգելի փրկանքի համար փող հավաքի:

Նրանք հարուստ տերերի համար վերնազգեստ էին կարում և հետ դցում խղճուկ մարավեդիներ*): Յերբ աշխատանք չէր լինում, պառավ Դոնյա Լեոնորան փողոց էր դուրս գալիս և ձեռք էր մեկնում վողորմություն խնդրելու:

Փողը դեռ շատ քիչ էր և փրկանքի լրիվ գումարից շատ հեռու:

Դոն Ռոդրիգոյի խնդրագրի թագավորական պատասխանը յեկավ այն ժամանակ, յերբ նրան արդեն վաղուց դադարել էին սպասել:

Թագավորը Սերվանտեսի ընտանիքին վողորմածաբար իրավունք էր շնորհում իրենց վորդուն գերությունից փրկելու համար ոգտվել ալժիրյան նավահանգիստ մեկնող վալենսիական մի նավի վաճառած ապրանքների շահի ամբողջ գումարից:

*) Մարավեդի — մանր դրամ:

Թե վորքան իսկապես այդ ապրանքներից շահ ստացան վաճառականները՝ այդպես էլ անհայտ մնաց, բայց Դոնյա Լեոնորային այդ շահից նրանք հանձնեցին ընդամենը վաթսուն դուկատ:

Նա մինչ այդ հավաքել էր յերեք հարյուր: Նա վորոշեց այդ գումարն Ալժիր ուղարկել:

Հենց այդ ժամանակ 1580 թվականի գարնանը փոքր մի նավ մեկնում էր Աֆրիկայի ափերը: Նրանով գնում էին փրկող միաբանության մի խումբ կրոնավորներ, վորոնք զբաղվում էին ուրիշ յերկրներից գերիներ հետ գնելով:

Այդ նավով գնում էր նաև մի կաղ անհանգիստ կրոնավոր, Հուան Գիլը: Հուանը կռվել էր յերկու վանահայրերի հետ և յերրորդ վանքից փախչելով՝ այժմ գնում էր Ալժիր, վորպեսզի ոգնի իսպանացիներին գերությունից փրկելու գործին:

«Այնտեղ հնարավոր կլինի,— մտածում էր Հուանը,— մարդկանց ոգնելու իսկական գործ կատարել»:

Հենց նրան էլ հանձնեց Անդրեան աղքատության և թագավորական ժլատության արդյունք այդպիսի դժվարությամբ ձեռք բերած յերեք հարյուր վաթսուն դուկատը:

Հուանը խոստացավ աղջկան, վոր նա ամեն ինչ կանի, վորպեսզի գերությունից ազատի նրա յեղբորը:

Ալժիրի նավահանգստում տեսածներն արդեն սաստիկ ցնցեցին Հուանին:

Փրկող յեղբայրները հազիվ էին ափ իջել, յերբ նավահանգստում աշխատող հարյուրավոր գերիներ մոտ վազեցին և շրջապատեցին նրանց: Նրանք աղաչում էին, կպչում նրանց փեշերին, ձեռքերը համբուրում, ծունկ չոքում և չէին թողնում նրանց առաջ շարժվել: Ամենքն էլ խնդրում էին գերությունից ազատել իրենց:

Դրանք այն գերիներն եյին, վորոնք իրենց հարազատներից փող ստանալու վոչ մի հույս չունեյին:

Բայց միաբանության գլխավորը, հայր Օլիվարը ձեռքը բարձրացրեց և ասաց.

—Յեղբայրնե՛ր, ամենից առաջ մենք կհոգանք նրանց փրկելու մասին, ովքեր տարբերվում են մյուս գերիներից իրենց անվանի ծագումով և զտարյուն լինելով: Իսկ դուք, յեղբայրնե՛ր, վերադարձեք ձեր գործին և հույս դրեք աստծու վրա:

«Վո՛չ, այդ չեղավ»,— մտածեց Հուան Գիլը:

Նա վորոշեց ինքն զբաղվել իր գերիով:

Սկզբում նա հարց ու փորձ արեց շուկայում, տեղեկություններ հավաքեց, հարցրեց փաշայի և գերի Սերվանտեսի մասին: Հուանը շատ բան չիմացավ:

Փաշայի մասին վախենում եյին խոսել, իսկ Միգել Սերվանտեսին արդեն շատերը չեյին հիշում:

Միայն մի ծեր արար շուկայում պատմեց Հուանին, վոր միձեռնանի գերի Սերվանտեսն արդեն կես տարուց ավելի յե, ինչ նստած է Ոձախոսում, վոր փաշան դաժան է և նրա կառավարման ժամկետը, փառք ալլահին, շուտով վերջանում է:

Հուան Գիլը գնաց ուղիղ փաշայի մոտ և Միգելի համար առաջարկեց յերեք հարյուր վաթսուն վոսկի:

— Հազա՛ր,—ասաց փաշան,—հազար վոսկուց վոչ մի ասպր պակաս:

— Ինչի՞դ է նա պետք, Հասան աղա,— ասաց Հուանը,— նա հիվանդ է ու՞ անզոր: Քո ժամանակը լրանում է, դու շուտով կմեկնես, հո՛ նրան էլ քեզ հետ չե՞ս տանելու:

—Դու իմ մեջ բախտավոր միտք հղացրիր,—ասաց փաշան— յես միձեռնանուն Ստամբուլ կտանեմ:

Հուանը չփոթվեց: Յեթե փաշան Սերվանտեսին Կոնստանդնուպոլիս տանի, նրան համարյա անհնարին կլինի փրկել:

«Նա հազար է պահանջում,— ատամները կրճտացրեց Հուանը,— լավ, յես կճարեմ նրա համար հազար»:

Յեվ նա գնաց Ալժիրի բոլոր վաճառականների ու հարուստ մարդկանց մոտ ու հենց շուկաներում սկսեց Սերվանտեսի փրկանքի համար փող հավաքել:

Սերվանտեսը նստած եր իր զնդանում և վոչինչի մասին տեղեկություն չուներ:

Նրա բանտարկության տասներորդ, գուցե և տասներկուերորդ ամսին՝ մազմորայի դուռը սովորականից ավելի լայն բացվեց և Յուսուֆի ռնգային ձայնն ասաց.

— Դո՛ւրս արի:

Սերվանտեսը չկարողացավ բարձրանալ: Նրան դուրս բերին: Նա նայում եր ու չեր հասկանում: Նրան կուրացրեց ցերեկվա լույսը, ազատ օդից պտտվեց գլուխը և վոտքերը ծալվեցին:

— Գնա՛ — և հրելով տարան նրան:

Նա շուրջն եր նայում առանց հասկանալու: Նրան տանում եյին Բեսեկլի ծածկված նրբանցքով, ապա մզկիթի մոտով դեպի ձա՛խ, քարե աստիճաններով, լեռնային ծուռ ու մութ նրբանցքով դեպի ցած...

«Սա հո նավահանգիստ տանող ճանապարհն է»,— աղոտ կերպով գիտակցեց Սերվանտեսը:

Բայց չգիտեր, թե ո՛ւր և ինչո՛ւ յեն տանում:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Նավահանգիստը լիքն եր մարդկանցով: Ամբոխը պատրաստվում եր ճանապարհ դնելու փաշային: Քաղաքի կեսը մուրացկան դարձնելուց, յերկիրն ավերելուց և շրջակա գյուղերն ամայացնելուց հետո՝ փաշան վերջապես մեկնում եր: Նրա կառավարության ժամկետը լրացել եր:

Նավահանգստի նրբանցքներից մեկում՝ յերկու կրոնավոր մեջքով հենված ինչ-որ կրպակի ամուր փակված դռներին, մռայլ խոսում եյին:

— Ո՞վ կհավատա, հայր Բլանկո, վոր հենց այդ փաշան վենետիկյան ձկնեղենի շուկայի մի տղա յեր,— հառաչում եր կարմրադեմ կրոնավորը:

Յերկրորդը՝ գունատ կրոնավորը լուռ կրծոտում եր չրթունքները:

— Ի՜նչ պատիվ ե ձեռք բերել, ի՜նչ հարստություն,— շարունակեց առաջինը:— Ապրանքներով լիք նավեր, վոսկի, պալատներ, ստրուկներ:

Յերկրորդը լուռ եր, կարծես քնած լիներ:

— Սխալվեցինք մենք, Բլանկո, հասարակ կրոնավոր մնացինք:

Բլանկոն ինչ-որ անհասկանալի բան մրթմրթաց:

— Հենց դու ինքդ, հայր Բլանկո, շա՞տ բան շահեցիր այստեղ, Ալժիրում: Ի՞նչ ստացար, վոր մատնեցիր մի ձեռնանի գերի Սերվանտեսին: Մի կուժ ձիթապտղի յուղ ու մեկ վոսկի:

Բլանկոն ավելի բարձր մրթմրթաց:

— Մենք գլխի չընկանք Բլանկո, հենց վոր մեզ այստեղ բերին, մենք պետք ե մահմեդական հավատն ընդունեյինք: Մենք այժմ խորամանկ վենետիկցու պես սպիտակ ծածկոցավոր ձիերով ման կգայինք:

Բլանկոն դառնորեն հառաչեց:

— Տե՛ս, տե՛ս — հանկարծ ինքն իրեն ընդհատեց կարմրադեմ կրոնավորը,— ահա նա գալիս ե, հենց այն Սերվանտեսը: Տե՛ս, նրան տանում են ուղիղ դեպի Հասանի նավը: Փաշան իր հետ ե վերցնում նրան: Այլևս նա հայրենիք չի կարող վերադառնալ: Ահա և ինքը՝ փաշան, նայի՛ր...

Ոդին սովոր չլինելուց Սերվանտեսի գլուխը դեռ շարունակ պտույտ եր գալիս: Նա բթորեն թույլ տվեց, վոր հանեն իր վրայից մի շղթան և հագցնեն ուրիշը, վորի ծայրը պինդ ամրացրած եր նստարանին:



«Սա փաշայի նավն է»— հասկացավ Սերվանտեսը, նայելով զարդարված նավի դրոշակներին: «Նշանակում է իրեն Ստամբուլ են տանում... Իսպանական նավերը Ստամբուլ չեն մտնում: Ստամբուլից գերիները յերբեք չեն վերադառնում: Ստամբուլը — դա մինչև մահ գերություն է»: Նա նույնպիսի բթությամբ նայում էր դեպի ափը և տեսնում, թե ինչպես փաշայի թիկնապահ սիլիհտարներն ամբոխին հետ էին մղում: Ցենիչերիները մերկացնելով նիզակները՝ ծնկի էին գալիս... Արաբական սպիտակ ձիու վրա, վոսկեկար բարձին նստած փաշան դանդաղ ընթանում է ամբոխի միջով և վողորմածաբար պատասխանում վողջույններին:

Ապա Սերվանտեսը տեսավ, թե ինչպես մի կաղ կրոնավոր, ուրիշներին հրելով հասավ հենց փաշային և սկսեց քայլել նրա ձիու կողքով: Փաշան շարունակելով ճանապարհը՝ դանդաղեցրեց ընթացքը և մի քիչ գլուխը դարձրեց դեպի կրոնավորը: Կրոնավորն ինչ-վոր բան էր համոզում փաշային և մեկնում էր մի լիքը քսակ: Փաշան բացասաբար շարժեց գլուխը և նորից արագացրեց ձիու ընթացքը: Բայց կրոնավորը չէր հեռանում նրանից: Նա կաղալով քայլում էր հենց ձիու կողքից և ելի բարձր ինչ-վոր բան էր ասում փաշային ու մեկնում նրան ստվար չորս տակ ծալված մի թուղթ:

— Պարտավորագի՛ր,—լսեցին մոտ կանգնած մի քանի մարդիկ:— Պարտավորագի՛ր, պակասորդ գումարը մեկ տարվա ընթացքում վճարելու իսպանական լիարժեք վոսկով:

Փաշան բաց արեց թուղթը, ժպտաց և գլխով արեց: Նա կրոնավորի ձեռքից վերցրեց գումարը և նշան արեց սիլիհտարին: Սիլիհտարը ձին մոտ քշեց ծովի ափը և ինչ-վոր բան բղավեց վերակացուին: Վերակացուն վերցրեց բանալին, բաց արեց Սերվանտեսի վոտքի ողակը, և շղթան ընկավ: Սերվանտեսն ազատ էր:

ՀԱՅՐԵՆԻՔ

Արքունիքը ժամանակավորապես տեղափոխվեց Բադահոս և Մադրիդում հանգստություն տիրեց:

Քաղաքի ծայրամասի փողոցում, կեղտոտ Մանսանարեսի ափին գտնվող մի աղքատ տան մեջ Միգել Սերվանտեսը գտավ իր ընտանիքը: Վաղաժամ ծերացած, դողդողացող մայրը դուրս յեկավ նրան դիմավորելու: Անդրեան Միգելին ցույց տվեց վերքերով ծածկված իր ձեռքերը—նա սենյոր Ալվարեսի տանը լվացք էր անում, վորպեսզի քաղցից չմեռնեն:

Հայրը վաղուց մեռել էր: Լուիսան վանք էր մտել:

— Ու՞ր է Ռոդրիգոն,—հարցրեց Միգելը:

— Ռոդրիգոն Ֆիգերոյի զորքերի հետ Պորտուգալիա յե գնացել:

Միգելը շրջում էր քաղաքում: Մադրիդը հանդարտ էր: Արքունիքի հետ չմեկնած իդալգոները թափառում էին փողոցներում: Իդալգոներն առաջվա պես հեշտությամբ մերկացնում էին թրերը, նույնպես հաճույքով յերդվում էին անարատ կույսի անունով և Հիսուսի սրտով, ինչպես Միգելի մանկության տարիներին:

Բայց հին Իսպանիայի կենսուրախ հոգին վաղուց անհետացել էր:

Մարդիկ ցրված տեսք ունեյին—Իդալգոն իր սեփական յերկրում տեղ չուներ:

— Ի՞նչ է անում մեր բարի թագավոր Ֆիլիպը,— հարցրեց Սերվանտեսը:

— Մեր բարի թագավոր Ֆիլիպը Եսկորիալն է կառուցում,— պատասխանեցին նրան:

Տասնիններորդ տարին էր, ինչ Ֆիլիպն Եսկորիալն էր կառուցում:

Գվադարրամայի սև լեռների մեջ, մերկ, քամիների առաջ բաց, քարե հարթության վրա, մուգ գոր-

չագույն գրանիտի միանման քարերից շարվում էր հսկայական մի ուղղանկյուն և մեջը մի շրջան—դա Ֆիլիպի պալատն էր և պալատական յեկեղեցին: Ֆիլիպը կառուցում էր իր համար աթոռանիստ պալատ և Հաբսբուրգների դինաստիայի թագավորների համար մի հսկայական դամբարան:

Նախագծերը գծագրում էյին Իսպանիայի յերկու լավագույն ճարտարապետներ: Պատերը նկարում էյին իտալական նկարիչները: Ֆիլիպի քսան յերկրներից այստեղ էյին հասում վոսկին, մարմարը, բրոնզն ու պորֆիրը, դեպի միապետի աթոռանիստը:

Ֆիլիպը մերժում էր ճարտարապետների նախագծերը և ինքն էր գծագրում: Իր աթոռանիստը կառուցում էր դամբարանի ձևով—սուրբ Լորենցոյի շերիմնաքարի նման—դամբարան, վոր ուներ հարյուր մետրից ավելի բարձրություն և ճակատի վրա հազար հարյուր մեկ լուսամուտ:

Դրամ ձեռք բերելու համար ամեն միջոց գործադրելով՝ Ֆիլիպը սորկացրեց ամբողջ յերկիրը: Տուրքերից ճնշված գյուղացիները քաղաք էյին փախչում: Բերքատու դաշտերը չէյին մշակվում և ամայանում էյին: Հավատաքննության խարույկների վրա ճարճատում էյին խռովարար քաղաքացիների վոսկորները: Քաղցած մարդկանց խմբերը թափառում էյին մեծ ճանապարհների վրա:

Այս դրության մեջ գտավ Իսպանիան Միգել Սերվանտեսը, յերբ Ալժիրի գերությունից տուն վերադարձավ:

Հարկավոր էր աշխատանք վորոնել: Սերվանտեսն ապրելու միջոց չուներ: Նրա ձախ ձեռքը վաղուց չէր աշխատում, բայց աջը դեռ կարող էր պահել և՛ սուսեր, և՛ թուր: Հայրենիքը Սերվանտեսի համար չէր պատրաստել վոչ պաշտոն և վոչ էլ հաց: Մնում էր մի բան— զինվորական ծառայություն: Միգելը նորից հագավ զինվորի կաշվե անթև բաճկոնը և Ռոդրիգո

յեղբոր հետ ուս ուսի անցկացրեց պորտուգալական ամբողջ արշավանքը:

Նա յեղավ Լիսաբոնում, մասնակցեց դեպի Ազորյան կղզիները կատարված արշավանքին: Ռոդրիգոյի հետ մեկտեղ մինչև գոտին ջրի մեջ գնաց հարձակման Ազորյան ամրոցների վրա:

Ռոդրիգո Սերվանտեսի աստիճանն այս անգամ բարձրացավ: Նա արշավանքից վերադարձավ ալֆերեսի աստիճանով:

Միգելը տուն վերադարձավ թրի հարվածի յերկու ու գնդակի մեկ նոր վերքերով և զինվորական ռոճիկից խնայած յերկու հարյուր ռեալով:

Մադրիդից յերեսուն կիլոմետրի վրա, մեկ որվա ճանապարհ հեռու, կա մի փոքրիկ ու հանդիստ քաղաք՝ Եսկիվիաս անունով—ձիթապտուղների և գինու ժառանների քաղաք: Այստեղ բնակվեց Ֆիլիպ թագավորի հաշմանդամ զինվոր Միգել Սերվանտեսը: Նա իրար կողքի պատից կախեց իր զինվորական սուրն ու թուրը: Նա բաց արեց իր «Ֆիլենայի» թերթերը: Հասել էր ժամանակը թուրը փոխարինելու գրչով:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

«ԱՆՎԱՆԻ ԹՐՔՈՒՀԻՆ»

Մադրիդի թատրոնում բեմադրվում էր «Անվանի թրքուհին» նոր կոմեդիան: Դա թուրքերի ձեռքը գերի ընկած իսպանացի աղջիկ Կատալինա Ովիեդոյի պատմությունն էր: Հանդիսականները հուզմունքով հետևում էյին գործողության ընթացքին: Պատմությունն իրական էր: Դահլիճում, հանդիսականների մեջ, կային աղջկա ծնողներին անձամբ ճանաչող մարդիկ: Նավով Մալագայից Որան փոխադրվելիս փոքրիկ աղջիկ Կատալինային գերի վերցրին: Ծովահեն Մորատոն Տետուանում նրան վաճառեց մի հարուստ մավրի: Տաս տարեկան հասակում Կատալինան արդեն հրաշալի գեղեցկության տեր էր: Նրան տարան Կոնստանդ-

նուպոլիս և փակեցին սուլթանի հարեմում: Քրիստոնյա պահապան Ռուստանը Կատալինային յերկար ժամանակ սուլթանի աչքից հեռու յեր պահում: Ռուստանին մատնեցին: Կատալինան դարձավ սուլթանի կինը և անվանի թրքուհի: Բայց գաղտնի նա հավատարիմ մնաց իր հայրենիքին և սուլթանի գերությունից փրկեց դժբախտ իսպանացիներից շատերին:

Բեմի վրա կային պալատականներ, ներքինիներ, իսպանացի գերիներ: Ահա դուրս է գալիս ծաղրածու Մադրիգալը: Փոթորկալից ծափահարությունը դիմավորում է նրան: Նա հագած է խղա՛գույն վերնազգեստ և յենիչերու շալվար, գլխին սպիտակ չալմա և գոտուց թուր—իսպանականի և թուրքականի խառնուրդ, քրիստոնյա գերի և հանդուգն ծաղրածու: Մադրիգալը խոսում է թուրքական դատավորի՝ ղադիի հետ:

Ղադին պահանջում է, վոր Մադրիգալը մավր դառնա և ամուսնանա մավրուհու հետ: Նա ծաղրածուին սպառնում է մահով:

— Ասա, շուն, ի՞նչ վորոշեցիր,— հարցնում է ղադին,— ամուսնությո՞ւնը, թե՞ մահ...

— Չգիտեմ թե վոր մահն է ավելի լավ,—պատասխանում է ծաղրածուն:— Ամուսնանալ և դառնալ մավր, դա միանգամից յերկու մահ է: Բայց յես չեմ վախենում, բարի տե՛ր: Այս անգամ յես չեմ մեռնի:

— Քեզ ո՞վ ասաց:

— Յես լսեցի, թե ի՞նչպես թռչուններն իրա՛ր հետ խոսում էյին այդ մասին:

— Թռչունե՞րը: Մի՞թե դու թռչունների խոսակցությունը հասկանում ես:

— Իհարկե, տե՛ր իմ: Յեթե կամենաք, յես կարող եմ ձեզ պատմել, թե ի՞նչ են խոսում նրանք ձեր արդարադատության մասին:

Ղադին շփոթված է: Մադրիգալն ուզում է ժամանակ շահել: Նա հանձն է առնում մի քանի տարում փղին սովորեցնել թուրքերեն:

Նոր տեսարան: Ղադին հարցնում է, թե ինչպես են ընթանում պարապմունքները:

— Հիանալի յե,— պատասխանում է Մադրիգալը,— յես արդեն իմ փղին չորս դաս եմ տվել:

— Վո՞ր լեզվով:

— Բիսկայերեն:

— Բիսկայերե՞ն: Այդ լեզուն ինձ տարօրինակ է թվում:

— Յեթե այդպես է, տեր իմ, թող իմ փիղը ինքն ընտրի իմ գիտեցած լեզուներից վորևէ մեկը:

— Իսկ ի՞նչ լեզուներ գիտես դու:

— Իտալիայի բերգամոսերենը, Գալլիայի գասկոներենը, կույր հաշմանդամների բարբառը և հին հույների լեզուն,— աշխույժ պատասխանում է Մադրիգալը:

Ծափերի վորոտ:

Ծաղրածուն խոնարհ գլուխ է տալիս:

Փայտաշեն թատրոնը լիքը լցված եր խայտաբղետ ամբոխով: Մադրիգալը լավ է... Ծաղիկներ, կաղիններ ու նարինջներ են թռչում դեպի բեմը:

— Կեցցե՛ս, Սերվանտես, կեցցե՛ս:

Դա հեղինակին են բեմ կանչում: Հեղինակը կանգնել է առաջին շարքի ծայրին:

— Կեցցե՛ս, Սերվանտես: Կոմեդիան լավն է...

Հեղինակը գլուխ է տալիս: Բոլորը նրան են նայում: Դա Սերվանտեսն է, գրող-ռազմիկ, պաշտոնաթող զինվոր: Նրա աջ ձեռքում ձեռագրի թերթիկներն են, իսկ ձախը կապված է սև փաթաթանով:

Ասում են, վոր նա ինքն անիծած թուրքերի մոտ գերի յե յեղել... Ասում են, վոր նա փաշայի զնդանում նստած ժամանակն է գրել իր կոմեդիան...

Աղմկող ամբոխը խռնվում եր թատրոնում: Հետևի նստարաններից բարձր ծափահարում են: Այնտեղ նստած են մարտիկներ, հրացանակիրներ և արշավանքներում նրա հետ յեղած հին ընկերները:

— Կեցցե՛ս, դոն Միգել, կեցցե՛ս։ Ապրես, Սերվանտես...

Սերվանտեսը խոնարհ գլուխ է տալիս և ձեռքը թափ տալիս։ Զինվորների կոպիտ գովասանքը նրա համար ամեն ինչից թանկ է։

Նրա կողքին է կինը, յերիտասարդ ու ամաչկոտ դոնյա Կատալինան։ Սերվանտեսը նրան բերել է Եսկիվիասից։ Առաջինը Կատալինան է լսել նրա վոտանավորները։ Սերվանտեսը նրա համար կարդացել է իր «Գալատեան»։

Այո՛, Սերվանտեսն սկսեց վոտանավորներից։ Նա հավաքել էր իր «Ֆիլենայից» մնացած բոլոր թերթիկները, վորի յերեք քառորդը կորել է արշավանքների ժամանակ։ Նա անունը փոխեց։ Տահո գետի կանաչ ափերի հովիվ Ելիսիոն սիրեց նույն ափերին ծնված գեղեցկուհի Գալատեային... Լեպանտոյի կովին մասնակիցը, Հասան աղայի գերին, պորտուգալական արշավանքի արյունալի սպանդով անցած զինվոր Սերվանտեսն սկսել էր հովվերգությունից։ Բոլորն էլ այդպես եյին սկսում։ Բանաստեղծից հովվական պոեմա եյին սպասում։

«Գալատեան» չհաջողվեց։ «Վոտանավորները միջակ են»— հայտարարեցին քննադատները։ «Հեղինակն ավելի փորձված է դժբախտությունների մեջ, քան վոտանավորների... Հներից վերցրած նրա քաղվածքները կասկածելի յեն»։

Առաջին վոտանավորները Սերվանտեսի համար վոչ փող բերին և վոչ էլ փառք։ Յեվ այդպես էլ նա չգրեց «Գալատեայի» յերկրորդ մասը։

Սերվանտեսն ուզում էր գրել իր բոլոր տեսածների մասին— ծովային ճակատամարտերի, արշավանքների, գրկանքների, հերոսության մասին, կեղտի ու հեղձուցիչ բանտերի, գերիների ու մավրերի մասին։ Նա սուլթանական գերիների մասին գրեց մի կոմեդիա՝ «Անվանի Թրքուհին», վորն և բեմադրվեց թատրոնում։

Կոմեդիան ընթանում էր հանդիսականների աղմկալից հավանության տակ։ «Թրքուհուց» հետո բեմադրվեց «Նումանցիան», ապա «Ալժիրի բարքերը»։ Սերվանտեսը դարձավ կատակերգությունների ճանաչված հեղինակ։

Մոտ մի տարվա ընթացքում նա ութ պիես գրեց։

Այս տևեց կարճ ժամանակ։ «Բնության հրաշալիք» մեծն Լոպե դե-Վեգան շուտով տիրապետեց կատակերգության թագավորությունը։ Վոչ վոք չէր կարողանում մրցել Լոպե դե-Վեգայի հետ, յուրաքանչյուր յերեք որում նա մեկ նոր պիես էր պատրաստում։

Դե-Վեգայի կատակերգությունների մեջ յերիտասարդ կաբալյերոները գեղեցկուհիների լուսամուտների տակ սերենադներ եյին յերգում, մթի մեջ իրար թրեր եյին վայր գցում և արտասանվում եյին հնչեղ վոտանավորներ։ Հանդիսատեսները ցանկանում եյին նայել Լոպե դե-Վեգային, միայն Լոպե դե-Վեգային։ Ուրիշ վոչ մեկի համար տեղ չէր մնում։ Սերվանտեսը նոր կատակերգություն բերեց—չընդունեցին։ Թատրոնի տերն այլևս նրան էլ մոտ չէր կանչում։

Այսպես վերջացավ նրա վաստակը գրականությունից։ Սերվանտեսը հանձն առավ պետական հենց առաջին առաջարկված պաշտոնը, վորը համաձայնեցին իրեն տալ և մեկնեց Իսպանիայի հարավային մասը, վորպես թագավորական նավատորմի պարենային մատակարար։

Սերվանտեսի ընտանիքը տեղափոխվեց Սևիլիա, իսկ ինքը շրջում էր մոտակա քաղաքներն ու գյուղերը, հացահատիկ ու ձիթապտղի յուղ գնելու համար։

Սերվանտեսը հաշիվները վատ էր պահում։ Նա հաճախ կորցնում էր իր հաշվային գրքույկները կամ թվերի փոխարեն վոտանավորներ էր գրում նրանց մեջ։ Մի քանի անգամ հաշիվները հանձնելիս նա ստիպված յեղավ պակասորդ գումարը ծածկել իր սեփական միջոցներից։ Իսկ նրան աշխատավարձ քիչ եյին վճարում—որական տասներկու ռեալ։

Կատալինան ամուսնուն ոգնության յեկավ: Նա սկսեց հարուստ սենյորներից աշխատանք վերցնել: Կատալինան գիտեր պճնազեղ ռոպիլյաներ ձևել — հետ գցած թևերով բաճկոն, կարմիր ատլասի վրա բացվածքներով յափունջի, վոսկե թելերով ասեղնագործել չքեղ համազգեստներ: Բայց Կատալինային ել եյին գրոշներ վճարում:

Ութսուն ութ թվին Ֆիլիպ Թագավորի նավատորմը—Անհաղթահելի Արմադան— անգլիական Յելիզաբեթի ծովապետները խորտակեցին և Սերվանտեսը մնաց առանց պաշտոնի և առանց փող վաստակելու հույսի:

Սան-Լուկարայից, Պալոսից, Իսպանիայի բոլոր նավահանգիստներից ամեն որ գաղթականներով լցված նավեր եյին հեռանում: Աղքատությունից հուսահատության հասած իսպանացիները հեռանում եյին դեպի Նոր աշխարհ: Ամերիկան բախտախնդիրների դրախտն եր, խեղճերի փրկությունը, հույսերը կորցրածների ապաստանը: Հարավային Ամերիկան հրապուրում եր մարդկանց: Դեպի Նոր աշխարհ ձգտում եյին բոլորը, ովքեր դեռ ուժ ունեյին վորևե բանի ձգտելու:

Սերվանտեսը վորոշեց մեկնել Ամերիկա: Նա դիմում գրեց նորին մեծության Ֆիլիպ Թագավորին:

Թագավորական առանձնասենյակի պատուհանները նայում եյին դեպի Գվադարրամայի մերկ լեռները, բայց Ֆիլիպը սակավ եր մոտենում այդ պատուհաններին: Նա ավելի շատ սիրում եր նայել իր ննջարանի պատուհանից, վորը բացվում եր դեպի իր պալատի յեկեղեցու սեղանը:

Վերջին տարիները Թագավորն ավելի շատ պառկած եր լինում, քան նստած: Նրա ծնկից շարունակ թարախ եր հոսում: Ամբողջ ծունկը ծածկված եր անբուժելի վերքերով: Թագավորի սավանների վրա վորդեր եյին վխտում, անկողնուց անտանելի գարշահոտություն եր փչում: Թագավորը պառկած համբրիչն եր

դցում և նայում լուսամուտից դեպի իր եսկորիալական յեկեղեցու վոսկե սեղանը:

Այժմ նա վեր եր կենում միայն իր քարտուղարի հետ զբաղվելու համար: Գրասենյակային թագավորն ամեն որ վեց ժամ մանրամասն զբաղվում եր նամակներով և դիմումներով: Նա ուշ սկսեց այրել իր թղթերը, հենց մահից առաջ:

Այսոր քարտուղար դե-Սայասը յերկար նստած եր գրասենյակում: Քարտուղարն ընտրեց մի քանի պակաս կարևոր թղթեր, վոր հետաձգե վաղվան:

— Կարդացեք բոլորը,— ասաց Ֆիլիպը:

— Այստեղ պաշտոնաթող զինվոր Սերվանտեսի դիմումն է ուղղված ձերդ մեծության,— ասաց դե-Սայասը նայելով առաջին խնդրագրին:

— Սերվանտե՞ս,— շրթունքները շարժեց Ֆիլիպը,— չեմ հիշում նրան:

— Իր ծառայություններն է թվարկում,— նայեց խնդրագրին քարտուղարը.— ծառայել է դոն Հուանի մոտ, մարկիզ դե լա-Կրուսի մոտ, Ֆիգերոյի մոտ... հինգ տարի անց է կացրել Ալժիրում գերության մեջ...

— Ի՞նչ է խնդրում նա,— թույլ հարցրեց Ֆիլիպը:

— Թույլտվություն՝ Նոր աշխարհ մեկնելու և Գվատեմալայում կամ Պերրուում վորևե պաշտոն:

— Այդ անհայտ զինվորն արդյոք չի ուզո՞ւմ, վոր ձերդ մեծությունը նրան նշանակե վորևե նոր գտնված կղզու նահանգապետ— կծու հեգնանքով հարցրեց թագավորի մերձավոր դուքս դե-Լերման:

Թույլ ժպիտը շարժեց Ֆիլիպի գունատ շրթունքները:

— Մերժե՛լ,— ասաց Ֆիլիպը:

Թագավորը չգիտեր, վոր այդ րոպեյին նա իր յերկրին հսկայական ծառայություն մատուցեց: Սերվանտեսին Ամերիկա մեկնելու թույլտվություն չըտալով՝ Ֆիլիպն Իսպանիայի համար եր պահում «Դոն-Կիխոտը»:

— Մերժել,— ասաց Ֆիլիպը,— բայց վոչ, տվեք ինձ թուղթը: Ցեվ նա սեփական ձեռքով գրեց խնդրագրի վրա: «Վորոշել, թե ինչ վողորմածություն կարելի յե ցուցաբերել խնդրատվին՝ հենց այստեղ, Հայրենիքում»:

Ցեվ Սերվանտեսին վողորմածություն ցուցաբերեցին—նրան նշանակեցին հարավային նահանգներում վորպես հարկահավաք:

ԳԼՈՒԽ ՅԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

ԼԵՊԱՆՏՈՅԻ ՀԵՐՈՍԸ

Ռոխաս գյուղը յեկավ տարեքավոր ու նիհար, ձախ ձեռքը կապված մի նոր հարկահավաք, նստած իրեն նման նիհար մի պառավ ջորու վրա: Հարկահավաքն իջավ Պեդրո Գուտյերրեսի իջևանը: Հարկահավաքն իրեն անվանեց պաշտոնաթող զինվոր Միգել Սերվանտես:

Ծերունի Պեդրոյին հյուրը դուր չեկավ: Այդ Սերվանտեսն զբաղվում եր այնպիսի բանով, վորով աշխարհում վոչ մի հարկահավաք չի զբաղվում: Նա իր հետ ման եր ածում մի գրքույկ, բայց վոչ թե մուտքերի գրանցումներով, այլ վոտանավորներով: Նա չխնդրեց իջևանատիրոջը, վոր իր նիհար ջորուն ավելի լավ կերակրի, այլ դրա փոխարեն հոժարությամբ լսեց յերկու դատարկապորտների, վորոնք յեկան նրա մոտ գանգատվելու չքավորության մասին, և անմիջապես համաձայնեց պակասեցնել նրանց հարկը: Իսկ իրեն Գուտյերրեսից պահանջեց ամբողջ հարկը և այն ել անմիջապես:

Գուտյերրեսը սրտնեղությունից ամբողջ գիշերը չքնեց: Իսկ հարկահավաքն առանց անկողին խնդրելու՝ պառկեց կոշտ մահճակալի վրա և այդպես քնեց ամբողջ գիշերը, ինչպես զինվորն արշավանքի ժամանակ:

Իսկ առավոտյան նստեց ներքին սրահում և աֆրիկյան արշավանքների ժամանակ իր կատարած քաջագործությունների մասին հրաշքներ պատմեց: Բոլոր

տանեցիները թողին իրենց աշխատանքները: Խոհարարուհու տապակվող միսն այրվեց: Ինքը պառավ Կոստանսա Գուտյերրեսը լսում է և գոգնոցով դեմքը ծածկելով արտասվում:

Դժգոհ Պեդրոն գնաց անասունների բակը: Խոզուկները շուռ եյին տվել կերամանը և մտել եյին բանջարանոցի սոխի մարգերը: Ո՞ւր է կորել այդ սատանի ճուտ Հուանիտոն: Ահա նա նստած է ծառի տակ: Ինչպես յերևում է՝ քնել է դատարկապորտը:

Պեդրո Գուտյերրեսը վերցրեց ճիպոտը և ծածուկ մոտեցավ ծառին: Վո՛չ, Հուանը քնած չեր: Բարձրացած ճիպոտը մնաց տիրոջ ձեռքին—տղան կարդում եր:

— Ծո՛ւյլ, դու խոզերին նայելու փոխարեն գի՞րք ես կարդում:

Հին, քրքրված գիրքը ձեռքից թռավ հեռու, ծառի հետևը: Տերը ճիպոտն իջեցրեց տղայի ուսերին:

— Ներեցեք, սենյոր... վա՛յ, վա՛յ, ներեցեք... ել չեմ անի, սենյոր...

— Ա՛ռ, ստացի՛ր, գրքամոլ... ա՛յ քեզ...

— Ի՞նչ է պատահել, դոն Պեդրո: Ինչո՞ւ համար եք ծեծում տղային:

Դարձյալ այդ անիծած հարկահավաքը: Ավելի լավ եր՝ նստեր պառավների հետ, քան թե խառնվեր ուրիշի գործերին:

— Նա գրքեր է կարդում,— մռայլ ասաց դոն Պեդրոն:

— Գրքե՞ր:— Սերվանտեսը գիրքը բարձրացրեց գետնից:— Այս ի՞նչ գիրք է Հուանիտո:

Հուանն արդեն սրբել եր արցունքները:

— Հետաքրքիր գիրք է,—ասաց տղան—ասպետների մասին... Հուանի աչքերը փայլեցին:

Միգելը տնտղում եր գիրքը: Այդ գիրքը հիշեցրեց նրան ինչ-վոր անցյալ ու ծանոթ մի բան: Գիրքը կազմ չուներ, չկային նաև առաջին թերթերը... Բայց անունները... այո՛, Որիանան: Ցեվ Բել-Թեներոսը, Խավարի Գեղեցիկը... Իհարկե այդ նա յե, Առյուծի Ասպետը, հին ծանոթ Ամադիս Գալլիացին...

— Թող այսպիսի գրքեր կարդացողի հոգին դժոխքի բաժին դառնա,— ասաց դոն Պեդրոն ու թքեց:

Միգելը դեռ թերթում էր դեղնած ու ճմրթված գիրքը:

— Դուք իրավացի յեք, դոն Պեդրո,— ասաց Միգելը,— յես ինքս պատանի ժամանակ չափազանց շատ եմ կարդացել թափառաշրջիկ ասպետների մասին: Կարող է պատահել, որ հենց դրանից է, որ յես այսպես դժբախտ եմ:

Միգելն զգուշությամբ դրեց գիրքը ծառի տակ:

— Սենյո՛ր:— Միգելը հեռացավ և տղան վազեց նրա հետևից:— Սենյո՛ր, մի րոպե սպասեցեք:

— Ի՞նչ ես ուզում Հուանիտո:

— Ասացե՛ք, սենյոր,— ավելի համարձակ կանչեց տղան,— դուք հենց այն կիսացնոր հարկահավաքը չե՞ք, որ գյուղերն եք շրջում և խեղճերին պաշտպանում:

— Այո, հենց յես եմ, որ կամ:— Միգելը դառնորեն ժպտաց:

— Սենյո՛ր,— ասաց տղան,— խնդրում եմ պաշտպանեցեք ինձ: Տերս ինձ մահու չափ ծեծում է և չի վճարում աշխատանքիս համար: Ահա արդեն յերկու ամիս է, որ յես ոչ մի բլանկա չեմ ստացել:

— Ահա՞ թե ինչ: Լավ, յես կստիպեմ նրան վճարել,— ասաց Միգելը:

Նա գնաց իջևանատիրոջ մոտ:

— Դուք ձեր ծառային ծեծում եք, դոն Պեդրո,— ասաց Միգելը,— և չեք վճարում նրա ազնիվ աշխատանքի համար: Բարի տերերն այդպես չեն վարվում, դոն Պեդրո: Բարեհաճեցեք անմիջապես վճարել նրա աշխատանքի վարձը:

— Լա՛վ, կվճարեմ: Հենց այսօր և եթ կվճարեմ,— սպառնալից ասաց դոն Պեդրոն:— Գնացեք ձեր գործին, ձերդ վողորմածություն:

Մինչև կեսօր Սերվանտեսը փող հավաքելով շրջում էր բակերը: Հետո վերադարձավ իջևանը:

Դեռ դարպասի մոտ նա լսեց Հուանի տնքոցները:

Տղան ընկած էր բակի անկյունում, հարվածներից ամբողջովին կապտած, և ուռած աչքերով նայում էր Սերվանտեսին:

— Ավելի լավ կլիներ, որ ինձ չպաշտպանեյիք, սենյոր,— ասաց տղան.— Հենց որ դուք հեռացաք, տերս ինձ այնպես ծեծեց, որ յերբեք դեռ այդպես չեր ծեծել. «Ահա քեզ, ստացիր քո լրիվ վարձը» գոռաց նա: Յեվ այնքան մտրակեց ինձ, մինչև որ ինքը հոգնեց: Ա՜հ, ավելի լավ կլիներ, որ դուք չխառնվեյիք այս գործին, սենյոր:

Ցասումից գունատվելով՝ Միգելն ուղղակի մտավ իջևանատիրոջ տունը:

Պեդրո Գուտյերրեսը ամբողջ ընտանիքով ճաշի յեր նստած: Սեղանին դրված էր ոչխարի մսով պատրաստված տաք սուպ:

— Դուք ծեծե՞լ եք տղային, դոն Պեդրո,— մոտ գնաց նրան Սերվանտեսը:

Պեդրո Գուտյերրեսը գդալը ցած դրեց:

— Իմ գործերին խառնվողը թող դժոխքի բաժին դառնա,— ասաց Պեդրոն:— Այո՛, յես ծեծեցի դատարկապորտին և ելի կծեծեմ, յեթե պետք լինի:

— Յես ձեզ թույլ չեմ տա: Դուք դրա համար կը պատասխանեք,— բղավեց Սերվանտեսը:

— Թող ձերդ վողորմածությունը գրողի ծոցը գնա,— բարկացավ Պեդրոն,— մի՛ խառնվեք ուրիշի գործերին:

Նա թափ տվեց Սերվանտեսի վրա սուպի գդալը:

— Ի՞նչպես եք համարձակվում— Սերվանտեսը ձեռքը տարավ գոտու աջ կողմը... և դանդաղ ցած թողեց ձեռքը:

Նրա հետևից ծիծաղ բարձրացավ:

— Տեսեք, նա ձեռքը թրին է տանում,— գոգնոցով բերանը փակելով քրքջում էր հաստ պառավ Գուտյերրեսը:

— Նա իրեն Լեպանտոյի պատերազմումն է կարծում:

Պեդրոյի յերկու աղջիկները բարձր ծիծաղում եյին: Ի՞նչ ծիծաղելի յե այդ կիսացնոր հարկահավաքը:

— Դուք հենց այն գրքի ասպետն եք, ձերդ վողորմածություն, վորին դուք պախարակեցիք,—ասաց մեծ աղջիկը.—ինչո՞ւ դուք ուրիշի գործերի հոգսը ձեր վրա յեք վերցնում:

Սերվանտեսը գլուխը կախեց և դուրս յեկավ Պեդրոյի տնից:

Այո՛, նա մոռացավ, վոր նա վաղուց ե, ինչ զինվոր չե, վոր իր զինվորական հին թուրն արդեն չի ճոճվում իր կողքից, այլ ժանգոտ կախված ե Սեվիլյայում իր սենյակի պատից:

Որվա մնացորդը Միգելը դժկամությամբ շրջում եր բակերը, դժկամությամբ հավաքում փողերը և լսում գանգատները: Ժամը 5-ին նա գյուղից մեկնեց: Դա նրա շրջելու վերջին գյուղն եր: Նա վերադառնում եր Սեվիլիա:

Ցուրտ քամին փչում եր ուղիղ նրա դեմքին: Խստա ձմեռ եր Անդալուզիայում: Մերկ հարթավայրն անկենդան եր: Ծառերը տկլոր եյին ու տրտում:

Նրանք ծիծաղում եյին նրա վրա: Սերվանտեսն ավելի պինդ փաթաթվեց թիկնոցի մեջ: Նա, այդ Լեպանտական հին զինվորը, նրանց համար ծիծաղելի յեր: Իր պատմությունները, գերության մեջ կատարած քաջագործությունների մասին, առասպելի տեղ եյին ընդունում:

Այո՛, խստա ձմեռ սավառնում եր Անդալուզիայի վրա և գետին եր կռացնում Կաստիլի մերկ վորթերը: Ամառը նրանք կռանում եյին կանաչ-վոսկեգույն թափանցիկ վողկույզներից, իսկ հիմա մերկ են ու չոր:

Արդեն յոթերորդ տարին ե, վոր նա գյուղից գյուղ ե շրջում... վո՞րքան բան ե տեսել նա այս յոթ տարվա ընթացքում: Գյուղական խրճիթների մերկ քարեր, հարդով ծածկված բակեր, աղքատ գյուղացիներ, հովիվներ, նիհար ջորիներ, հյուրանոցներ, իջևաններ, հարուստներ, կրոնավորներ... Վո՞րքան դժվար ե գյու-



ղացիներից փող հավաքել, վիճել աստիճանավորների հետ, պաշտպանել խեղճերին: Վո՜րքան դժվար ե հաշվետվություն ներկայացնելը, թղթեր ձևակերպելը: Թագավորն այնքան ագահ ե և անհամբեր, իսկ թագավորական գանձապահները չեն սիրում սպասել:

Ջորուն նստած Սերվանտեսը ծակող քամուց ավելի կուչացավ: Համենայն դեպս այս տարին ավելի լավ եր մյուսներից: Պահանջված ամբողջ գումարը առաջին կեսին հաջողվեց ժամանակին հավաքել: Ծանոթ վաճառական Ֆերեյրա դե-Լիման հանձն առավ փողերը Մադրիդ տանել: Միայն թե Ֆերեյրան ժամանակին մուծեր գանձարան:

Արդեն հեռվում յերևում եյին Սևիլիայի յերկնագույն և սպիտակ տները: Սերվանտեսն անցավ գնչուների կեղտոտ արվարձանով՝ Թրիանով և հասավ բարձր կամուրջին: Կամուրջի վրա կանգնած եր մի գնչու աղջիկ: Միգելը ջրի մեջ տեսավ իր և ջորու արտացոլումը: Ջորու վոտքերը ջրի ալիքների մեջ այլանդակ կերպով յերկարել եյին: Նրանք անհամաչափ յերկար եյին թվում, վիզը ծուռ: Արտացոլման մեջ ջորին նմանվում եր ասպետական վեպի հեքիաթային ձիուն: Յեվ ինքը Միգելն ել զինված ասպետի պես անհամաչափ յերկար եր յերևում և հարկահավաքի պայուսակը վահանի յեր նմանվում: Տխուր պատկերի ասպետի կերպարանքը արտացոլվեց ջրի մեջ: Գնչուհին նայում եր նրան: Նա ժպտում եր: Նույնիսկ այդ աղջիկն ել ծիծաղում ե նրա վրա: Միգելը ձգեց սանձը: Ջորին անցավ կամուրջը և ցատկելով գնաց Սեվիլիայի սպիտակ փողոցով:

Արդեն համարյա մութ եր, յերբ Սերվանտեսը տուն մտավ: Դուռը փակ չեր: Աղոտ լույսի տակ Միգելը տեսավ, վոր ոջախի վրայի թարեքը, ուր Կատալինան դնում եր ջրի կուժը— դատարկ ե, իսկ կուժն ընկած ե ոջախի կողքը:

Սերվանտեսը սենյակ մտավ: Ձեռագրերը թափթըփված եյին, կահկարասին տեղից շարժված: Անիվավոր

խղճուկ մահճակալը պատից հեռու յեր քաշված: Նույնիսկ հատակի տախտակների մի քանիսը բարձրացված եյին անկարգ խուզարկության իրարանցման հետևանքով:

Ծայրի սենյակից դուրս յեկավ դունատ Կատալինան:

Կատարվեց ամենավատ բանը, վորից նա վախենում եր:

Վաճառական Ֆերեյրա դե-Լիման անսպասելի կերպով սնանկացավ, իր հետ ուղարկված փողը չմուծեց գանձարանը և այժմ ամբողջ գումարը— յոթ և կես հազար ռեալ— Սերվանտեսից եյին պահանջում: Սպասվում եր դատավարություն, հարցաքննություններ, ներկայանալ կոռեհիդորին, ունկնդրություն— թագավորական դատարանի ամբողջ անվերջ քաշքշուկը:

ԳԼՈՒԽ ՅԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

«Դ Ո Ն-Կ Ի Խ Ո Տ»

Հայրենիքը Սերվանտեսի համար դառավ նույնպիսի մի տպաստան, ինչպիսին եր Ալժիրի փաշայի զնդանը:

Արգամասիլյայի փոքրիկ Լամանչի քաղաքում, քաղաքային մի հարկանի սպիտակ բանտի ծայրամասի խցիկում, վանդակապատ լուսամուտի հետևում յերկար ժամանակով տեղավորվեց խեղճ ու անհայտ կալանավորը:

Արգամասիլյայի բնակիչները նրա մասին վոչինչ չեյին լսել: Նրանք չգիտեյին, վոր այդ կալանավորն ամբողջ աշխարհին հայտնի կդարձնի վոչնչով աչքի չընկած իրենց յերկրի՝ Լամանչի անունը:

Կալանավորը բանտապետից չեր խնդրում վոչ աղոթքի համրիչ և վոչ ել ծխախոտ: Նա խոսակցության չեր բռնվում և չեր անհանգստացնում փախուստի փորձերով:

Կալանավորը միայն թուղթ ու փետուր էր խնդրում: Առավոտից մինչև յերեկո նա նստած գրում էր:

— Բասիլիո, քեզ մոտ ո՞վ է նստած ծայրի խցում,— յերբեմն հարցնում էին բանտապետին:

— Պաշտոնաթող զինվոր Միգել Սերվանտեսը: Ասում են, յերիտասարդ ժամանակը բանաստեղծ էր: Շարունակ գրում է, պետք է վոր վոտանավորներ լինեն:

Սերվանտեսը վոտանավորներ չէր գրում: Վոտանավորների ժամանակն անցել էր: Սերվանտեսը գրում էր կիսախելագար իդալ՛գոյի մասին, վորը սխալ դարում էր ծնվել:

Խեղճ իդալ՛գոն ազդվել էր գրքերից, պատմություններից, հազվադեպ և արտասովոր բաներից, անըսպասելի և զարմանալի արկածներից: Նա հավատացել էր կախարդված ամրոցներին և հրեշներին, ասպետի ազնվությանն ու զինակրի հավատարմությանը: Նա իրեն ասպետ կոչեց և Իսպանիայում Ֆիլիպ թագավորի որով դուրս յեկավ կռվելու իրավունքի և ճշմարտության համար:

Ասպետի հետ զարմանալի դեպքեր էին տեղի ունենում:

Նա կախարդված ամրոցում թռցնում էր վհուկների գլուխները, իսկ իջևանի տերը նրանից պահանջում էր թափված գինու և տիկերի արժեքը:

Նա ազատում էր նավերի վրա աշխատելու գնացող տաժանակիրներին, իսկ տաժանակիրները քարերով ու անեծքներով էին շնորհակալություն հայտնում:

Նա Ամադիսի պես թափառում էր քարքարոտ անապատում և իր դամայի, Դուլցինեյա Տոբոսացու պատվին վոտանավորներ էր գրում, իսկ Դուլցինեյան նրա պերճախոս ու վսեմ նամակները պատառոտում էր:

Ասպետը մտնում էր կռվի ամենավտանգավոր տեղերը, անվախ ընկնում էր ամենաանհավատալի արկածների մեջ, և մարդկության կողմից փառք ու անուն

ակնկալելով՝ նա ծեծված ու քաղցած, ամբողջապես կապտած քնում էր չարդախում ձիու ծածկոցի վրա:

Նրան ծեծում էին վաճառականներն ու թափառաշրջիկ դերասանները, ջարդում էին նրա կողերն ու ատամները, բայց թափառաշրջիկ ասպետը վոչ մի դեպքում չէր ուզում հրաժարվել իր ասպետությունից և արկածների իրավունքից:

Ջարդված ու արյունաշաղախ, փոշոտ, առանց ատամների, կորցնելով իր Ռոսինանտին, նա պառկած էր գետնին և զրույց էր անում հավատարիմ զինակցի հետ:

Սերվանտեսի զնդանում հնչում էր տխուր պատկերի ասպետի ձայնը·

— Յեվ այն էլ ասեմ քեզ, Սանչո, սիրտս ցավում է այն բանից, վոր յես ընտրել եմ ինձ համար թափառաշրջիկ ասպետի զբաղմունքն այնպիսի զզվելի մի դարում, վորի մեջ մենք ենք ապրում:

— Դուք իրավացի յեք, ձերդ վողորմածություն, բայց յերդվում եմ խեղճ մարդու պատվով, վոր ինձ համար հիմա ավելի շատ վերքերիս սպեղանի յե պետք, քան թե զրույց....

Յեվ Սանչոն հառաչեց, վորովհետև թափառաշրջիկ ասպետների զինակիրները յենթակա յեն «սաստիկ քաղցի ու բազմապիսի փորձանքների և դեռ շատ ուրիշ բաների, վորոնք ավելի լավ զգացվում են, քան արտահայտվում»:

Նրանք շարունակում են ճանապարհը: Ասպետին յերդիկից սանձով կախում են, իսկ նրա զինակրին վերմակի մեջ դրած վեր-վեր են թռցնում ու բռունցքներով ջարդում և խեղճ Սանչո Պանսան վոչ մի կերպ չէր կարողանում հասնել այն կղզին, վորտեղ ասպետը նրան խոստացել էր դարձնել նահանգապետ:

— Միթե՞ դու չգիտես, բարեկամ Սանչո, վոր թափառաշրջիկ ասպետի կյանքը յենթակա յե հազար ու մի փորձանքների ու ձախորդության:

— Թող մեռածը գերեզմանում պառկի, ձերդ վողորմածություն, իսկ կենդանի մարդն ուտել է ուզում:

Սերվանտեսը վեր եր թռչում, անց ու դարձ անում, նորից նստում ու գրում, գրում:

Սերվանտեսն այլևս մենակ չեր:

Նա պատասխանում եր: Նա չեր համաձայնում:

1604 թվի աշնանը իսպանական քաղաք Վալյադոլիդ մտավ բանտից վերջերս ազատված, խեղճ հագնված մի ճամբորդ: Նա հագած եր տարբեր կոճակներ ունեցող մաշված մի վերնազգեստ, սև թելով կարկատած կանաչ գույնի ծակ գուլպաներ: Նա իր հետ քաթանի տոպրակով տանում եր ձեռագրի մի հաստ կապոց:

Ճամբորդը ծեր եր: Մազերն սպիտակել եյին: Աչքերի շուրջը խոր կնճիռներ եյին տարածված: Նա կրել ե աքսոր, գերություն, տանջալից արշավանքներ, աղքատություն: Նա հիսունյոթ տարեկան եր: Նրա կյանքի արտասովոր արկածները մոտենում եյին վախճանին, բայց նրանց փոխարինելու եյին գալիս ուրիշները:

Սերվանտեսն իր հետ տանում եր մի վեպ «նիհար, չորացած, տարորինակ ու յերբեք վոչ վոքի մտքով չանցած բազմազան մտքերով լեցուն» հերոսի մասին: Նա իր հետ տանում եր «Դոն-Կիխոտ» վեպը:

ԱՐԽԻՎ

Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տ. Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ 3784. Հրատ. № 4468
Պատվեր 109. Տիրաժ 5000
Թուղթ 62×94. Տպագր. 12¼ մամ.
Մեկ մամ. 24.480 նշան. Հեղինակ. 6,19 մամ.
Հանձնված է արտադրության 24 հունվարի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 22 հունիսի 1938 թ.

Պետհրատ I տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0386809

5164

ԳԻՆԸ 1 Ռ. 25 Կ.
ԿԱԶՄԸ 75 Կ.

Э. ВЫГОДСКАЯ
Алжирский пленник
Гиз Арм. ССР, Ереван 1938 г.